

U P S U T U Q T

ԱՐՏԱՀԵՍԵԱՆ

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ Ա Յ

ԲԱՐՔՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

ԴՐԵՑ

Հ. ՍԱՀԱԿ ԹՈՌՆԵԱՆ

Մ Խ Ի Թ . Ո Ւ Խ Տ Է Ն



Վ Ի Է Ն Ն Ա

ԳԱՀՏԳԱՆ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1852, ՌՅԱ .

133



830-2003

Ա Ր Տ Ա Շ Ե Լ Ջ Դ Ե Յ

Բ Ա Ր Բ Ն Ո Ւ Վ Ա Խ Ճ Ա Ն Ը

ԱՐՏԱՇԷՍԲ. աշխարհաշէն թագաւորին պատմութիւնն արդէն ծանօթ է: Ասոր թագաւորութեան դէպքերուն մէջ՝ Արտաւազդին դործքերն ալ նշանաւոր են եւ մարդուս վրայ մեծ ազդեցութիւն կրնան ընել ցուցնելով թէ հզարա ու յանձնաւարտան մարդիկներուն վախճանն սրն է:

Արտաւազդ Արտաշէսին եւ Սաթինկան անդրանիկ որդին էր: Ասիկա չափահաս ըլլալէն ետեւ, որովհետեւ հզարա ու անձնահասճ մարդ մըն էր, քաջ Արդամին շատ դաւաճանութիւններ ըրաւ: Արդամ՝ Մուրացան կամ Մարաց նախարարութեան նահապեան էր, եւ վիշապազանց կամ վիշապաց (Աժդահակ Մարաց թագաւորին անունը՝ որուն Անուշ կինն ուրիշներուն հետ մեկտեղ Հայաստան գերի բերուած էր, վիշապ կը նշանակէ) սերնդէն յառաջ եկած էր: Արտաշէս Բ. Արտաւազդին հայրը, երբ որ Երուանդայ դէժ պատերազմի ելաւ, աս Արդամին շատ կրդուսներով խոստացաւ որ եթէ Երուանդէն բաժնուելու ըլլայ, անկէ ընդունած պատիւներն իրեն թող կու տայ եւ անոնց վրայ աւելի բան կ'աւելցընէ: Ուստի պատերազմն ետեւ՝ Արտաշէս խոստացած բաները տուաւ, այս ինքն է՝ երկրորդական գահ:

յակնթակապ ստակ, երկու ականջն ալ գինդ, մկ ոտքին կարմիր կօշիկ, ոսկիէ տարգալ ու պատառաքաղ դործածելու եւ ոսկի բաժակներով խմելու իշխանութիւն: Ասոնք էին քաջ ու ծերունի Արգամին տրուած մեծամեծ պատիւները:

Բայց Արտաւազդ նախանձոտ ըլլալով՝ ուզեց նախ Արգամին ձեռքէն երկրորդութեան պատիւը յափշտակել: Անոր համար հօրն ամբաստանութիւն ըրաւ թէ Արգամ կ'ուզէ թագաւոր ըլլալ: Արտաշէս՝ Արտաւազդայ խարէութիւնը չիմանալով՝ Արգամին տուած պատիւն առաւ, իրեն տուաւ: Արտաւազդ ասով գոհ չեղաւ: Օր մը երբ որ Արտաշէս Արգամին ճաշի գնաց, կասկած մ'ելլելով թէ Արգամ թագաւորին դաւ մը պիտ'որ ընէ, Արտաշէսի որդիքն անոր մօրուքը քաշեցին, եւ ետքն ալ Արտաւազդ աս դաւոյն պատճառաւ, Արգամին Նախճաւան քաղաքն ու Երասխ գետին քովերն ունեցած բոլոր կալուածները զբաւեց, եւ անոնցմէ իրեն ապարաններ ու բերդեր շինեց: Բայց Արգամայ որդին ալ ասոր չիրնալով համբերել, անոր գէմ՝ պատերազմի ելաւ. Արտաւազդ անոր յաղթեց եւ թէ՛ զինքը, թէ՛ զԱրգամ բոլոր ցեղովը սպաննեց, միայն քանի մը հօգի Արտաշէսին արքունիքը փախելով՝ կրցան մահու ընէ ազատիլ: Աս Արգամը մեր հին երգերուն մէջ Արգաւան ալ կը կոչուի:

Նոյնպէս երբ որ Արտաշէս՝ Սմբատ սպարապետին քաջութեանց նայելով՝ Գողթան դաւառին թագաւորական կալուածներն ու պատերազմի մը բոլոր աւարն եւ ուրիշ շատ պատիւներ անոր պարգեւեց, Արտաւազդ սաստիկ նախանձելով՝ զՍմբատ մեռցընել ուզեց. բայց իր խորհուրդը յայտնուեցաւ, եւ Արտաշէսին ականջն ալ հասնելով՝ շատ խռովեցաւ: Ասոր վրայ Սմբատ կամօք սպարապետութենէ հրաժարեցաւ, եւ ելաւ Հայաստանի հարաւային կողմը գնաց: Արտաւազդ Սմբատայ երթալէն ետեւ՝ իր բաղձացած սպարապետութեան իշխանութիւնը հօրմէն առաւ: Ասոր վրայ եղբայրները սկսան իրեն նախանձիլ. անոր համար Արտաշէս զանոնք այսպէս կարգադրեց: ԶԱրոյր՝ որն որ շատ խելացի ու բանաստեղծ մարդ մըն էր, տէրութեան հազարապետ դրաւ, եւ բոլոր արքունեաց դործքերն անոր յանձնեց. Մաժանն ալ Անի քաղքին Արա-

մազդայ զից քրմապետ ըրաւ : Իսկ զօրաց իշխանութիւնը չորս բաժնեւելով՝ արեւելեան մասին վրայ Արտաւազդը գրաւ, արեւմտեանը Տիրանին յանձնեց, հարաւայինը Սմբատայ, հիւսիսայինն ալ՝ սէզ եւ որսի մէջ քաջ եղող Չարեհին տուաւ :

Արտաշէս լսելով որ Հռոմի կողմերը խռովութիւն կայ, Հռոմայեցւոց հարկ տալը դադրեցուց : Ասոր համար պատերազմ բացուեցաւ, որուն մէջ Արտաւազդ շատ քաջութիւններ ըրաւ, բայց բուն յաղթութիւնը Սմբատ գլուխ հանեց : Ասկէ ետեւ Տրայիանոս կայսրը գալով՝ Հայք անոր հնազանդեցան : Մաժան՝ Արտաշէսին որդին, Տրայիանոսին գնաց եւ իր եղբարցը վրայ ամբաստանութիւն ըրաւ, ըսելով որ Եթէ զԱրտաւազդ եւ զՏիրան քշել չտաս եւ Հայոց զօրքը Չարեհին չյանձնես, հարկերը չես կրնար դիւրաւ առնել : Աս բանս անոր համար ըրաւ, վասն զի Արտաւազդայ յի պահած էր՝ իր դայեկին (Սմբատին) դէմ ըրած անիրաւութիւններուն համար : ՉՏիրան ալ զօրապետութենէ կ'ուզէր ձգել, որպէս զի ինք թէ՛ քրմապետ թէ՛ արեւմտեան զօրաց զօրապետ ըլլայ : Բայց Տրայիանոս անոր խօսքը մտիկ չըրաւ : Արտաւազդ եւ Տիրան աս բանս իմանալով՝ որսի տակն զինքը սպաննեցին ու տարին Բաղաւան թաղեցին :

Արտաւազդ հօրը գահը նստելէն ետեւ՝ բոլոր եղբարքն ու քոյրերն Արարատէն վաճնեց, միայն իր Տիրան եղբայրը քովը պահեց իրեն փոխանորդ ըլլալու համար, վասն զի ինք որդի չունէր : Քաղաւորելէն քիչ մը ետքը՝ ձիով որսի գնաց, եւ ճամբան վրան շփոթութիւն ու խելացնութիւն մը գալով, ձիովն ասդին անդին սկսաւ երթալ գալ, եւ խորունկ փոսի մը մէջ ինկաւ կորսուեցաւ : Աս է Արտաւազդայ վրայ պատմուած պատմութիւնը : Խոյր . Գեղ + Բ . Գլ . ԾԱ . — ԿԱ :

Իսկ Գողթան երգիչներուն իր վրայ երգած վէպերն արդէն յայտնի են : Նախ Արտաշէսին բերնէն ելած ան համբաւաւոր վճիռը կամ անէծքը . «Եթէ դու յորս հեծցիս . . .» : Երկրորդ՝ նոյն Գողթան երգիչներուն ան մրմունջը թէ Վիշապազունք Արտաւազդ մանուկը զողջան ու տեղը դեւ մը դրին, այս ինքն՝ մոլի ըրին . որով ոմանք կ'ըսէին թէ Աժգահակայ ցեղին, այս ինքն՝ Մուրացան նախարա-

բուժեան կանայքը զինքը կախարդեցին: Գարձեալ նոյն
ատենուան պառաւներն ալ կ'ըսէին թէ Արաւազգ ան-
ձաւի մը մէջ կապուած կեցած է, եւ երկու շուն միշտ շրջ-
թաները կը կրծեն՝ որ մաշէլով փրթին, եւ ինքն ալ կը
ջանայ անկէ ելլել ու աշխարհքիս վերջ տալ. բայց միան-
գամայն կ'ըսէին որ դարբնաց կռանարկուժեան ձայնէն՝
շրթաները նորէն նորէն կը զօրանան: Խոր. Գիրք Ա. Գլ.
Լ. եւ Գիրք. Բ. Գլ. ԿԱ:

Հոս Արաւազգին վրայ պատմուած սոցոյդ եւ առաս-
տելախառն պատմութիւնները՝ տեղեկութեան համար գրե-
լէն ետեւ, կ'անցնինք աս երկուքէն բաղկացած գրուածի մը,
որն որ զուարճալի բլաւէն զատ, շատ օգուտ ալ կընայ տալ
եւ փառքէն անյադ սրտերուն ու յամառ եւ նախանձառ
ողիններուն ընդունիած աղէտը ներկայացընել:

Ե.

ԻՆՉՈՒՆ պնշափ խիստ ու դասն էին, Սաթիւնիկ, քու
ցաւերդ: Ա՛Տ, կարենայի քեզմէ իմանալ, կամ՝ դոնէ
ուրիշ մէկը պատմեր: Գուն, Մեղզումնէ, դուն, եկուր
զրուցէ ինծի թէ ի՞նչպէս եւ ո՞վ թափեց Արտաւազդայ
գլուխն ան զարհուրելի անէծքը, ի՞նչպէս անիկա պատ-
ժուեցաւ եւ թէ կրցա՞ւ արդեօք մահուան ձեռքէն ա-
զատիլ: Ի՞նչ բրաւ իր մայրը կամ Սաթիւնիկ ի՞նչ կրեց:

Մեծ ու յաւիտենական էին Սաթիւնիկան ողբերը,
Հռամայեցւոց հետ բլաղու պատերազմին մէջ իր որդւոցը
մահը կարծես թէ աչքին առջեւ կը տեսնէր եւ անոնց-
մէ մէկուն վրայ ի մասնաւորի շատ կը վախնար. կերպով
մը չէր կրնար մխիթարութիւն գտնել եւ իր ողբերուն
մէջ աս արանջի խօսքերը կ'երկրորդէր. Ա՛Տ, աս ինչ
ողորմելի վիճակ է. խոսվութիւններն երբեք չեն դա-
դրիր, վտանգները պահաս չեն. ս' գիտէ պիտի կարող
բլա՞ն երկու ըւսաւորներս՝ որդիներէս մէկը տեսնել,
չէ՛նէ ես ալ անոնց հետ սեւ տաքտաքոսը պիտ' որ իջ-
նամ: Աս գիշերն ալ անցաւ, արդէն ցորեկուան ասաղն
արծաթաթեւ մազերը կը սկսի տարածել, բարբոքած
քառածին ալ վեր կ'ելլէ կը բարձրանայ: Ա՛Տ, կարելի

բլլար այսօր դէմ յանդիման Արեսին հետ տեսնուիլ : Բայց ինչ կ'ըսեմ, կռիւն անոր սիրելի է, անոր տեսքն ինծի անօգուտ է : Աարո՛ղ բլլայի փոս քարայր մը փախչիլ, փետրալից զնդի մ'ընկերանալ, հոն բարեկամ դիք մը զիս թռչնոյ փոխելով՝ ծովային ալիքներուն վրայէն թռիչս ընելի եւ վերջապէս ան Արամազդայ բնակութեան քով երանելեաց ծարաւը յազեցրնող պաղպաջուն օշարակի վտակներէ ուողուած երկիրը հասնելի ուսկից անդին՝ Երեքթանեւոր աստուածը նաւորդի մը ճամբայ ընել թոյլ չէ տուած, վասն զի հոն է երկիրն ծայրն ու սահմանը, ուր նաեւ Ատլանտոս կը տիրէ : Աս երանելեաց տեղը հասնելով՝ Մեծին ոտքն իյնայի, աղաչելի որ չըլլայ թէ որդւոցս մէջէն մէկը վերջին ու մշանջենաւոր քնոյ մէջ մտնէ : Բայց ինչ օգուտ թռչող խօսքերէ, պէտք է որ մարդկայինը կրեմ. աշխարհքիս մէջ անձկութենէ ազատ մարդ չկայ. մահկանացու մը երբեք ստուգիւ երանելի չիկրնար ըսուիլ, մինչեւ որ ճրագի պէս չմարի :

Սաթինիկ աս ամէն բանն ըսելէն ետեւ, աչքն Արտաւազդին վրայ սեւեռած՝ անոր կը նայէր, եւ գեռիրեն ներկայ եղող ու պատերազմի չգացող սրգիէն քաղցր խօսք մը կ'ուզէր լսել :

Նոյն ատեն Մաթան իզձը ներս մտաւ, եւ արտարնօք աս խօսքերս ըսաւ. խօսքերուս քիչ ժամանակի միջոց մը բաւական է. յիշողութենէս ելած չեն նէ՛ Արամազդայ մահենին մէջ լած խօսքերս՝ ես անոր քրմապետը, քեզի պատմել կ'ուզեմ, Սաթինիկ : Չայնն արդեօք իրմէ թէ ուրիշէ էր, չեմ գիտեր. բայց խօսքերը դէշ գեպքի նշանակ կ'երեւան : Ասոնք մեզի թէ թշնամեաց համար են, ոչ ոք գիտէ : Ինչ եւ իցէ, դուն Երկիրնէն յաջող ելք մը խնդրէ, վասն զի աստուածային գործքերը շողուն աստղներուն չափ այլեւայլ կերպարանք ունին. երկիրը մտքէ դուրս բաներ կը գործէ : Անմահք՝ շատ անգամ մարդուն հնարաւոր սեպածը, ըլ-

լալու բանք՝ չեն ըներ. անկարելին, չըլլալու բան կարծածնին՝ կարելի կ'ընեն ու իրօք կ'երեւցընեն: Այսպէս ալ թէ դժբախտ բան մը կայ նէ՝ խնդրէ որ լաւի դարձընեն: Գից խօսքին սկիզբն անցայտ զարհուրելի կերպով այսպէս կը սկսի. «Ալ բաւական է...: Ո՛վ գիտէ... անիկա ուր պիտի հասնի: Երկինքն՝ ուր որ Երանելեաց գահն է, անշուշտ ամենուն համար ըստ գործոց արդարութիւն կայ. աշխարհքիս մէջն ալ կը գանուի, բայց երանի թէ միշտ կատարուէր: Ես Երկինքէն վրէժ կը խնդրեմ, մարդիկները ստիպելով՝ արդարութիւն ընել կու տամ: Թէ որ ան հպարտն, ան շարաշուքն իր անիրաւ գործոցը միտ չիղներ. ի՛նչ, ես ալ... արդարութեանս վրայ պիտի չհսկեմ: Ա՛նգեմ որ Արատաշատ, Հայաստան ու բոլոր աշխարհք անոր՝ մատնիչ, անիրաւ ըլլալը գիտնայ, ամէն տեղ վատահամբաւ ըլլայ, ամէն մարդ իրմէ դարչի, ամէն մէկն իրմէ վախճի, եւ նոյն խակ վատամուծութիւնը՝ զինքը շճանչցողին մատով ցուցընէ: Ամէն մարդ զինքը գործոցն ու խօսքերուն համար յանդիմանէ, իր հայրն ալ զինքն անիծէ...»:

Ասոնք էին, Սաթիհիկ, ըսածները. ես ալ աւելի հոս յապաղել չեմ կրնար, թշնամիք հասած են, անոնց դիմացը պիտ'որ ելլեմ: Մնաս բարով:

Արատազգ՝ Մաժանին խորամանկ բնութիւնն ու Սաթիհիկան աղետալի կերպարանքը նկատելով՝ նստած տեղէն վեր ցատքեց, վառվռուն ու արագ ընթացքով մը ասդին անդին գնաց եկաւ, վերջապէս ինք զինքը չկրնարով բռնել՝ այսպէս ըսաւ. Թո՛ղ, Սաթիհիկ, վշտերդ մէկդի թող, հեռու ըլլան քեզմէ այսպիսի ցաւերը. ծովու խոր անդունդէն վեր ելիր. յազթէ ցաւոցդ: Գեռ բան չպատահած՝ ինչ երկիւղ է առ այսչափ է մերձաւորին սէրը, անոր կորստեան վրայ ահը:

Արատազգ իր ըսածներուն վրայ ինքն ալ զարմացաւ, խօսքը փոխեց: Ամբարտաւան ու նախանձոտ ըլ-

լարով, իրմէ պզտիկ եղբարցը վրայ հող ունենալն աւելորդ կը համարէր, անոնց պատիւն իրեն նախատինք կը կարծէր, անոր համար մայրը մխիթարելու տեղ՝ աւելի արամեցուց:

Ինչո՞ւ կը վախնաս, Սաթինիկ, բաւ, արդեօք անոնց մեռնելովը մեծ բա՞ն մը կը կորսուի, Հայոց ժառանգ կը պակսի. մի վախնար, ժողովուրդը՝ ծառայելու տէր, ծառայելու դիւցազն ունի. թող յանդուգն որդիներդ, իրենց բախտին ձգէ. մի զարհուրիր, ես ալ պէտք է որ երթամ. յանկարծ վերջին բաղէն վրայ կը հասնիմ, եւ սրտաթափ, աժգոյն երեսով, շանթը զարկած ատեն զարհուրած հովիւներուն պէս, իրենց պարապ երկիւղը կը ցրուեմ, դարձեալ ողի կ'առնեն, կ'երլեն, իմ օգնելովս՝ սարսափած հօար նօրէն կը ժողովեն: Առ դայ ան օրը, որուն մէջ Հայաստան ուրախութեան ձայներով կը լեցուի, ցնծութեան աւետներով կը թնդայ: Աշտայ ետեւէն եկող բարիք՝ առջինները մոռնալ կու տան:

Արտաւազդ այսպէս եւ ատոնց նման շատ խօսքեր խօսեցաւ. բայց Սաթինիկան սիրտն երկու եղաւ, իր տատանեալ միտքը յայտնել ուզեց. իր որդւոցը վրայ ունեցած կասկածը, Արտաւազդին վրայ ունեցած վախը մեկնել տենչաց, զԱրտաւազդ շատ սիրելով՝ սրտին զգացումը բերնով նկարել ջանաց, քիչ շատ Արտաւազդայ մեծամտութիւնը յանդիմանեց: Քայց յանդիմանութեան կերպն է որ զմարդ կը շիտկէ, ոչ թէ շողփաղփաղութիւնն ու շղթթորթութիւնը: Նոյնպէս անմիտ մը՝ իրեն խրատ տուողին թշնամի կ'ըլայ:

Սաթինիկ Արտաւազդայ վրայ դողալով կը կարծէր որ զանիկայ արկածներէ ազատելու ճար մը կրնայ գտնել. բայց բուն չարիքէն ազատ ընելու եղանակն աղէկ չէր գիտեր: Ո՛հ, Արտաւազդ, դուն հպարտ ես, բաւ. լեզուդ ալ՝ մտացդ համաձայն կը խօսի: Մեծ երկիւղ մը միտքս պաշարած է. բախտիդ վրայ կը վախ-

նամ, վասն զի առջեւս զարմանալի դէպք մ' ելաւ: Երբ որ վերջնալուսոյ վրայ իր թշնամին սեւ վերաբիւնն նեւտեց եւ ամէն բան խոր խաղաղութեան մէջ խոթեց, Փեքսն ալ իր հասարակօրումն գոյնը տեսանելեաց վրայ չէր ծագեր, ամէն մարդ յոգնած անդամներուն հանդիստ կու տար, եւ երագներն իրենց թռիչն ասդին անդին ընելով՝ հողերէն ազատ ընող գիշերումն հանդիստն երբեմն երբեմն կը վրդովէին. եւ միայն անհանդիստ, թէպէտ եւ շատ ուրիշ անդամ ալ, բայց երէկ իրիկուն մանաւանդ սաստիկ աղէտից ու անձկութեանց մէջ արթուն, միտքս ձեր վրայ՝ կը հսկէի: Ինչպէս որ արեգակը հեռացած ու դեղեցիկ եւ վարդագոյն դէմքը քիչ ցուցուցած ատեն՝ երկրիս դալարագեղ, ու ծաղկաւէտ գեղեցկութիւնը կը կօրսուի, հովերը կը փչեն կը մոնչեն եւ ձիւն ու սառոյց կը խաւրեն. նոյնպէս եւ իմ որդւոցս հեռաւորութիւնն ու վտանգները մտածելով՝ խիստ ձմերումն ու խորին տրամութեան մէջ թաղուած էի: Բայց վերջապէս արագ թեւերով քաղցր քունը գալով ու երկու վառուած աստեղներուս վրայ իր զօրաւոր հիւթը սրսկելով՝ զանոնք մարեց: Մէկէն քնոյ մէջ ընկղմեցայ, իջաւ ինկաւ սրտիս վրայ խաղաղութիւնը, մարդկային կարողութիւններն ի կախ մնացին. վշտերը, հողերը, ցաւերը դադարեցան:

Բայց մէկէն ի մէկ երեւակայութեանս մէջ մեծ կանաչագեղ դաշտ մը բացուեցաւ. մէկ ու մէկալ կողմը բիւրաւորներ կը տեսնէի, որոնք սայրասուր թրեւրով իրարու արիւնը կը թափէին. ամէն մէկը մեծ ու պզտիկ՝ յանդգնութեամբ մէկմէկու վրայ կը դիմէին, եւ շատերն ամօթով եւ մղուելով՝ գետինը փոշիներու մէջ կը թաւալէին: Երկու հսկաներ ալ բարձր օդի վրայ տեսայ. մէկը դեղեցիկ հազրտտով, դիւնէն մինչեւ ոտը զրահներ հագած, ձեռքը զարհուրելի պաշտպանութեան ասպար մը բռնած: Միւսը մթին, դեղնցած երեսով, քարայրի բնակ ու վրէժխնդիր արդարութեան

կատարիչ կ'երեւար: Ասոնք մէջերնին սաստիկ կռուելէն ետեւ՝ վերջապէս զրահաւորը յաղթութեան նշոյլ մը տեսած ատեն՝ պոռաց, սպառնաց. Ուզած անձս մահուան ձեռքէն կ'ազատեմ, ըսաւ, երկրիս տակ, տարտարոս կ'երթամ՝ Պղբատոնին աղջամղջին բնակարանը. եւ իմ սիրելիս (արի քաջ մը ցուցընելով) պայծառլուսոյ մէջ կը բերեմ, ըսաւ:

Ես առ խօսքերը լսելու ատեն՝ ուրիշ կողմ մը զքեզ, Արտաւազդ, շիտթութեանց մէջ տեսայ. ո՛հ, դնաց, ըսի, զարհուրեցայ, երակներս սառեցան. ահագին բազմութեան գունդ մը զքեզ պաշարած՝ արինարբու սրելով աչքիդ լոյսն յափշտակել կ'ուզէր. մէկն անգթութեամբ կը մղէր, որպէս զի իյնաս կորսուիս. ուրիշ մը դղրդիւնով ու աղաղակով ահ կը պատճառէր. մէկը՝ մէկ կողմը, միւսը՝ մէկալ կողմը կը վերաւորէր. եւ վերջին առողջ մնացած տեղը զարնելով՝ կիսամահ գետինը փռեց: Նոյն ատեն երկայրի սուր մը սիրտս թափանցեց, խոր աղետից մէջ ընկղմեցայ եւ ոտքէս մինչեւ գլուխս պաղեցայ. աչքս բացի, զքեզ արքունիք ազատ տեսայ, ոգի առի, բայց շուտ մը նորէն նոյն վշտերուն մէջ թաղուեցայ, վասն զի տեսածներս անտարակոյս պատահելու բաներուն նշանները կը սեպէի:

Բայց գոնէ հիմակ աղէտիցս վերջ մը տայի: Ուր է, երբ արդեօք օղեղէն դաշտի բնակիչներուն պէս վաղելով՝ մէկը պիտի գայ ու մէկալներուն վրայ լուր պիտի տայ, որպէս զի ամէն բան ճշդիւ լսելով վերջ տամ վշտացս: Եւ չէր գիտեր որորմելին որ արդէն թէ մէկ թէ մէկալ կողմը մօտ եկած էին, եւ Աեսարիայ մօտերն ընդարձակ դաշտավայրի մը վրայ, բոլոր Հայոց զօրքերը, բոլոր Հայոց քաջերն անթիւ անհամար բազմութեամբ բանակած կեցած էին: Հեծեալ ու ոտանաւոր, աղեղնաւոր ու սիգաւոր՝ թշնամոյն անիրաւութեամբ հանած պատերազմին գէմ վրէժ կը շնչէին: Զանազան զօրավարներու տակ պատրաստ կեցած, բռնի զսպուած

էին, նետերու անձրեւն ի կախ կը պահէին, ու յարձակման փոքր նշանի մը կը սպասէին. արդեւ լուած գետի մը պէս, որ իր ահագին ալիքներն ու ջրերը դիզելով՝ ապահանելու կը պատրաստուի, եւ վերջապէս ազատութիւն գտնելով՝ ուժգնութեամբ կը դիմէ, առջեւն ելածը կ'առնէ կը տանի, կ'եղծանէ, ոչինչ կը դարձնէ:

Աջ ու ձախ կողմն առիւծասիրտ դիւցազունք զօրաց յորդոր կու տային ու որտերնուն մէջ կրակ կը վառէին: Տիրան հանդարտութեամբ կեցած՝ յարմար ժամանակի կը սպասէր: Ամենեւին չվախնալու է, կ'ըսէր. միաքն առաջնորդ առէք. մի զարհուրիք մահուընէն՝ որն որ որոշեալ նպատակին կը հասցնէ. մանաւանդ թէ մտած խիստ ճամբաներէն չշեղելով՝ համբաւաւոր պատուոյ դիմեցէք, որն որ ստուգիւ կ'ընդունիք յաղթելով. իսկ եթէ բախտը ախուր դէմք մը ցուցնելու ըլլայ, նոյն պատիւը դարձեալ կորսուած չէ: Այսպիսի խօսքերով զօրքն առիւծ կը դարձնէր, եւ ինք արի անձ մը, մեծին Սմբատայ աշկերտ ըլլալը կը ցուցնէր:

Արոյրն ալ բերնէն մեզը կը վազցընէր, Արիէոսին պէս ամէն մարդ ու ժայռերն ալ խօսելով ու բղձելով իրեն կը քաշէր, Գողթան դաւառին հիւթը ծծողը, Մուսայից բարեկամը: Աս զողտը արուեստով կը զուարճացընէր ու կը խաբէր, կը խայթէր կամ կը հաճէր, քաղցր կերպով մը կը դիւթէր, յանկարծակի կը լացընէր, կը ծիծաղցընէր, յանդգնութեամբ կը վառէր: Եւ վերջապէս յաղթութեան կը պատրաստէր: Նման ալ էր իր սիրելի բարեկամին, նետաձիգ Ապողոնին, որն որ աստուածներուն մէջէն նետաձգութեան մէջ երեւելին է: Ի՛նչ աւելի ու մեծ օգուտ կրնար ընել աս պատերազմին մէջ Արոյր, այնպիսի բանաստեղծ մ'ըլլալէն, եւ ասով՝ զօրաց այնչափ քաջալեր տալէն ետեւ, յաղթութեան կէսն արդէն լմնցած սլ չիհամարիր:

Մաժան՝ Անի քաղքին Արամազդայ դից քրմապետն ըլլալով, անկէ յաջողութիւն կը խնդրէր: Զօրքը քա-

Զախերերկով՝ Բախտը մեր կողմն է, կ'ըսէր, բայց չըլլալու
ալ ըլլայ, շատ շիտեւեր, անոր բարկութիւնը տեւա-
կան չէ, վախոյողին՝ անգութ ու վայրենի է. իսկ ազ-
նուական ծոցի մը մէջ հաստատուն առաքինութիւն
գտած ատեն՝ իր յանդուզն յարձակումները կը բեկա-
նին ու ինքն ալ կը դառնայ հաշտ բարեկամ՝ կ'ըլլայ՝
Գարձեալ բախտին փախստական կայծը զիս չիշացը-
ներ, ան սուտ ծիծաղը զիս չիխաբեր, չ'ամոքեր, իրեն
չեմ վստահիր, անկէ չեմ վախնար: Գիտեմ որ օձը
շատ անգամ ծաղկանց ու տերեւներու մէջ կը պա-
հուրտի ու կը պլլուի. գիտեմ որ օդի մէջ երբեմն աս-
տղի մը, որն որ աստղ չէ՝ զարմացում կ'ըլլայ: Արեւմն
խաբեբայ յաջող կամ անյաջող բախտը մէկդի. միայն
սիրտ, դժ ու քաջասրտութիւն պէտք է:

Օ, արեհ՝ ան մեծ ու երեւելի որսորդը, որսորդու-
թեան մէջ նահատակը, թէպէտ երբեմն Արաց Քար-
ձամ թագաւորը զինքը բռնելով՝ Աովկասու մթին բան-
տին մէջ դրաւ ու տգամանդեայ կապանքով կապեց. ի
վերայ այսր ամենայնի Արտաւազդ՝ Սաթիւնկան վահա-
գնատեսիլ որդին զինքն աղատեց: Հիմակ աս պատե-
րազմիս մէջ կը գոչէր. Արսի ընկերներ, կ'ըսէր, մենք
բարձր լեռներու վրայ, գեղեցիկ հովանաւոր անտառնե-
րու մէջ, ուսկից յստակ ջրեր կը բխեն ու կարկաչելով
վար կը վազեն եւ ամաններու մէջ ժողվուելով՝ պայ-
ծառ ազրիւրներ կը շինեն, մենք հան արագութեամբ
օդը պատուող թռչուններն ու երկրիս վրայ թռչող
երէնները սպաննելու վարժած ենք. Զարդենք վրանիս
եկած որսը, զմեզ տարտարոս խրկելու եկողները:

Ստուգիւ աս չորս արքայազունքն ով որ տեսնելու
ըլլար՝ կը յորդորուէր, կրակ կը կտրէր: Բայց ս'էր թո-
ղում ուրիշ շատ զօրավարները, զարմանալի կտրիճներն,
ինչպէս մտնամ Տրդատ Բագրատունին, որն որ քաջ
Սմբատայ տնէն ըլլալով՝ իր տիրոջը յաւիտեան հաւա-
տարիմ կ'ուզէր մնալ: Ինչպէս որ առիւծակորիւնը

ճնողքը վտանգի մէջ տեսնելու ատեն՝ չիդանդաղիր ճիրաններն արեան մէջ թաթխելու, գութն ու սէրը զինքը կը մշտեն, կը վազէ կը յարձակի, եւ եթէ զանհիկա չկարենայ ազատել, գոնէ ինքն ալ կը մեռնի. այնպէս ալ Տրդատ իր կեանքն անոնց համար զոհ ընել կը բաղձար: Ասոր քով կեցած էր Քաղաք Սիւնեաց պրանչելի նահապետը: Քիչ մը հեռու էր Ներսէս Գիմարեան, տիրասէր Գիսակայ որդին: Աս ան Գիսակն է որն որ ատեն մը զԱրտաշէս ան երեւելի Երուանդայ հետ բրած պատերազմին մէջ սեւ օրէ մը ազատեց ու իր դէմքին կէսը սրով վար առնուած ինքն իյնալով՝ Պղուտոնին տունը գնաց:

Թէպէտ եւ Հայոց բանակն այնպիսի դեղեցիկ կարգ ու քաջ զօրավարներ ունէր, բայց քանի որ պատերազմն եղած լմբնցած չէր, յաղթութիւնը միշտ տարակուսի մէջ էր: Սաթինիկ թէպէտ որդւոցը վրայ շատ աղէկ բաներ լսեց, բայց կը վախնար. եւ իրաւամբ ալ, վասն զի Արտաւազդայ վրայ, որն որ երթալու կը սպառնար, լսածներէն զարհուրած էր: Անոր հակառակ Արտաւազդ իր եղբարցը վրայ գովութիւններ լսելով՝ նախանձէն սաստիկ կը կատղէր, եւ Սաթինեկան պատմուած ատեն թէ որդիքդ զօրքն այսպէս կը կարգաւորեն, այնպէս կը քաջալերեն, Արտաւազդ պատմողին բարկանալով՝ Առէ, շոգըրորթ, բռաւ, սուտ գովեստներ մի խօսիր. ամէն խօսքովդ նոր ատելութեան նիւթ կը լեցուի ծոցս: Ըսած անուններդ՝ որոնք յիշուելու արժանի չեն, յանդուգն են: Անոնք առանձին նոր դաշտ մ'ելլելով՝ պատուոյս անարգանք կ'ըլլան, ինձի նոր լարեր կը լարեն: Գեռ կենդանի են, օրուան լուսատու սաստիկ իրենց ալ կը ծագի: Անոնց յիշատակն աշխարհքիս մէջ կը գտնուի: Ըսածներդ, ս'լ ստատաց, անոնց վրայ պատմածներդ վաղը աներեւոյթ կ'ըլլան. իմ համբաւս նորէն երեւան կ'ելլէ: Մեծ ու պզտի դէպքերու շարքեր պատահեցան, ու հպարտ Արգաւան եւ իր որդիքը

կռուց ելան, բայց իմ բազկաւս ու իմ ձեռքս չարա-
չար զսպուեցան:

Սաթինիկ՝ գուցէ Արտաւազդայ խօսքերն ու գործ-
քերն այնչափ չէր հաւնէր, բայց մէկալ կողմանէ ալ
իրեն համաձայնած էր: Անոր համար ալ Արտաւազդ
ինք զինքն աւելի եւս կը բարձրացնէր, եւ իր միայն նա-
խանձով բրած չար գործքը՝ երեւելի գործքի մը պէս
կը պատմէր: Անգամ մը ան հոչակաւոր վիշապազնեայ
Արգաւանն Արտաշեսին պատիւ բնել ուղելով՝ զանի-
կայ երեւելի ճաշի մը կանչեց, հոն վիշապայ տաճարին
կամ ճաշարանին մէջ Արգաւանն Արտաշեսին դաւադիր է
բտելով՝ Արտաւազդ ու իր եղբարքը զինքը չարչարեցին.
եւ ետքն ալ Արտաւազդ՝ Արտաշեսին քաջ որդին,
Արտաշատու հիմը դրուելու ատեն՝ կարծես թէ հոն
իրեն ապարան շինելու տեղ չգտնելով, ելաւ Մարաց
տեղը գնաց, Արգաւանին երկիրներն առաւ, եւ Շա-
բուրայ դաշտին մէջ Մարակերտ քաղաքը շինեց:

Արտաւազդ վերը բսած պարծանքները բաւական
չսեպելով ու իր առջի խօսքերը շարունակելով՝ այսպէս
բտաւ. Կրկին եզերքին մէջէն այլքն ալեաց ետեւէն կը
վազէ, հեղուկը նոյն չէ, բայց գետը նոյն է: Աս ալեաց
դէմ ալ կ'երթամ, Սաթինիկ, որդւոցդ կեանքը կ'ա-
զատեմ. չկայ անոնց մէջ, չկայ մէկն՝ որ կարող ըլլայ
պատերազմի դէմքը մեզի զուարթ ցուցնել: Տեսնեն
ազդերը, տեսնէ Հայոց աշխարհքն Արտաւազդայ մեծ
ոյժը. տեսնէ որ ան ահագին թշնամեաց գնդերն՝
որոնք տկար կարծածներնուն դէմ հիմա բարձրալիզ
կու դան, բոլոր անոնց դիակները դաշտերու վրայ ու
անտառներու մէջ տարածած, դազաններու կերակուր
պիտի պատրաստեմ: Իմ ուժովս ու արուեստովս ձմե-
րուան աղէտքէն ու ցուրտ օրուրնէն զօրքն ազատելով՝
դարնան օրը պիտի հասցընեմ: Ալ պատերազմի հնչող
թմբուկը պիտի չղարնէ, անոր բարկութիւնը մեզի
հաշտ պիտ'որ ըլլայ: Ո՛հ, ինչ յաղթութեան սիւն

պիտի կանգնուի . ինչ ուրախութեան աղաղակ պիտի
հնչէ : Բայց ինչ կ'ըսեմ , արդէն երթալուս պատրաս-
տութեան համբաւը տարածուելով՝ ծափը սկսաւ :

Վուն միայն , Սաթինիկ , դուն կու լաս ու կ'ողբաս .
ինչ , ըսածներդ սողոյգ են , երազներդ ճշմարիտ են .
զիս արգելելդ ինչ օգուտ է . ան դատարկ երկիւղդ
իմաստնոյ մը ատելի է : Բայց կը ճանչնամ զքեզ : Երբ
որ հանդարտ արքունեաց մէջ կը տիրես՝ անհանդուր-
ժելի ես , բանէ մը վախնալուդ պէս՝ ամենուն վնասակար
ես : Ասեցի խօսքերդ , գիտեմ՝ երազներդ զուտ երեւա-
կայութեան տեսիլքներ են : Ծայլը խռոված է , երկիրս
մշուշով պատած է . այսչափ վտանգներու մէջ օգնա-
կան մը պէտք չէ : Ի՛նչ , չէս ուզեր որ երթամ : Երբ որ
նաւ մը ահագին ալիքներէ ալեկոծեալ ընկզմելու կ'ըլայ
նէ , քաջ նաւապետը փախչելով՝ փրկութեան դարման
մը կ'ըլայ :

Արտաւազդ այսպէս խօսելէն ետեւ՝ Մնան բարով
մ'ըսելով , թողուց գնաց , վասն զի միտքը հաստատուն
զրած էր որ ըսածները պիտի կատարէ . ոչ մարդու
թրէն կը վախնար եւ ոչ Երկնքի սպառնալիքներէն դող
մը կը զգար . գլխուն գալիքը չէր գիտեր , կամ թէ լա-
ւազոյն ըսելու համար՝ գիտնալ չէր ուզեր : Սաթին-
կան ըսած նշանները բանի տեղ չգրաւ եւ այսպէսով
զանիկայ անմխիթար թող տուաւ , իր վրայ ալ ներքին
ստակացման նշան մը չտեսնուեցաւ : Մեծամտութեամբ
մը գնաց , բայց այնուհետեւ մէյ մ'ալ պիտի դառնար :

ԻՒՒՐԱՒՈՐ խորհուրդներու, բարկանալու՝ չէ նէ լալու տարակուսանաց մէջ, ընելիքն ինքն ալ չէր դիտեր, լուռ կեցած՝ սիրտը կը մաշեցընէր Սաթինիկ: Աս կրկին չարեաց յաջող կատարածը տեսնել կ'ուզէր, թէ պատերազմին յաղթութեամբ լմրննալուն կը բաղձար, թէ Արտաւազդը վտանգէ բոլորովին ազատ կ'ուզէր: Բայց ասոր ազատութիւնն անկարելի սեպելով՝ ալ ինք իրեն կանչելու սկսաւ. Ո՛հ, Արտաւազդ Արտաւազդ, արդեօք ուստի ես, Արտաւազդ. ո՛չ արշակունի արիւնէ ես եւ ո՛չ ալ Սաթինիկ ծնաւ զքեզ. անաստ Վանանդէն ես, զայլ կամ վաղը մը մնուց զքեզ: Ի՛նչ անգութ մտրդ, ի՛նչ գազան, մարդկութեան նշմարանք չկայ վրան: Ցաւերուս ու ողբերուս համար դոյնը փոխեց, աչքը թրջեց, ցաւակցութեան նշան մը ցուցնուց. մանաւանդ թէ անարդեց, ելաւ փախաւ ողորմելին: Ո՛հ, այն մեծ աղէտքն, ահագին թշուառութիւնները, որդւոցս կորուստը, մեծամիտ բայց խայտակն արի Արտաւազդին մօտալուտ մահը պէտք է որ լամ: Հեռաւորն ինծի մօտաւոր կ'երեւայ. հասաւ թշնամեաց ահագին բանակը. կարծես թէ զօ-

բայ խուռնրն թացութիւնն ու դռչումը մէկէն աչքիս
առջեւն ելաւ, ահանջս դանչեց. մարդիկներու եւ ձիերու
բազմութիւն կը տեսնուի. փոշին՝ հեռաւոր ու արագ
պատգամաւորը վեր ու բարձր ելլելով՝ իմաց կու տայ,
դաշտի վրայ եղած զէնքերուն հնչիւնը բանակէն բար-
ձրանալով ու շրջան ընելով, երկնաբերձ լերանց վրայէն՝
անդունդ վազող ջրերուն պէս կը մոմնայ կու գայ: Աւ-
հաններուն շաշիւնը, գեղարդեանց շառաշիւնը, թռչող
նետերուն շկահիւնը սրտիս ահ ու դող կը պատճառեն:

Ահ, ո՞վ պիտ'որ ազատէ, ո՞ր աստուածն աստուած-
ներէն պիտի փրկէ: Արէս, դուն պաշտպան պիտի չըլ-
լան, դուն ոսկեսաղաւսրտ դիք, պիտի չօգնես. ար-
տեւանունքդ մեզի դարձուր. զինուէ, երկայն նիզակը
ձեռքդ առ, դնա, յաղթութեան ետեւէն դնա, օգնէ
Հայոց, կոտրէ ան ազգը. վրէժ առ անկէ՝ որն որ շատ
անգամ սաստիկ բարկութեամբ մեր զօրքերն ու մեր
ամուր պարիսպները կործանեց եւ բոլոր մեր ժողովուր-
դը սգոյ մէջ խթեց: Բոլոր երկինք քեզի հետ միա-
ցած՝ անոնց բարկանալով, մերիններուն ձեռքը՝ զա-
նոնք ջարդել տայ. անոնց յաջողութեանց ու մեր վըշ-
տաց՝ չափ դնէ: Թող արիւննին մեր արտերուն վրայ
թափելով՝ պարարտցընեն զանոնք: Գուն ալ, որդի Աս-
տոնայ, դուն քաջածիգ Ապողոն, աղեղդ լարէ, եւ վերջ
տուր ողբերուս: Դից ոյժը մեծ է, գուցէ կ'ազատեն:

Արբ որ Սաթիւնիկ առ ողբն ու պաղատանքը կ'ընէր,
զըուցաբեր մը տեսաւ, որն որ դալով՝ անկիւն մը մունչ
կեցաւ, եւ չէր համարձակեր բան մը խօսելու: Եկուր,
բաւ Սաթիւնիկ, եկուր, համբաւաբեր, պատմէ ինձի
թշնամեաց բանակին կարգն, անոր զարգն ու զօրա-
վարներուն ապանալիքը. ըսէ, պատերազմը սկսաւ.
Արտաւազդ ինչ վիճակի մէջ է: Պատգամաբերը զՍա-
թիւնիկ զարհուրած տեսնելով՝ աւելի արամեցընել չէր
ուզեր, բայց անոր թախանձն ու գիտնալու բաղձանքը
բանբերին բերնէն՝ քիչ, բայց ստիկալի լրեր հանեց:

Խառնաշփոթութիւնն ու աղաղակն, ըսաւ սուրհանգալը, չէի ուզեր քեզի նկարել, տիկին. բայց որովհետեւ ամէն բան զիտնալ կ'ուզես, մանաւանդ որ թըշնամեաց այնչափ բորբոքն ու պարծանաց խօսքերն անարգ ոգւոյ նշան մըն են, մտիկ բռէ զարհուրելի բաներ, ինչ կ'ըսեմ զարհուրելի, արդէն յայտնի բան է որ ասոնք աւելի ցոյց են քան թէ իր: Թշնամիք ահագին բազմութեամբ, անասնձ կատուութեամբ, բերներնէն հուր ու բոց հանելով, Ամենայն ինչ՝ ոչինչ պիտ'որ բնենք, կ'ըսէին, հասակի պիտի չլնայենք, մարդու, երկրի ապականութեան պիտի չնայինք:

Աս քիչ խօսքերն ըսաւ հրեշտակն ու ելաւ գնաց. եւ բուն իրր կամ տեսածն ու լածը չպատմեց: Արովհետեւ թշնամիներէն չէ թէ մէկը կամ երկուքն, այլ ամէնքը դից երդում ըրած՝ յառաջ կու գային, Ասմ' բոլորովին ջնջենք, կ'ըսէին, ու չորս կողմը հուր տարածենք, կամ մեռնինք: Բերաննին անգութ խօսքեր միայն ու հաստատուն եւ երկաթէ անձ մը կը ցուցնէին, քաջութեամբ լեցուն կ'երեւային, ու կրակ կը շնչէին: Ինչպէս առիւծին գիմացն որս մը կամ կռիւ ելած ատեն՝ թշնամոյն վրայ կը փութայ ու կը յարձակի, նոյնպէս ասոնք ալ ժամ մը յառաջ որսերնուն վրայ հասնելու կը ձեպէին: Չիբրուն փրփուրը դաշտերը ձեան պէս ձերմակ կը թըջէր: Զօրավարներուն զարդն ալ, անոնց յանդուզն յառաջադիմութիւնը, վահաններնուն վրայ նկարուած պատկերները բան մը պիտի նշանակէին: Բայց անոնց դէմ կային հայազգի զօրավարներ, որոնք անոնց ամբարտաւան վիզը կրնային խոնարհեցընել, հոգինին մարմնէն այնպէս շուտ հանել, ինչպէս թռչուն մը մարդու մը ձեռքէն կը փախչի: Եթէ զօրավարաց առանձին նկարագիրը մարդ լսելու ըլլայ, ստուգիւ անոնց երեւոյթն առաջօք կը կարծէ:

Վախ անոնցմէ մէկը կատղած յառաջ կու գար, բազմալով որ ժամ մ'առաջ պատերազմի մէջ մտնէ:

կը պոռար, կրակ էր կտրած, կարծես թէ վիշապ մըն է՝ կէսօրուան այրող ջերմութենէ բորբոքած: Զարհուրելի խօսքեր ըսելով՝ օդի վրայ կը թռչէր. երէք հովանաւոր փետուրներ՝ սաղաւարտի մազեր ունէր, վահանէն կախուած պղնձէ զարդարանքներուն ձայները մարդուն սոսկում կը բերէին. իր վեհ վահանին վրայ նկարուած նշանին տեսքը զամէնքը կ'ապշեցընէր. երկինքն՝ աստղներով երեւցուցած, որոնք ջահերու պէս վառուած էին, լոյս կու տար. վահանին մէջտեղը հաստատուած էր լիալուսինը, աստղներուն մէջէն պատուականը, գիշերուան աչքը, արծաթափայլը: Աս կոկողավիզ զօրավարն այսպիսի երեւելի ոպառազինութեամբ զարդարուած, պատերազմ կը գոչէր, բոպէ մ'ալ սպասել չէր ուզէր, անբան վայրենի երիվարի մը պէս, որն որ կատաղութեամբ սանձին շանսալով՝ կռուոյ նշանը չտրուած՝ յառաջանալ կ'ուզէ, նոյնպէս աս ալ ձիուն վրայ կ'եռար, բայց գլխուն գալէքը չէր կրնար գուշակել ողորմելին:

Արկրորդն առաջինէն աւելի ահագին հսկայ մըն էր. անվրէպ՝ դէք ուզեն չուզեն՝ յաղթութիւնն իր կողմը կը կարծէր. Արաս յարձակողին՝ մինակ ալ դէմ երթալու ըլլամ, Արամապդ անդամ չիկրնար զիս արգելել, կ'ըսէր: Երկու բորբոքած լուսաւոր՝ կրակ կտրած շանթ աչքեր ունէր: Իր վահանին նշանը՝ չափէ դուրս ահագին, հրեղէն մարդ մըն էր, ձեռուրներն երկսայրի սրեր բռնած, կարծես թէ՝ Մօաիկցողը, դիմացս ելլողն ասոնցմով մոխիր կամ ոչինչ կը դարձընեմ, կ'ըսէր:

Արրորդը տեսնելով միայն մարդ կը հիանայ: Ասիկայ Արամապդի պէս որոտում կը հանէր. խորին ու խիստ հնչմամբ օդը կը թնդացընէր, լողին ականջը կը խլացընէր: Իր ձին ալ գլուխը վեր վերցուցած, բարձր, սուր ականջներով իր տիրոջը հետ թռչել կ'ուզէր, սանձը խածնելով՝ յառաջանալ կը ջանար, կը կատաղէր, կանգուն կ'ելէր, իր խինջելովն ոտուրներուն

տակն եղած դաշարը կը սարսեր. բերնէն սաստիկ փրփուր հանելով՝ զարհուրելի տեսիլ մը կը ձեւացընէր, ու երբէք նուաճուիլ չէր ուզեր: Մարդը վայրենի եղջերուի մը պէս, անտառներու մէջ եղած ընձառիւծի կամ վարազի մը պէս, հոխուն առջեւէն ճեպող ամպի մը պէս, արագ արագ ասդին անդին կը վազէր, այնպէս որ զինքն ալ զսպող մը պէտք էր:

Ատնցմէ զատ ուրիշ մէկն ալ կար, որուն միայն երեսը նայիլը յանդգնութիւն կը սեպուէր, վասն զի նոյն իսկ Ահազանին պատկերն ու կերպարանքն ինքն էր: Ասոր վահանին վրայ եղած պատկերն ալ աննշանակ բան չէր: Աստուածներուն սոսկալի սոսխը՝ հարիւր գլխով հրէշ Տիւփոնն էր: Արիկա լերան մը տակ պառկած՝ բերնէն հրաշունչ սեւ մուխ կ'արձըկէ, որն որ օձաձեւ շարժելով՝ վեր կ'ելլէ, աշուրներէն լոյս կը ցուայցընէ. լերան գագաթը Հեփեսոսոս նստած երկաթ կը ծեծէ, ասոր քովէն հրոյ գետեր կը ժայթքեն եւ իրենց վայրենի ծամելօքն երկիրը կը սպառեն: Ինչպէս Տիւփոն իր շնչովն ամէն բան կ'ապականէ կը լմնցընէ, նոյնպէս ես ալ, կ'ըսէր զօրավարը, ամենայն ինչ այրեմ չքացընեմ պիտի:

Սաթինիկ՝ թէ որ աս ամէն բան ճշդիւ լսելու ըլլար, չէ թէ միայն կը սարսափէր, հասցա մեռած գետինը կը փռուէր, վասն զի արդէն բանքերին ան երկու խօսքովը մինակ զարհուրելով՝ Ալ բաւական է, ըսաւ, դառն վշտերս կատարեալ են: Չէ, չէ, ալ բախան աւելի ցաւ ու անձկութիւն վրաս չեկրնար հասցընել կամ ժողովել: Ամէն բան գլուխս եկաւ. սհ, երկինք, դառնութեան փորձն առի. հայրս չկայ, Տիրանու Արոյր եւ մէկալնոնք կեանքերնին տալու համար կռիւ գացին, Արտաւազդ՝ իր յանդգնութեան համար անշուշտ պէտք է որ կորսուի: Շատերն անոնց վրայ ցաւելուս համար զիս կը յանդիմանեն. միայն լալ կրնամ, ուրիշ մխիթարութիւն չունիմ: Ո՛ւր է, կայ մի, կը գտնուի՞ ար-

դեօք այնպիսի անձ մը՝ որ ինծի պէս շարշարուի: Ո՛հ, երկինք, արդար աստուածներ, արդարութիւն բռէք, վրաս գութ ցուցուցէք. ո՛հ, աս միջոցն, աս անցումն իմ վնասովս կ'անցնի. երկինք ձեր բարկութիւնն իմ գլուխս թափեցիք, շատ ու մեծ հաստատութիւն է ինձմէ պահանջածնիդ. վնասակար դիցմէ շատ կը վախնամ, վասն զի մէկալնոնց աննման են, բայց միանգամայն ճշմարիտ են, չարեաց վրէժխնդիր ու գուշակող են: Ո՛հ, անագորոյն ծովը կտրելով առանց առագաստի եւ ուրիշ հարկաւոր եղած բաներուն կը սահիմ կ'երթամ. ալիքները կը դռչեն, հովը կը սաստկանայ, երկինքը կը թխանայ ու ազատութեան գիւտը կը պակսի. բախտի կամքին հետեւելու ստիպուած եմ: Ողորմելի եմ, դժբախտ եմ. այսպիսի ցաւոց վիճակի մը մէջ ամենէն թող տրուած եմ. ցաւերը միայն ինծի հետ են, աղէտքն՝ որ զիս նաւակոծութեան կը տանի: Գուն, Արտաւազդ, ազատելով, եկուր զիս ալ ազատէ. բայց ո՞վ կրնայ քու կեանքդ մօտ եղած մշտնջենաւոր մութէն յափշտակել: Ըսաւ, անշարժ կոճղի պէս կեցաւ:

Ո՛հ, ինչ պարապ լալիւն, որչափ վնասակար աշխարհնք: Սաթինիկ կը կարծէր որ իր ողբերովը զԱրտաւազդ կրնայ ազատել կամ զանիկա աստուածոց բարկութենէն թափել. բայց ասով զԱրտաւազդ աւելի խորին անդունդ մ'իջեցուցած էր, եւ այսուհետեւ ալ կրնար ընկղմել կամ անոր մեծագոյն չարեացն առիթ բլլալ, վասն զի Արտաւազդ աս ամէն բանն իմանալով, եւ գիտնալով որ իր կողմը հզօր պաշտպան մ'ունի, շատերուն չարիք նիւթելէն ետեւ՝ նոյնը մերձաւորներուն ալ ընելու համարձակութիւն կ'առնէր: Արտաշէս՝ Սաթինիկան մշտնջենաւոր ողբերը կը տեսներ, բայց բուն պատճառը չէր գիտեր, ու կը կարծէր որ գլխաւորաբար պատերազմին համար են: Ուստի՝ Արքունեացս մէջէն ցաւերը դադրեցընելու եմ, բտելով, անդամ մը Սաթինիկան խուցը մտաւ: Սաթինիկ հեռուէն զԱրտաշէս

տեսնելով՝ ուրախացաւ ու կամեցուի մը աս խօսքերն ըսաւ . Ի՛նչ կը տեսնեմ, Արտաշէս կու գայ . կրնանք արդեօք իր բերնէն յաջող ելից լուր մը լսել : Թէպէտ եւ ինքն ալ պատերազմէն հեռու է, հոն չէ դացած , բայց դուցէ քաջընթացիկ մը կուուոյն վերջն իրեն ծանուցած ըլլայ . կամ դուցէ ինքն իր քաջ ու տեղեակ զօրավար ըլլալովը զիս մխիթարէ , դեռ յոյս մը տայ Արտաւազգայ վրայ : Բայց ինչ օգուտ , թէ որ Արտաւազգայ մահուան վճիռը տրուած է նէ : Արդարութիւնն ու վրէժխնդրութիւնն իրեն դէմ կը բողոքեն : Անիրաւութեամբ շատերուն արիւնը մտաւ , անոր համար վրէժխնդրութիւնն իր ետեւէն կ'երթայ , մահը զինքը կը հալածէ , մինչեւ որ զինք բռնած՝ լոյսը տեսնելէն զրկէ : Ըստ :

Արտաշէս իրեն պատասխան տուաւ . Ողբերդ , Սաթիսիկ , վրանիս եկած չարեաց օգուտ չեն կրնար ընել : Հապա ինչո՞ւ մշտնջենաւոր ողբերու մէջ ես . ինչո՞ւ միտքդ խոր տրամուլթեան մէջ թաղեցիր , եւ ոչ բրածդ գիտես . չես գիտեր որ ժամանակն ամէն ցաւոց ալ բժիշկ է . չես գիտեր որ համբերութիւնը յուսոյ ընկեր է . աչքդ սրբէ , ցաւոց խորհուրդները փարատէ . խռովեալ միտքդ տանաազօսէն դուրս հանէ : Արտաքոյ կարգի հոգերդ զքեզ պատերազմի անգէտ կը ցուցնեն : Սպասէ , վերջը տես , դուցէ կարծածէդ տարբեր կ'ելլէ :

Ո՛հ , ինչպէս կրնամ սպասել , ըսաւ Սաթիսիկ , ինչպէս կրնամ աչքս սրբել ու չորցնել . սրչափ ժամանակ է որ առանց մխիթարութեան ու անյոյս կեցած եմ . ո՛հ , վճիռը տրուած է : Դիք վրէժխնդիրք , երթալով միտքս աւելի կը հաստատուի , երազս կը ստուգուի . գիտեմ որ մեծ չարեաց սկիզբ է Արտաւազգ , ու մէկալ եղբարցն ալ յորդորիչն է . դուն ալ կ'ուզես որ ուրախ զուարթ ըլլամ : Իրաւամբ է , Արտաշէս , լալս . թէ որ ընելու կորստեանս համար չողբալու ըլլամ՝ ըսէ ինձի , ինչ բանի վրայ լամ : Ժամանակը պարտապ տեղ կ'անցնի , ինձի համար չարչարանքն երբէք

պիտի չանցնի. վայ ինձի, ողորմելի եմ. արդեօք կար-
ծածո երեւակայութիւն է. չլեմ, չտեսնեմ մահու-
նէ ետեւ զԱրտաւազդ: Աւագոյն է որ երկինք շան-
թով զիս ջնջէ, երկիրը բերանը բանալով զիս կլէ:
բայց...: Ի՛նչ ընեմ, եթէ լռելու եւ չողբալու ըլլամ,
անգութ եմ, եթէ լալու ըլլամ՝ ձանձրացուցիչ կ'ըլ-
լամ: Ո՛հ չարչարանք, ս՛հ վրէժխնդրութիւն, ս՛հ Ար-
տաւազդ: Ո՛րդեակ, եկուր, խաւարը փարատէ, որը
լուսաւորէ: Ի՛նչ կերպով, ս՛ր ուխտերով կրնամ...:
Մտածելով միայն կը սոսկամ: Փախչի, երթայ, հե-
ռանայ ինձմէ ցաւը, մենութեան մէջ, անապատ եր-
թայ ու պահուրտի, գուցէ քիչ մը կը հանգարտիմ:

Արտաշէս աս խօսքերուն վրայ քիչ մը լուռ կեցաւ
եւ ձեռքովն երեսը ծածկելով՝ դէմքին այլայլութիւնը
գոցել ուզեց, ու ձեւացրնելով՝ առանց լսած գուժին
վրայ նշան մը տալու՝ այսպէս ըսաւ. Քու ողորմելու-
թեանց, երկու աղէտիցդ վրայ կը ցաւիմ, Սոթի՛նիկ,
նախ քու անձինդ ու երկրորդ Արտաւազդին վրայ ու-
նեցած ցաւիդ համար կը շարժիմ. սիլ չեցաւիր վրագ,
չէի ուզեր վիճակդ տեսնել, բայց տեսնելով՝ մշուշ ին-
կաւ աչքս, գրեթէ ես ալ տղու մը պէս չեմ կրնար
աղբիւրներուս ակունքը բռնել. բայց չէ. աս ինչ է, միշտ
յաւիտենական ցաւոց մէջ պիտ'որ ըլլայ հոգիդ. կոյր
սոխակին պէս արտասուակից լուսաւորներուդ բաղձանքն
երբէք պիտի չկատարուի: Աշտերու մէջ թաղուած՝
միշտ հեռաւոր որդւոցդ երեւակայեալ մահուան վրայ
կը մտածես, ու ետեւէ ետեւ սոսկալի խորհուրդներ
ծովու ալեաց պէս վրայէ վրայ գալով՝ կը նեղեն կ'ըն-
կրղմեն զքեզ: Տրտունջներէն յոգնած ըլլալով՝ դեղե-
ցիկ ապագայէ մը յոյսդ մի կտրեր: Բողբովին անցաւ
անտրտում վիճակ մը մարդկան չէ շնորհուած, այլ աս-
տեղներուն ընթացքին պէս, ուրախութիւն ու ցաւ
միշտ շրջանի մէջ են: Բայց բաժներուս միտ դիր, սեւ
գիշերը միշտ չիտեւեր, յանկարծակի կը փոխուի, ան-

տարակոյս մութ ամպն օր մը կը ցրուի . կու գայ լուսաւոր օրը, կը հասնի բարութեանց լուսմը :

Արտաշէս իր ըսածներուն ինքն ալ չէր հաւատար, մանաւանդ որ հիմա նորէն բանակէն մէկը գալով ու իր ըսածները դարձեալ ականջը թնդացրնելով, անդամոցը վրայ դողդողում մ'ինկաւ : Արքայ, ըսաւ բանբերը, Հայոց բանակէն կու գամ, պատերազմը չմընցած՝ լուր տալու եկայ : Գիտե՛մ որ դուժաբեր բլալը գէշ բան է, բայց յանցանքն աւելի մեծ կ'ըլլայ, թէ որ լուելովս՝ հասած թշուառութեան օգնութիւն չըլլայ : Մեծ չարեաց սկիզբ երեւցող պատերազմին ժամանակը մօտենալով, երբ որ ալ մութն օգեղէն տաճարը չէր պատեր, թշնամեաց բանակը հայադնդին վրայ ինկաւ : Ո՛հ, ինչ օր էր անիկա, արքայ, կը դողամ, կը սարսիմ, ձեր վշտերը կը դռշակեմ . անոր համար ինչպէս խօսքով մը պաշտօնս լմընցրնեմ, ու սրտերնիդ չվիրաւորեմ : Հայոց բանակը մինչեւ Բասենայ հովիտը մըլուեցաւ, բայց ասով իրենց բանը չմընցաւ : Հոն Արատաւզդ ալ վրայ հասաւ, բայց . . . :

Ի՛նչները պատմութիւնը շուզեց յառաջ տանիլ : Ասոր վրայ Արտաշէս ալ սկսաւ կասկածիլ, բայց հողի առաւ, վատաստութիւն չըրաւ : Ի՛նչ ըսաւ, ես ալ պիտ'որ սկսիմ դողալ . ո՛յժ, զօրութիւն, Արտաշէս . կրկին յաղթուելով՝ շոտակալու, շատ թագաւորական արիւն ալ թափուելու բլայ՝ չվհատելու է : Չափազանց քաջաստութիւնն ալ գովեստի անարժան չէ, ինք իրեն դէմ կռուիլը, վշտաց դէմ դնելը, այնչափ սաստիկ ահ ու դողի մէջ՝ ինք զինքն անյաղթ անվկանդ ցուցրնելը՝ մեծ առաքինութիւններ են, մանաւանդ թագաւորի մը : Բայց ո՛հ, կամացս դէմ ո՛յժս կը կտրի . ո՛հ, ո՛հ, ես ալ սոսկացայ, մէկէնիմէկ բոլոր ոսկրներս մէկտեղ կարծես թէ խոցուեցան . վիրաւորուած սրտիս գութ ունեցող մը չկայ . ո՛ւր էք, սիրելիներ՝ հին զօրավարներս, ո՛ւր ես, արի Սմբատ, լսէ ձայնս հեռուէն,

գնա, պատժէ թշնամիները, գոնէ գնա խորհուրդ
տուր մերիններուն, միայն ներկայ գտնուէ: Գուն ալ,
Արտաւազդ, արդեօք ո՛ւր ես, եղբարցդ օգնեցիր ար-
դեօք: Արտաշէս հազիւ թէ լոյս կը նշմարէր, աչուքնե-
րը շացան, մութը պատեց զանոնք, կը դողէր, կ'իյնար.
մէկէն շունչ առաւ. Աս ի՛նչ է, բռաւ, ես ալ վատերէն
մէկն եմ. երկու լուսաւորները բացաւ ու Արտաւազդին
մօտիկնալը տեսաւ: Ի՛նչ կը տեսնեմ, բռաւ, Արտա-
ւազդ կու գայ, ուրախ զուարթ է անգութը, մերձաւո-
րաց վտանգն ու մահն եւ ոչ կը մտածէ, մանաւանդ
թէ կարող ըլլար նէ՛ ինք իր ձեռօքը եղբարքն անե-
րեւոյթ կ'ընէր. յաղթուելով՝ վատը փախած պիտ'որ
ըլլայ: Հո՛ս եկուր . . . չէ, շուտ պատերազմի, օգնու-
թեան գնա:

Արտաւազդ եկաւ Արտաշէսին քովը կեցաւ, քիչ
մը անշարժ հօրն երեսը նայեցաւ, թէպէտ եւ զուարթ
կ'երեւար, բայց սրտին ներքին դառնութիւնն երկայն
ատեն չէր կրնար ծածկել: Աերջապէս Արտաշէսին ու
Սաթիւնկան՝ Զիս մօտիկ ըրէք, բռաւ, եւ աժգոյն երես-
ներնուդ՝ վարդի գոյն տուէք, ուրախութիւնն ու սուգն
իրարու մերձաւոր են, մէկէն մէկալին անցումը՝ վայրկե-
նական բան մըն է: Ուտի հիմայ ձեզի գեղեցիկ բաներ
ունիմ պատմելու, բայց հարկ չկայ որ այլայլէք, ան-
համբերութեամբ մանրամասն պատմութեանս ու վեր-
ջին խօսքիս մտքին սպասէք հանդարտելու համար,
վասն զի ստոյգ ուրախութիւնն՝ իրօք ու արտաքուստ
ալ յայտնուելու համար, երկայնբանութեան հարկա-
ւորութիւն չկայ: Արճ կտրելու համար՝ վերջի ատեն-
ներն ես ալ բանակ հասայ, պատերազմը սաստկացուցի.
եւ վերջապէս Արամազդայ հրեղէն շանթովը թշնամի-
ներէն շատերը մոխիր դարձած, եւ եղբարքս կենդանի
տեսայ:

Ո՛հ սուտգրուց. Ե՛րկինք, զԱրտաւազդ ինչո՛ւ կեն-
դանի կը պահէք, ինչո՛ւ անոր մութութիւնները չէք ջն-

ջեր: Յայանի բան է, հպարտն ու նախանձոտն ուրիշին պատիւը կը գոցէ. չէ, ինչ կ'ըսեմ կը գոցէ, մանաւանդ թէ ամէն տեսակ օտարին քաջութիւնը կը պատմէ, երբեմն ալ որչափ որ կրնայ 'նէ կերպով մը կը մեծցընէ. բայց, որուն կու տայ. օտարին՝ չէ 'նէ անձին. անձին կը սեպհականէ. օտարին փառքը գողնալէն ետեւ, զանիկա գետինն ալ կը զարնէ, կ'արհարմնորհէ: Այսպէս ալ հիմակ Արտաւազդ ամէն երեւելի գործք իրեն սեպհականեց, Սմբատին անունն եւ ոչ յիշեց, որ անիկա . . . :

Արտաշէս ալ դեռ ստոյգ կամ կատարեալ բան լսած չըլլալով, որդւոյն բաճներուն վրայ չէր կրնար տարակուսիլ, թէպէտ եւ Արտաւազդին բնութիւնն իրեն անձանօթ չէր. ուստի որդւոյն փառաց, իրեն անկէ ծագած պատուոյն կը բաղձար, անհամբերութեամբ երկայն ու ամբողջ ստորագրութիւն մը կ'ուզէր: Ո՛վ սիրելի Արտաւազդ, բռաւ, քու դարձդ եւ պատերազմի նորանոր ու հաճոյական լրերը մեզի նպաստաւոր են: Եւ թէպէտ երեսէն սրտին զաղտնիքներուն մեծ մասը կ'երեւայ, բայց ամբողջն՝ ոչ երբեք: Ուստի աս ալ ըսէ որ արդեօք մեր ժողովուրդն ալ աներկիւղ ու թշնամիներէն բոլորովին ազատ է, որով մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

Բողբովին ազատ են, պատասխանեց Արտաւազդ, որովհետեւ թշնամին՝ իմ եւ Սմբա . . . ձեռքով սահմաններէն դուրս մղուեցաւ: Ըսաւ, ու խօսքը դարձուց: Բայց Արտաշէս ալ իմաստուն էր, բանն իմացաւ, եւ զԱրտաւազդ ազատ չթողուց: Ինչո՞ւ մէկ խօսքով կը լմնցընես, ըսաւ. պատմէ, Արտաւազդ, ինչպէս քու քաջերովդ մէկտեղ յաղթութիւնը քու կողմէ դարձուցիր. ո՛վ ինկաւ, ո՛վ կենդանի մնաց. արդէն զիտես որ հեռու գանուողը ներկայ գանուողէն ամէն բան մանրամասն կ'ուզէ լսել, եւ անով կարծես թէ սրտին մէջ աւելի հանգստութիւն կը զգայ: Ինչո՞ւ երեսիդ գոյնը կը փոխես, չէն ուզեր պատմել, պատճառը չեմ հար-

ցրներ, իշխանութիւնս չեմ բանեցրներ, հպարտ լու-
թեանդ կը զիջանիմ, գէպքերը կ'երեւակայեմ, կ'ու-
ղես նէ՛ լուէ, կը բաղձաս նէ՛ ել գնա, ուրիշէ ալ կրնամ
լսել :

Ո՛հ, ըսաւ Արտաւազդ, հառաչեց, երեսն ամօթով
գունաւորեցաւ, սիրտը լեղումով լեցուեցաւ : Քայց ինչ
կրնար ընել . ձեռքէն ինչ կու գար : Արանի՛ քեզի, ը-
սաւ Արտաշէսին, երջանիկ ես, հայր, որ այնպէս զքեզ
կը զսպես, բարկութեան սանձը ձեռքդ է, վրադ մնու-
թիւն չիտիրեր . բայց ապահով չեմ . թէ որ դուն ալ իմ
տեղս ըլլայիր, անտարակոյս մնութեանս (իրեն պար-
ծանք կը սեպէր) ծառայ կ'ըլլայիր, եւ հիմակուան զի-
ջանող բերանդ կը փոխէիր : Արտաւազդ ըսածն իր վրայ
փորձած էր . վասն զի երեւելի բան կ'ըլլար ու սրտի
մեծ հաճութիւն՝ թէ որ մարդն ըստ կամի ուղած ա-
տեն զինքը չարչարող մնութիւնը կարող ըլլար զսպել
ու իր ազատութեան դառնար . բայց ափսոս որ բանն
արմատանալէն ետեւ՝ խլելն անկարելի կ'ըլլայ, մանա-
ւանդ թէ անոր հակառակ դործելը՝ մարդուն մտայ
գէմ կ'երեւայ, եւ նոյն իսկ մնութիւնը զինքը չարչա-
րելու ատեն՝ մարդն իրեն աւելի հպատակ կ'ըլլայ ու
զանիկա կը յարդէ : Արտաւազդ՝ Բերնէս լսելու բաներդ,
ըսաւ Արտաշէսին, ուրիշէ մը լսէ, եւ ճշդիւ իմանալու
համար ծառայէ մը, բանրերէ մը լսէ : Ասոնք ըսաւ ու
թողուց գնաց, աներեւոյթ եղաւ :

ԱՐՏԱՇԵՍԻՆ սիրան ուրախութեան ու խոր տրամու-
 թեան մէջ կը ծփար: Յաղթութիւնը մենք ստացանք,
 կ'ըսէր, որդիքս հինգն ալ ազատեցան. բայց ան Ար-
 տաւազդ՝ յանդուգն է. ո՞ր դիտէ իր կամ մեր գլուխն
 ինչեր պիտի բերէ: Ստոյգ է որ քաջ է, եւ անոր համար
 ալ պատերազմի ատեն՝ երկրորդն ինքն եղած պիտ'որ
 ըլլայ, բայց պատիւն ուրիշին տրուելով ան բարձրամիտ
 կրնայ դիմանալ: Չէ, չէ. շատ կը վախնամ. երիտա-
 սարգութիւնն անդգոյշ է, մարդկային դիպաց եւ բախ-
 տին փոփոխ ըլլալը չիգիտեր, փորձ չէ. հաւատարիմ
 շրթանց շահաւէտ խորհուրդն անհաճոյ է իրեն: Աս
 մտաց վրայ եղող երիտասարդ մը՝ շատ անգամ օգ-
 տակարն անօգտին հետ կը շփոթէ. զինքն ուղղել ու-
 ղողը՝ բռնաւոր կը կարծէ. իրեն օգնել բաղձացողն՝
 անազորոյն կը կանչէ . . . : Արտաւազդին կենաց վրայ
 կը կասկածիմ. պատերազմի մէջ չմեռաւ, բայց կար-
 ծեմ թէ ես՝ իր կեանքն ուզողն, ես՝ զինքն այնչափ
 սիրողը, զանիկայ ի մահ պիտի մատնեմ, վասն զի ան-
 շուշտ՝ Սմբատէն չէ նէ, ուրիշ մէկէ մը իր սրտին դառ-

նութիւնը պիտի հանէ : Ա՛ռ զէի , ըսաւ Արտաշէս , պատերազմին բովանդակ դէպքերը լսել , եւ այնուհետեւ գուցէ Արտաւազդին սիրտն եղանակաւ մը կրնայի քաղցրացնել : Ասոր համար պատերազմի մէջ գանձուղներէն մէկը կանչել տալով՝ իր , Սաթիւնկան եւ ուրիշներու առջեւ ամէն բան պատմել տուաւ : Պատմողը՝ Պատիպատ խօսքերը կը թողում , ըսաւ , եւ ահաւասիկ ձեզի երկայն ու տեղնիտեղ կը պատմեմ . եւ այսպէս սկսաւ :

Երբ որ գեռ նոր արեգական պայծառ շողն աշխարհքիս շորս կողմը կը տարածուէր ու երկիրը կը լուսաւորէր , ես՝ որ թշնամիներէն բռնուած ու փախչելով ազատութիւնս գտած էի , բարձր տեղէ մը բոլոր ընդարձակ դաշտին մէջ եղած բազմութիւնն աչքիս առջեւն ունէի : Զօրքը շատ գնդեր բաժնուած՝ սաստիկ կը կռուէր . Տիրանեան գունդը մէկ կողմն ու Մաժանեանը մէկաւ կողմը վերջին ճիգերնին ի գործ կը դնէին . մէկաւ քաջաց գնդերն ալ մէկը հոս , մէկը հոն թշնամւոյն հետ ոտք ոտքի դալով , Հայրենեաց սիրոյն համար մեռնիլը քաղցր է կ'ըսէին , եւ ստուգիւ վերջին շունչը կուտային . բայց մէկէն արի քաջ Արտաւազդը հասաւ ու կռուոյն դէմքը փոխեց : Ասոր տեսքը միայն բաւական էր նորէն զօրաց ոյժ ու խրախոյս տալու . ասոնց միտքը , երեւակայութիւնն ու կենդանութիւնը կրկին վառեց , ու յաղթութիւնը նորէն տարակուսի մէջ խոթեց . բայց թշնամեաց կողմը՝ չեմ գիտեր ո՞ր հզօր պաշտպանը կար , անոր համար արքայորդիք դարձեալ վտանգի մէջ մտան : Նոյն ատեն հարաւային հայազունդ մ'ալ հեռուէն երկինքէն խրկուած կ'երեւար , ու ծովու ահագին ալեաց պէս կանաչ հարթ ծովը ծածկել կ'ուզէր . զօրավարն առիւծ մըն էր , եւ թէպէտ ծեր էր , բայց երիտասարդի պէս կը կռուէր , երբ որ երկասյրի պողովատիկը կ'իջեցրնէր՝ կը գանէր , կը վերաւորէր ու անմիջապէս կը մեռցրնէր : Իր քաջութեան համեմատ հասակ ալ ունէր , առաքինի , սպիտակալի , գեղեցիկ աշուրներով ,

որոնց վրայ արեան նիշ մը՝ ոսկւոյ վրայ ու մարգարտի մէջ փայլող գրազոնտիկոնի պէս կը շողար: Մարմնով արագ ու աջողակ էր, եւ վերջապէս պատերազմի մէջ անյաղթ՝ ծաւի աչքով Աթենասայ կը նմաներ: Ատոր՝ Սմբատայ կողմանէ կռուոյ դաշտը քաջ մը դալով, “Հայք ու Հռոմայեցիք, լուռ կեցէք, լուռ մենք ըստ բնականին ազատութիւննիս պաշտպանելու եկանք, իսկ դուք կոտորածն երկընցընել կը բաղձաք: Գիտցէք որ դորձք մը գլուխ հանել՝ մտածելէն շատ դժուարին է: Ուստի ձեռք զառնելէն յառաջ՝ եկէք զմեզ բարեկամ ունենալով՝ տեղերնիդ դարձէք, մենք ալ անաշխատ ազատութիւննիս վայելենք:”

Գոմեա՜ իր շողուն վահանին վրայ յեցած՝ եւ ոչ պատասխան տուաւ: Ան ատեն պատերազմն առջինէն սաստիկ սկսաւ, ընկեր ընկերի վրայ վազելով եւ իրարու քովէն անցնելով, իրարու՝ զինուց դառն ճաշակն առնել տալով, շատը նոյն դաշտը խոր քնոյ տեղ կ'ընտրէր: Աս պարագաներուն մէջ, Արտաւազդ ու Սմբատ ալ իրենց զօրքերը յառաջ քշեցին եւ այսպէսով երբեմն ասոնք, երբեմն անոնք կը զօրանային: Երանի թէ հոն չըլլայի. ո՛հ, ախանատես եմ, եւ ոչ թէ ուրիշէ մը լսած, անոր համար բերանս յառաջ չ'երթար: Ի՛նչ, մանաւանդ թէ յաջող ելքը մեր կողմն ըլլալուն՝ պատմելու եմ. բայց այսչափ ողորմելի դէպքերէն որք յառաջ որն ետքը պատմեմ. արդեօք հարկ կայ որ երկինք հասնող մեծ փոշոյ ամպը նկարեմ. արդեօք թշնամեաց ասդին անդին պառկած դիակները, կենդանի արեան վազող վտակները, զէնքերուն կտոր կտոր ըլլալն ու հնչելով դաշտի վրայ ու երկինք թռչելը կրնամ յառաջ բերել: Ո՛հ, սոսկալու բան:

1. Խորենացին կը գրէ որ առասպելը՝ Գոմեախանոս կայսեր իշխանութիւնն անձնաւորելով՝ սլլարանութեամբ մը աս պատերազմին մէջ իր կողմանէ գտնուող զօրագլխին անունը տալու տեղ՝ զանիկայ Գոմեա կ'անուանէ:

Ասոր համար աս սարսափելի տեսարանը Գոմետ տեսաւ նէ, իր զարհուրելի սուրբ շողացընելով՝ ուրիշ կողմ մը վազեց ու իրեններուն խրախոյս տուաւ: Բայց Սմբատ ու Արտաւազդ ալ չդանդաղեցան, լուսաւոր զէնքերնին առին, ու թշնամեաց բանակը ձեղքելով՝ հոն անցան, ուր որ հայագունդը մութ անդունդը կը խաւրէր ու կը խաւրուէր, եւ ահագին ձայնով մէկը մէկալին քաջալեր կու տար ու կ'ըսէր. Ախրաւորէ, խիստ հարուած սուր, մեռցուր: Ստուգիւ սարսափելի էին վէրքերը, վիշապի մը բերնէն եղած վէրքերէն աւելի: Երբ որ հայագնդին ձախ կողմը յաղթուելու սկսաւ, Սմբատայ ու Արտաւազդայ քաջութիւնն երեւցաւ, վասն զի թշնամեցն աջ թեւը բեկանելով՝ ձախին վրայ թռան եկան, պոռացին, սարսափեցուցին, Ընկերք, ըսին, թէ որ հոս ալ դէմ չէք դներ, Հայոց դահը վտանդի մէջ կը խոթէք. ասով ամենուն ծոցը հոգի զարթուցին, իրենք ալ յաղթական նիզակնին պարսատիկի պէս դարձընելով ու նետելով՝ գլուխ ու կեանք մէկէն կը հնձէին ու բոլորովին կ'եղծանէին:

Վ երջապէս մնացածը փախչելու սկսաւ, ես ալ ուրախութենէս հոս եկայ. թշնամեաց փախուստը տեսայ, ազազակներն ու ողբերը լսեցի, սահմաններնէս անդին մղուելով՝ աչքէս աներեւոյթ եղան: Այսպիսի զօրավարներ պէտք է ունենալ, վտանգներու մէջ արի, եւ ժողովրդեան անմիտ երկիւղը մերժող, որոնք աղէկ վիճակի մը հասնելով՝ ալ աւելի մեծ փառքի չեն յանդրգնիր, որպէս զի չարագունին չհանդիպին, եւ վայելած բախտերնին ալ չկորսընցընեն:

Արտաշէս ասոնք լսելէն ետեւ՝ փառք տուաւ: Բիւր գոհութիւն, շատ փառք տուէք Երկնից, ըսաւ, որ մեր ամբարտաւան թշնամեաց հետ կռուեցաւ, յաղթեց ու երկիրներնէս հանեց: Բարձրավիզն իր վրայ շատ վստահանալով՝ յանդուզն կ'ըլլայ, առագաստները տարածելէն յառաջ՝ ծովուն նոր կերպարանքը չիզններ, ան-

կասկած, առանց մտածելու յառաջ կ'երթայ, եւ անոր
անհաւատարմութեան չինայիր. ինչ օգուտ, ինչ շահ
նաւահանգիստ դառնալ ուզել՝ անկէ հեռու եղած ա-
տեն, կամ անխելքութեամբ վշտերու մէջ իյնալէն ե-
տեւ՝ բաղձալ որ ինկած չըլլայ: Հռոմայեցիին եկաւ, իր
զօրքերով ձորերն ու դաշտերը ծածկեց, աղբիւրները
չորցուց. ան օրը Հայոց երջանկութեան աստղը մթնու-
ցաւ, վերջին օրը հասած երեւցաւ: Թշնամին՝ բոցեր,
շղթաներ ու վայրենի մահ սպառնաց, անոր զարհուրելի
ձայնէն Հայր դեղնցաւ. բայց յանկարծ բախտը բուպէի մը
մէջ ամէն բան փոխեց, ու ան արհաւիրքը՝ մութ ամպի
պէս ցրուեց: Փախաւ անիրաւը, զարհուրեցաւ, սոսկաց
Հռոմայեցիին: Հայերը դիք չէին, աստղներու եւ երկնքի
դէմ կռուելու պէս պատերազմելու չէին երթար. զօր-
քը քիչ, բայց հողին շատ էր: Ո՛հ, պոպիսի մեծ ու
բախտութեան դէպք, յոյս ու հաճութիւն տուող օր
մը երբեք ծագեցա՛ւ: Թող անձանօթ աշխարհքիս
բնակը, նաեւ երկրիս ծայրն՝ աս համբաւը, մեր մեծ
ցնծումը լսէ:

ԱՐՏԱՒԱԶԴ Տօրմէն ու արքունիքէն բաժնուելէն
 ետեւ՝ քիչ մը զբօսանք կը փնտռէր, միտքը խռոված
 ու կիրքն ելած ըլլալով՝ զանանք խաղաղընեւ զիւս
 մը գտնել կ'ուզէր. բայց աւելի բորբոքելու առիթ
 գտաւ: Մաժան իր եղբայրն՝ իրեն ու Տիրանին գէմ
 որոգայթ մը լարելով, զերենք դաւաճանել կ'ուզէր,
 բայց չյաջողեցաւ: Արտաւազդ ասիկա լսելով՝ վառե-
 ցաւ, իր տայք ու եռացող խորհուրդներուն մէջ քիչ
 մ'ատեն շփոթած կեցաւ, վասն զի բոլոր իր մտու-
 թիւնները գլուխ վերցուցած՝ մէկը մէկալին յաղթել
 կ'ուզէր. բայց վերջապէս Մաժանին դաւաճանութեան
 առթոյն ռար յաղթեց զլեց: Ո՛հ, ինչ թոյն էր անի-
 կայ: Արտաւազդ՝ թէ որ նոյն ատեն Մաժանը գտնելու
 ըլլար, կը յօշէր կտոր կտոր կ'ընէր: Բայց որովհետեւ
 Մաժան տուն գացած էր, ինք Տիրանը գտնելով՝ իր
 մի միայն բարեկամը, անոր հետ բանն եփեց. Թօղ,
 ըսաւ, աս իրիկուն Մաժան Արտաշեսին ու Սաթինկան
 հետ տեսնուի, վասն զի ալ տեսնուելէք չունի:

Նոյն ատեն Մաժան ալ արքունիք հասնելով՝ Տօրմ
 առջեւն ելաւ. Ամենուդ ալ, ըսաւ, ձեզի՛ Արտաշէս,

Ստիժինիկ, եւ հոս ներկայ գտնուողներուն, Անիի Արամազդայ դից կամքն ու երկու ուրիշ դից խօսքերը, ասոնց գանդատանաց շղթան ականջս հնչելով, կ'ուզեմ յայտնել, ձեր դատաստանին առջեւն ալ կ'ուզեմ հանել: Երկու վերջինները՝ Մեզի դէմ եղած նախատինքը մեծ է ըսելով, նախ մահկանացուի մը դէմ կը սպառնային, Արամազդէն վրէժ կը խնդրէին. «Գահգդ նախատողին, պատիւդ ոտքի տակ առնողին ամբարտաւանութիւնը պատժէ, անոր յանցանքը պատուհասէ», կ'ըսէին. ասկից զատ մինչեւ հիմա նոյն մարդուն պաշտպան եղող դից դէմ բողոք կ'ընէին: Ամբաստանողաց խօսքերուն բովանդակութիւնն աս էր: «Ամէն շարիքներուն մանաւանդ մեծամեծ յանցանքներուն վրէժխնդիր ենք, արեգական լոյսը տեսնող ոճրագործներուն զարհուրելի ենք, դից դատաստաններուն, անոնց վճիռներուն դուշակ չէ նէ՝ տեղեակ ու կատարող ենք, աստուածներուն մէջն ալ յարդերնիս մեծ է, անուննիս Արէժխնդրութիւն ու Արդարութիւն է: Աս ինչ մեծ անիրաւութիւն է մեզի եղած անիրաւութիւնը, մենք ալ պատիւ չունինք: Աս անգամ ալ փախաւ, ո՛հ, պրծաւ որոգայթներնէս Արտաւազդ, խոյս տուաւ պատառող գաղանք, կորսուեցաւ աւարնիս, փախաւ յանդուզն մարդասպանը: Այ ամբարհաւաճ, երկինք բարձրացան խօսքերդ, դժոխք իջեցուցիր նախատաճներդ. գլուխդ շարժելով կը սպառնայիր, մտքիդ մէջ թշնամիներէն՝ ես միայն վրէժ կ'առնեմ, կ'ըսէիր. դուն մինակ եւ ոչ բան մը կ'ընայիր գործել. անհաշտ թշնամի ես մեզի, եղբայրասպան»,:

Այլ ըսի ես մտքէս ան ատեն, ուրեմն մեզմէ մէկուն կեանքը փտանդի մէջ է եղեր, բայց չեմ կարծեր. կենաց պահպանութիւնը բնական բան մըն է. միայն իրեն համար ապրողը կամ մանաւանդ ուրիշին վնասակար եղան՝ ինք լուսոյ արժանի չէ:

«Բաւական չեղաւ, կ'ըսէին, որ Արդաւանին իշխաւ»

նութիւնը ձեռքէն առիր, ճաշ ուտելու հրաւերին ապ-
երախտ գտնուեցար. պէտք է որ զիտնայիր թէ բա-
րիքն ու պարզեւը՝ որչափ մեծ է նէ, այնչափ աւելի
պարտաւոր կ'ըլլայ մարդ՝ երբ որ փոխարէն չար կը հա-
տուցանէ: Քու դրդելովդ, Արտաւազդ, անիկա շարա-
չար նախատուեցաւ. բայց նաեւ դուն ողորմելի ծերէն
ամէն բան յափշտակելով, վերջապէս ասկէ ծաղած
կռուովը, որուն պատճառը դուն էիր, Ախշապազդին իր
որդիներով մէկտեղ ջարդուեցաւ, եւ Մուրացան ցե-
ղին երեւելիները սրէ անցան: Ո՛հ, ալ չենք կրնար
համբերել, բարկութիւննիս իրաւամբ է, Արամազդին
առջեւն ալ չենք կրնար լռել. ալ մի յուսար զմեզ
հաշտեցրնելու, Գթութեան աղաչանքը չ'անցնիր»:

Ասոնցմէ ետեւ այսպէս շարունակեցին: «Դ՛նչ բրիւր
մինչեւ հիմա, Ա՛նահիտ, կ'ըսէին, ինչո՞ւ դեռ աս շա-
բազործին չորս կողմն առած՝ քովը կը կենաս ու կը
պաշտպանես, խորամանկ ես. ի՛նչ, նորէն կ'ուզես որ
մեր պատիւը նուազի: Բաւական չսեպեցիր անգամ մը
գթալով Արտաւազդին մահն արգելել, եւ Պարկաները
նենգեցիր: Արտաշեսին որդւոյն պաշտպանութեան հա-
մար աղեղ ունիս ձեռքդ, իրեն կը զգուշանաս, ան
մարդը՝ որուն միտքն ու կամքն ապականած է. դուցէ
խմաստութեամբ ու գթութեամբ կը գործեմ բեսս.
ուր է ուղիղ միտքդ, այսպիսի մէկը շնորհքի արժանի
է. ի՛նչ, ասկէ ետքն ալ կ'ուզես զանիկա ազատել. ոչ
երբէք, պիտի չկարենաս, ալ կարող պիտի չըլլայ փախ-
չիլ. հօրը բերանն ալ իրեն դէմ պիտի բացուի, քիչ
ժամանակէն արտեւանունքն ի յաւիտեանս պիտի գոցէ:
ս՛հ. չիզիտեր ողորմելին, որ Մասիսին բերանը բաց է ի-
րեն համար», : . . .

Ասոնք եւ ուրիշ այսպիսի խօսքեր թնդացին եկան
ականջս, Արտաշէս. բայց ինձի անակնկալ բաներ չէին:
Երթամ ես զինքը գտնեմ, եւ ձեր կողմանէ՝ բրած չա-
րեացը դարման գտնելու ստիպեմ: Իսկ դուք հարկ չկայ

որ ցաւերու մէջ ընկզմիք, յայտնի բան է որ շատ ան-
լուծանելի հանգոյցներ ունի մարդուս ողորմելի կեանքը,
զորոնք ցաւը երբեք չի կրնար քակել: Նոյնպէս աս կամ
ան մտածելն անօգուտ կ'երեւայ: Ասան զի շատ ան-
գամ մարդիկ մտքերնէն վեր բաներ կը խորհին, որոնց
արդիւնքն իրենց մտածածին հակառակ կը տեսնեն:
Ստուգիւ յանդուզն ու ամբարհաւած է մարդուս բաղ-
ձանքը, որ բարձր իմաստութեան յաւիտենական խոր-
հուրդները գուշակել կ'ուզէ: Գուք շահիէ դուրս հոգը
մեկզի թողուցէք: Ո՛հ երանի թէ, եւ բաղձանքս աս
է, գոնէ կամաց ու մեղմով գալարէ ձեր օրերը Պար-
կան, եւ Արտաւազդայ կորսրնցուցած խաղաղութիւնը
ձեր քովը միշտ մնայ:

Մաժանին շարած խօսքերն՝ Արտաշեսին ու Սա-
թինկան վրայ մէյմէկ կրակ ու բոց շանթերու պէս ին-
կան. մեկէն յառաջուան ուրախութիւնն ոչնչացաւ.
Մաժան ընթացքը խցէն դուրս ուղղեց, հայրն ետեւէն
գողգոջուն ու մեղմ՝ ձայնով մ'ըսաւ. Ինձի նայէ, Մա-
ժան, գնա Արտաւազդայ ըսէ որ . . . :

Ի՛նչ ըսեմ, հարցուց Մաժան, եւ պատասխան
չառնելով՝ բաժնուեցաւ գնաց. բոյց մէյ մ'ալ երեւ-
ցաւ . . . :

ՈՍԿԵՃԱՃԱՆՉ զնդէն լոյսն ելաւ շեղաւ, երեք եղբարց որսն ալ սկսաւ: Տիրան տխուր դէմքով ու խոցուած սրտով մը՝ Ո՛ւր է, կենդանի չկայ, ըսաւ: Իսկ Արտաւազդ իր երկայն նիզակովը ՂՄաժան պառկեցընելէն ետեւ՝ Աւասիկ մեր վայրենի գազանը, պոռաց եւ ամենեւին չայլայլեցաւ: Ո՛հ անագորունութեան. երկուքէն ո՞րն էր վայրենին: Տիրան որչափ որ աս գործքը կը մտածէր նէ, ներքին սարսափ մը կը զգար, բայց արտաբուստ չէր ուղեր յայտնել. գրեթէ մինչեւ իրիկուն Արտաւազդայ հետ անէն հեռու պարտեցաւ. իր սրտին ցաւը, ներքին սոսկալի վէրքերն ու հօրն առջեւն ելլելու վախը՝ արբունիք մօտենալու թող չէին տար. բայց ի հարկէ պիտ'որ երթար: Վերջապէս Արտաւազդ զինքը ստիպելով՝ Տիրան, ըսաւ, ա՛յ դանդաղիլը պարսպ է, սեւաթոյր քօղ մը արեւուն երեսը ծածկեց, երկրիս խօսունն ու անխօսունը հանգչելու կ'երթայ. մենք մինչեւ երբ աս մթին տեղերը, թանձրախիտ անտառները պիտի թափառինք. տուն երթանք, Արտաշեսին, Սաթինկան երեւաննք. գործքերնուս ամենեւին կասկած չտանք: Ի՛նչ, տուն ըսածիդ պէս՝ գոյնդ փոխուեցաւ,

երեսդ պաղ քրտինք մը ծածկեց, դողալու սկսար: Ար-
դեօք յանցաւօր ես կամ ինք զինքդ յանցաւորի տե՞ղ կը
դնես: Յանցաւորը Մաժանն է, իր մահուան պատճառ-
ինքն է. նախ անիկա ուզեց մեզի հարուած հասցընել.
դնաց՝ զմեզ Տրայիանոսին մատնեց, մեծամիտը՝ դա-
զանասարտին ու մատնչին բաղձանքը չկատարեց: Չարա-
գործին գլուխը՝ երբեմն դեռ ինք իր կամքը չկատա-
րած՝ չարիքը կը կանխէ: Ի՛նչ, սպասելու էր որ անիկա
զմեզ տարտարոս խաւրէր. յարմար ժամանակը թո՞ղ
տալու էր. դեռ չսորվեցա՞ր, չե՞ս գիտեր որ ժամանակը
թռչելով՝ ներկայ յաղթութիւննիս ալ կրնար յափը-
տակել. դետի մը արագ հոսանքին պէս, օդի մէջ երագ
նետի պէս ժամանակը կը փախչի, գացած ճամբէն եր-
բէք ետ չիդառնար. անոր կորստեան վրայ եղած զըղ-
ջումը պատիժ մըն է: Ուրեմն սրտի մաշուկը թող, Տի-
րան. դուքէ ան ատեն սրտիդ ներքին ուրախութեան
զգացումն երեսիդ վրայ գոյն հեղու: Մի զարհուրիր,
տուն հասնելու բլլանքնէ՛ Արտաշեսին ազնիւ սիրան ես
կ'ամըքեմ, ես զինքը կը համոզցընեմ, այնպէս որ մեր
վրայ եւ ոչ փոքր շարութեան կարծիք մը կարենայ ու-
նենալ, կամ թէ որ ունի նէ, բոլորովին մերժէ. ես կը
հոգամ որ կեանքերնուս թելը փառօք շարունակուի:

Գիտես արդէն, Արտաշէս իմաստուն է՝ առանց
ամբարտաւանութեան, արդար է՝ առանց խտու-
թեան. բարկանալու մէջ՝ յամը, գթալու մէջ արագ է:
Միայն թէ դուն հիմակուրնէ փոխուելու ես, Տիրան, զը-
ւարթ բլլալու ես: Գիտեմ որ պատերազմի դաշտին մէջ
ամենէն քաջ զինուորն ալ կռուոյ սկսելու առաջին
նշանը տեսնելուն կամ ձայնը լսելուն պէս՝ կը տժգունի,
անոր դէմքին վրայ քիչ շատ տպաւորուած երկիւղը
վատութեան նշանակ կամ համարձակութեան պակ-
սութիւն մը չէ. բայց ասիկայ ալ հոս բաւական չէ:
Աղէկն աս է, Տիրան. դուն մէկտեղ մի դար, Արտա-
շեսին առջեւը մ'ելէր:

Բայտ. եւ ելան շիտակ արքունիք գացին: Աւասիկ հասանք, ըսաւ Արտաւազդ ան ատեն, դուն գործքդ դնա, խուցդ հանդարտէ, եւ մինակ ամէն բան կը շինեմ, երթան բարով:

Հիմա բոլոր բեռն Արտաւազդայ վրայ մնաց, բովանդակ յանցաւորութիւնն ինք իր վրան առաւ, ինչպէս որ գլխաւոր ոճրարարն ալ ինքն էր: Բայց որովհետեւ այսպէս վերջին բոպէն հասնելէն ետեւ գլուխն եկածն իմացաւ կամ գործքէն ետեւ սխալմունքը տեսաւ, չէր կրնար ետ դարձնել: Ուստի վրան վհատութիւն մը գալով՝ Ո՛հ, դիք, ըսաւ, մէկ լեռն ուսէս նետեցի, մեծագոյն մ'ինկաւ վրաս: Տիրանը քաջալերելու կը ջանայի, համարձակութեան ու ապահովութեան խորհուրդ եւ վստահութիւն կու տայի. հիմակ ես ալ սկսայ դողալ. ներս մտնելու, Արտաշէսին, Սաթիւնկան առջեւն ելելու ոտքս յառաջ չ'երթար: Ո՛հ, սը է՝ զորութիւն չմնաց: Շատ աւելի ոյժ կը կարծէի վրաս Տիրանին հետ խօսած ատենս: Յառաջագոյն աներեւոյթ երկիւղ մը ապագայ անյայտ աղետից զորութեամբ՝ զիս կը շարձարէր, հիմա ստուգիւ կենացս կորուստը կը սպառնայ: — Զիս սով կը ստիպէ կոր գործքերուս համարը տալու... ոչ ոք. ուրեմն ինչու առջեւնին ելեմ, զիս մատնելու... համար. քաւ, եւ մի լեցի: Անհաստատ լեռնաձեւ ալեաց վրայ նաւորը՝ զինք անհաւատարիմ ծովուն կը յանձնէ, որպէս զի զինքն ի կորուստ տանին. բայց նաւահանգստին մօտ խղղուիլը շատ մեծ դժբախտութիւն է: Ուստի քանի որ ապահով եմ՝ ինք զինքս աւսոնց ինչու յանձնեմ. չէ, երբեք երեւնալիք չունիմ:

Բայց աղէկ մտածէ, Արտաւազդ, կ'ըսէր ինք իրեն, լաւագոյն է որ դուն անձամբ եղբօրդ շարութիւնը մանրամասն պատմես, եւ ինք զինքդ արդարացընես, քան թէ փախչելով՝ զքեզ խայտառակ ընես. զքեզ դատապարտել տաս: Արտաւազդ՝ աօկէ ետեւ իր անձը քաջալերել սկսաւ: Սիրտս, ըսաւ, դուն կը դողան.

աս քու գողդ ինչ նոր ու անծանօթ ահ է: Գուն մի-
նակ մեծամեծ փոթորիկներու համարձակեցար, զանոնք
ոչինչ սեպեցիր, պատերազմներու զայրուցքը նուաճե-
ցիր, հռոմայեցի հրեշներն ահուգողի մէջ խոթեցիր.
հիմա գողալով քու գժբախտութեանդ վճռոյն կը սպա-
սես: Ո՛հ, ո՛հ, երբեք փառքս, անունս այսպիսի վտանգի
մէջ տեսնուած չէր: Բայց, Արտաւազդ, դուն քու
անձինդ հարցուր թէ արդեօք աս ըսածներդ վատի մը
խօսքեր չե՞ն, զարհուրելու նշաններ չե՞ն: Մտիր ուրեմն
ներս, պատմէ Արտաշէսին, պատմէ պատմութիւնդ,
մահուքնէ ազատիլդ, շողքորթէ: Մտիր, ներս, ներս,
գոչեց. եւ մէկէն Արտաշէսին ու Սաթիկան գտնուած
խուցը մտաւ. բայց բերանը յառաջ չերթալով՝ Ո՛հ,
Սիրելի հայր, ըսաւ, նորէն կը տեսնեմ զքեզ. կըցայ...
ազատիլ...: Ան օրուքնէն... թէ որ գիտնայիր...:
Ո՛հ, երկինք: Բոպէի մը մէջ հազար բան կ'ուզէի ըսել
քեզի, հայր. բայց չեմ կրնար, շրթունքս դանդաղ է,
խորհուրդներս կը կանխեն...:

Արտաւազդ աս վերջին խօսքերն ըսելով՝ ուզեց ցու-
ցընել որ իր ըրած չարագործութիւնն ակամայ է. քիչ
մը ետքն ալ՝ Յանցանք շունիմ, կ'ըսէր, կեղծելով թէ
ինք եղբորը ձեռքէն ազատեր է. եւ թէ ինքն ալ շատ
կը ցաւի, բայց այլազգ չէր կրնար ընել: Հայրը զինքը
լուեցուց, կամ թէ նոյն իսկ ինք այլայլութենէն լուե-
լով, Արտաշէս իրեն այսպէս պատասխանեց. Լուէ, կեղ-
ծաւոր, լուէ. արդէն ամէն բան լսած եմ. ինչպէս կըր-
ցար առջեւս ելլել, Արտաւազդ: Աս շարութիւնը միայն
պակաս էր քեզմէ: Երկու վկայ ունիմ քու գործքիդ.
զքեզ եւ քեզմէ զատ ամէն մէկը: Աւտիկ քու ար-
տաքին կերպարանքդ, գունատութիւնդ կը ցուցընէ:
Բնութիւնդ ինձի անծանօթ չէ. նախանձոտ ըլլալդ
ինձմէ ազէկ ոչ որ գիտէ: Զով անիծեմ, զքեզ՝ չէ նէ
մուրթիւնդ...: Այ ատելի ամբարտաւանութեան ըն-
կեր, ամենայն մուրթեանց արմատ, քեզի կ'ըսեմ քե-

զի, ո՛վ չար նախանձ. դուն մարդը կը մաշեցընես, ինչպէս որ ժանգը՝ զերկաթը. բաղեղան կը նմանիս, որն որ իր պլլուած յնարանը կ'ապականէ: Քեզի կ'ըսեմ, Ա՛րտաւաղդ, ըսածներդ պարապ խօսքեր են: Զքեզ անմեղ կ'ուզես ցուցընել: Հանդարտիլ երբեք չես կրնար: Յայտնի բան չէ՞ մի որ ի բնէ՝ մեզի հետ մէկտեղ կը ծնանի առաքինութեան սէրը: Աս սէրը յանցանքները զսպելու բաւական չըլլալուն պէս՝ անձը կը պատժէ, սիրտը կտոր կտոր կ'ընէ: Առաքինութիւնն երկնից պարգեւ ըլլալով, անոր դէմ գործողին՝ պատժոյ կը դառնայ: Չարագործաց ամենէն խիստ չարչարանքն, իրենց սրտին մէջ տպաւորուած (թէպէտ եւ իրենց կամացը հակառակ) արդարութեան ու բարւոյ դաղափարն է: Աւասիկ ըսածներս ճակտիդ վրայ դրոշմած կը տեսնեմ, Ա՛րտաւաղդ. եւ գիտեմ որ զարհուրած կեցած ես:

Հոս Արաաշէս իր խօսքը կտրելով՝ ամէն կողմանէ լռութիւն տիրեց:

ԱՐՏԱՀԷՍ՝ Արտաւազդին վրայ ի բնէ շատ սէր ունէր. Սաթինիկ անկէ շատ աւելի, անոր համար թէ մէկը թէ մէկալը զինքն ազատել կ'ուզէին. բայց Արտաշէս արդարութեան կողմը հակելով՝ երբ որ վճիռը տալու վրայ էր, մէկէն ի մէկ Արտաւազդ իր լուծեանէն արթընցաւ ու բերանը բացաւ, որով դատը երկայն ատեն անորոշ մնաց: Արտաւազդայ խօսակցութեան մէկ մասն աս էր: Արտաշէս, գիտցած ըլլաս որ անմեղ եմ: Աս է մեծ շարշարանքս ու կրած անիրաւութիւնս, որ խօսելու ազատ չեմ եւ անմեղութիւնս ցուցնելու թող չէք տար: Ստուգիւ, Սաթինիկ, մեծ ցաւ մըն է ասիկա սրտիս, խիստ արհամարհանք է զիս շարութեան դործիք կարծել: Եթէ զՄաթան մեռցընել ուզէի, դիւրին ճամբով, պատերազմի մէջ զինքն իր բախտին թող կու տայի: Բայց աս թեւը, Արտաւազդին ներկայութիւնը՝ պահեց որդիքդ, Արտաշէս: Ուրեմն այսպիսի միտք չունէի: Թէ որ զիս ջատագովելու սկսիմ, ամենայն ինչ տարակուսի մէջ կը մանէ, դուն նախ, Արտաշէս, դեմ կ'ելլես. թագաւորին աչքէն ելելէն ետեւ՝ անտարակոյս ամենուն ալ ատելի կ'ըլլամ: Ո՛հ,

հայր, յառաջուան սիրելի դէմքդ ինձի դէմ կը տեսնեմ, հիմա զարհուրելի կ'երեւայ: Գիտցած ըլլաս, սրբախօս վիճակը զիս չիդատապարտեր. անմեղ եմ:

Այրանի թէ, ըսաւ Սաթինիկ: Թէ որ յանցաւոր չես, կասկածները ցրուէ, ահագին ոճիրը վրայէդ նետէ. ուրիշներուն ու քու կերպարանացդ ցուցուցած ամբաստանութիւնները հերքէ: Բայց բան մ'ըսեմ քեզի, լռէիր նէ լաւագոյն կ'ըլլար, ամէնն ալ քեզի դէմ կը խօսին, դուն ալ խօսելով՝ աւելի յանցաւոր կ'ըլլաս. ուրեմն զիջիր, գուցէ խոնարհելովդ գթութիւն կը գտնես: Լռէ. մանաւանդ թէ խօսէ, բայց թողութիւն խնդրելու խօսքեր արտաբերէ. անշուշտ աս կերպով զքեզ կրնաս ազատել: Դուն աս վիճակիս հասար. իսկ Մաժան գնաց եւ ալ չիդառնար: Ո՛հ, ի՞նչ բրիբ, Արտաւազդ. զՄաժան խրկեցիր, որպէս զի դուն ալ անոր ետեւէն երթաս:

Սաթինիկ հոս զՄաժան յիշելով՝ անոր վրայ սկսաւ սղբալ: Ո՛հ, Մաժան, Մաժան, ըսաւ, դուն ալ վըշտացս առիթ պիտ'որ ըլլաս եղեր. քաշածներս վերջ չունին. կեանքս՝ ալ կեանք չէ. համատարած ծովուն շարեաց մէջն եմ, ուսկից ազատելու համար՝ ո՛չ առագաստ եւ ո՛չ լողալն օգուտ կրնայ ընել: Մաժան, քու բախտիդ ի՞նչ անուն տամ. թռչնոյ պէս մեղմէ փախար, եւ ալ դառնալիք չունիս. սուր ու արագ ընթացքով մը կարոնին նաւը, դժոխք իջար: Ե՛ս ալ երթայի, յախտենական բնակութեանս մէջ հանդէտի: Արտաւազդ, աւելի զիս, քան թէ զՄաժան մեռցուցիր: Ո՛հ, լուսոյ թշնամի դիք, զմեզ աս երկրէն ջնջել կ'ուզէք: Չէ, չէ, պահէ, Երկինք, պահէ զմեզ, Պղուտոնին տունը մի խրկեր: Մերձաւորներէն շատերը դացին, ետեւէն երթալիքն ալ վախնալով կը գուշակեմ, նորանոր տրտմալի նշաններ կը տեսնեմ: Արտաւազդայ վիճակը մտղի վրայ կախուած է. Արտաշէս հիւանդ ու անհանգիստ եղած: Չարեաց գումարը խախուտ ժայռուտ

լեռ մը կաղմած է. եթէ ժայռերն իյնալու ըլլան, ես ուր որ փախչիմ նէ, պէտք է որ տակը մնամ:

Ըսաւ. բայց Արտաշէս անոր ողբերուն միտ չգնելով՝ Արտաւազդ, կանչեց, ամենեւին տարակոյս չկայ որ ոչ զմեզ կրնաս խարել եւ ոչ ալ զքեզ: Անմիտ մարդու խելք է, մեծ յանցանքներու մէջ մնալով՝ ինք զինքն անկէ ազատ կարծել. կրնայ ըլլալ որ ժամանակ մը երջանիկ մնայ, բայց հանդիսա՝ ոչ երբեք: Աւրեմն խոստովանէ յանցանքդ եւ սիրտդ խաղաղցուր: Գուցէ կեանքդ ալ ինձմէ կ'ընդունիս:

Ստոյգ է որ կեանքը քաղցր է եւ լոյսը կորսնցրնելն ալ անհաճոյ, պատճախանեց Արտաւազդ, բայց մարդուն ընթացքն արդէն երթալով կը նուազի, ամէն փայլած թուփնիս՝ վախճաններնուս մօտեցող անոք մըն է. ծնանելուն պէս, մանկութենէ սկսեալ, օր ըստ օրէ մեռնելու կը սկսինք: Բայց աս ալ կ'ըսեմ՝ քեզի, հայր, զիս խաղաղութեանս մէջ թող, ես անմեղ եմ: Պատիւս մեծ վտանգի մէջ դնելով՝ քեզի ալ վնաս կ'ընեն, վասն զի թէ որ զիս ստիպելու ըլլաս . . . :

Արտաշէս՝ Արտաւազդին աս խօսքերուն վրայ շատ բարկացաւ. Ա՛յ սէզ, ըսաւ, ինչ, սպառնալու ալ միտք ունիս. քեզի տուած խոստովանութեան միջոցս չես ուզեր ընդունիլ. խարդախ ու խրատական կերպով մը մահուրնէ պրծիլ կը բաղձաս: Ինձմէ ինչ աւելի կրնայիր յուսալ: Այսպիսի մեծանճութիւն ո՛ւր կամ երբ ըտեցաւ. դուն յանցաւոր որդի ըլլալով՝ այնպիսի գթալից հայր մը կրնայիր գտնել, կամ այնչափ քաղցրութիւն կրնա՞ր մէկը քեզի ցուցնել: Թէ որ ամէն բժէ ալ ազատ ըլլայիր, զիս անգութ կարծելուդ՝ մահուան արժանի եղար:

Ասոնք զուցեւէն ետեւ ինք իրեն դառնալով, Թող, Արտաշէս, գթութիւնդ, թող, ըսաւ. վրէժ առ: Վրէժ, վրէժխնդրութիւն: Ա՛չ երբեք: Ինչ ընեմ, Ստի՛նիկ, թողութեան արժանի համարիմ աս ան-

դու թ գազանը, եւ իրեն ներելով՝ ես ալ անոր նմանիմ :
Մտածէ, կ'ըսէր Արտաշէս ինք իրեն, մտածէ, Արտա-
շէս, մէկու մը աչքին վրայ խաւար սրսկել ու կեանքէն
զրկել ս'ի կրնայ : Ամենայն դք, նաեւ անարդ ծառայ մը :
Իսկ կեանք տալն ու շնորհելն՝ աստուածոց եւ թագա-
ւորաց տրուած է : Ուրեմն ապրի . . . : Իսկ օրէնքները . . . :
Չանանք կատարել տուօլն ես չեմ մի . . . : Հայր մը իր
սիրելի որդին մտնայ : Շատերը մտոցան : Սիրտ, Արտա-
շէս, հիմա զթու թիւնը լուէ թող : Արտաւազդ մահա-
պարտ է, ուրեմն մեռնի . . . : Վերջապէս խստութեան
ձեռք զարկինք : Արքայազին արիւն թափել կ'ուզենք,
մանաւանդ թէ որդւոյ արիւն : Ինչ պիտ'որ ըսեն մեր
յաջորդները . Արտաշէս սիրտ չունէր, անդ թու թիւնը
արդարութիւն կը կարծէր . իր առաքինութիւնը՝ որդին
դատապարտելով՝ մտրութեան դարձուց . խիստ էր,
երիտասարդութեան արձակ սանձը չկրցաւ նուաճել .
չէր գիտեր որ իմաստուն երկրագործը հիւանդ ճիւղը
չուտ մը չիկտրեր, անոր վրայ երկայն ատեն ու շատ շաշ-
խատած՝ մէկդի չիզներ : Բայց ներքին սաստիկ զգաց-
մանս ինչ ըսեմ, Սոթիսիկ, Արտաւազդը դատապար-
տէ, կ'ըսէ : Արտաւազդ, գործքերդ ու խօսքերդ թողու-
թեան արժանի չեն, պէտք է որ մեռնիս, պատիժդ ան-
հրաժեշտ է : Վերը ըսած խօսքերս՝ գիշերուան ստուեր-
ներ են, այսպիսի խորհուրդներ նոյն իսկ դիքն ալ կրնան
խռովել : Պատիժդ ջնջելու ճար չկայ . յանցանքը դոր-
ժուեցաւ, պատիժն ալ մէկտեղ ծնաւ :

Արտաշէս իր անձին հետ այսպէս երկայն կռուելէն
ետեւ՝ վերջապէս Արտաւազդայ մահը վճուեց : Բայց Ար-
տաւազդ զինքը դարձեալ շարժեց եւ տարակուսի մէջ
խոթեց : Ուրեմն, ըսաւ Արտաւազդ, մահս կ'ուզես,
Արտաշէս : Թէ որ զիս օտար մը դատէր նէ, ինչ եւ
իցէ, բայց հայրս . . . հօրս դէմ չեմ կրնար բերանս . . . :
Դուն, հայր, դուն կեանքս առնես . դուն տուիր, ինչու
կ'առնես : Ո՛հ, սիրտս կը դողայ, անդամներս կը սար-

սին. արդեօք ի՞նչ բանէն . . . : Գլթացող մը չկայ. գոնէ
դուն գլթա, հայր: Սաթիւնիկ, դուն ալ սառեցար. եր-
կու դաղանի արցունքներդ ինծի օգուտ կ'ընեն. անա-
գորունութեան արցունք են քու կիներդ, Սաթիւնիկ.
ողրդ եւ ինծի չօգնելդ տեսակ մը խստասրտութիւն է:
Հայր, ալ տանիլ չեմ կրնար. բոլոր աշխարհքիս առ-
ջեւ, Հայաստանին մէջ, բարեկամներուս, հօրս ատելի
ըլամ: Յոյսերս ծաղկելու ատեն, կենացս դարունն ե-
կած ժամանակ՝ աշխարհքէս վերնամ: Անտանելի բան
է ասիկա, անդուլթ հայր: Աերջապէս պարապ է եղեր
ազատութեան յոյս, զուր՝ արտունջս, ոչինչ՝ բարկու-
թիւնս: Ո՛հ, ո՛հ, Արտաւազդ, կարելի բան էր որ այս-
պիսի բան գլուխդ դար, կրնար մէկը մտքէն միայն ան-
ցընել: Ի վերայ այսր ամենայնի պատահեցաւ: Շուտ
վճռէ, Արտաշէս. այսուհետեւ դուն ալ լռէ, Սաթի-
նիկ: Ես հիմակուրնէ կը շեջանիմ, բիւր անձկութեանց
ու նեղսրտութեան մէջ կը մաշիմ: Մարող կանթե-
ղի մը պէս, որուն անհաստատ ու դողդոջուն բոցը կէտի
մը վրայ կեցած՝ երբեմն կը բարձրանայ եւ դարձեալ
վար կ'իջնայ, իբրեւ թէ անհասճոյ ըլլայ իրեն տեղը թու-
ղուլ, նոյնպէս հոգիս ալ՝ ներկայ վշտերէն ճանճրացած
ու յոգնած կ'երեւայ: Ներքինն՝ արտաքինն ալ կ'այլայ-
լէ. ալ շրթունքս շարժել չեմ կրնար . . . :

Սաթիւնիկ իր սիրելի որդւոյն յուսահատական վե-
ճակը տեսնելով՝ ինքն ալ շփոթեցաւ, ու խնդրելիքը
չէր զիտեր: Ի՞նչ ընեմ, կ'ըսէր. ո՞ր կողմն ընտրեմ:
Արտաւազդ, չէս ուզեր որ վշտացդ վշտակից ըլլամ:
Աիրտդ նոյնը կը վկայէ: Չէ, չ'ըլար, Արտաշէս, ար-
դարութիւնը կատարէ, ինչո՞ւ կը դանդաղիս: Ես ալ
անոր պատժուիլը կ'ուզեմ: Չեմ ուզեր որ իմ անունս,
Սաթիւնիկ անունս՝ իրեն օգուտ ընէ: Թող իր արիւնն
եղբօրը համար տայ . . . : Բայց լաւազոյն չէ՞ մի որ չէ
թէ մէկ եղբօր մը համար, հապա ժամանակաւ՝ ամե-
նուս համար, հայրենեաց համար կեանքը տայ. կուռոյ

խոսութիւններէ զմեզ ազատէ, մեզի օգնէ, ինչպէս
որ քիչ մ'առաջ բրաւ: Ո՞ւր է ան յաղթութեան ու-
րախութիւնը. ուրեմն երազ էր անիկա. վայրկեանական
բարիք մըն է եղեր: Հիմա, Սատիինիկ, նորէն զլուխդ
ի՞նչ եկաւ: Ո՞՛հ, քիչ մ'առաջ նախանձելի էիր. Հիմա
ողորմելի, զթոյ արժանի: Ի՞նչ բախա, ի՞նչ անազո-
րուն աստուածոց վճիռ: Սատիինիկ, աս կրկին աղէտից
ինչո՞ւ արժանի եղար. ինչո՞ւ Երկնից բոլոր բարկութիւն-
ները քու վրայ թափուեցան: Երկինքին ուրախական
դէմքը յանկարծակի փոխուեցաւ. արդեօք Երկինքը նո-
րէն իմ ուրախութեանս պատճառ չիկրնար ըլլալ: Ո՞ր-
դի, Ա՛րտաւազդ, բախտը զմեզ բաժնէ նէ՛ դժբախ-
տութիւնս յաւիտեանս պիտի լամ: Բայց, Ա՛րտաւազդ,
կրնաս ըսել որ ինչ զարմանալի մարդ է Սատիինիկ. մէյ
մը կը տրանջայ, մէյ մը կը զթայ վրաս: Ես ալ դի-
տեմ ու կը զարմանամ որ զարնան անձրելը պարտեզ
մ'իջնալով՝ վարդը կը ծաղկեցնէ, շահպրակն անզարդ
թող կու տայ. թէ մէկը թէ մէկալը մի եւ նոյն տեղ
նոյն հիւթը կ'առնեն: Այսպէս իմ սիրտս ալ, փոփո-
խակի կ'ամբաստանէ, կը պաշտպանէ նէ, մի եւ նոյն
պատճառն է որ զինքն սխի ու զթութեան կը բորբոքէ:
Բայց վերջապէս վերջինը յաղթեց: Ուստի դուն ալ,
Ա՛րտաշէս, աս իմ իղձս հաստատէ. զթութիւնը քեզի
արժանի առաքինութիւն մըն է. խրատէ, թեթեւա-
պէս պատժէ եւ ազատ թող ողորմելին: Միշտ մեծ
կ'ըլլաս՝ թէ որ թողութիւն տալու ըլլաս: Արշալոյսը
ծագած տեղէն մինչեւ մարը մտած տեղ՝ քու համ-
բաւը կը տարածուի:

Մի յուսար, պատասխանեց Արտաշէս: Արտաւազ-
դին յանցանքը շատ մեծ է, որդւոյդ կամքը յամսո-
է: Անոր հայրը՝ ալ ես չեմ, մասնը չի մը վրայ չեմ
զթար, խարեբայի մը՝ որն որ անմեղ ըլլալը ստու-
թեամբ կ'ուզէ հաստատել, թողութիւն չկայ: Գոնէ
խօսքով մը խոստովանէր: Ինձի նայէ, Ա՛րտաւազդ,

կորստեանդ պատճառը դուն ես, հօրդ շարշարանքը կ'աւելցրնես, հիւանդութիւնը կը սաստկացրնես : Մարդկութիւնը կորսուած է, սրդիական դութն ու սէրը չքացած է : Ա՛լ բաւական է, բան պէտք չէ : Ա՛րամազդ, շանթերդ երկինք ի՛նչ կ'ընեն. այսպիսի մէկը չեն զարներ նէ, ուրեմն ինչո՞ւս կը ծառայեն : Սա՛թի-նիկ, այսուհետեւ Արտաւազդին ազատութեան համար խորհուրդ մի տար : Բարկութիւնս իրաւամբ է, դուն ալ պէտք է որ կամեցս անասս, մանաւանդ թէ իրաւունք տաս : Տեսար որ Արտաւազդ երբէք չզիջաւ, սխալմունքն ամենեւին չխստովանեցաւ, երթալով աւելի կը կատղի. ձեռքերնէս ազատելու բըլայ, դուցէ հիմակուրնէ չարագունի դառնայ : Թուրն ու սուրը պատրաստուի, գթութեան խորհուրդ մտիկ չեմ՝ ըներ, յամառը ջնջել ու աներեւոյթ ընել կ'ուզեմ : Թող սրդւոյս արիւնը թափուի, եւ ասով շատերունը խնայուի : Աարծեմ թէ մէկը չիզանուիր որ անասաւ Արտաւազդին վրայ դժայ, կամ թէ լուսաւոր ու պազպաջուն ազդիւրներէն արտասուաց կաթիլ մը թափէ :

Արտաշէս այսպէս որ խօսեցաւ, կարծես թէ Արտաւազդ կակրղցաւ : Մահունէ ազատելու համար կերպով մը իր յանցանքը խոտովանիլ ձեւացուց. եւ խաբէութեամբ հօրը կամբը կատարած ցուցուց : Արտաշէս, Սա՛թի-նիկ, ըսաւ, թող ներկայ չեղող բարեկամքն ու թշնամիքս ալ լեն, ա՛լ ես յաղթուած եմ, պէտք է որ զիջանիմ : Չեմ գիտեր որ յառաջուան կամքս ու միտքս դրածս կրնամ մէկը այլակերպել : Ի վերայ այսր ամենայնի նոյն Արտաւազդը չեմ, ա՛լ յամառ կամքս չեմ դաներ, ամէն բան վրաս նոր դէմք մ'առաւ, բայց սրչափ . . . : Ահիւ ու գողութեամբ լեցուեցայ, չեմ գիտեր թէ սր աստուածն աստուածներէն զիս փոխեց, բայց Անահայ կերպարանաց մէջ մէկը կ'երեւար, որն որ վրէժխնդրութեան դէմ գնելով, անոր յաղթեց ու զիս՝ խոնարհ շրսեմ, հապա անյամառ բրաւ, ու աս

խօսքերը զրուցելու ստիպեց, թէ «Ա՛լ ես խաղաղու-
թեան մէջ ապրիլ պէտք չեմ՝ յուսալ, ինձի բախտն ու
արքունիքը թշնամի են. երկնից կամարին վրայ ինձի
համար երջանիկ աստղ մը չկայ», : Նոյն ժամանակ երակ-
ներուս արիւնը սառեցաւ. հիմայ եղբօրս արինամթա-
թախ դիակին ստուերը արհաւիրով զիս կը լեցընէ, եւ
սաստիկ պատժոյս համար, անգութ ու վայրենի ըլլալը
կը տեսնեմ : Ան դիցանոյշը՝ Շատ աստուածներու բար-
կութեան առարկան եղած ես, ըսաւ, բախտդ տանե-
լու ո՛չ համբերութիւն եւ ո՛չ ալ ոյժ մնաց. դուն ան-
ձամբ սպանիչ ըլլալդ մատնէ, զքեզ ամպարիշտ ա-
նուանէ, մահուան արժանի եմ՝ զրուցէ, ըսաւ. մեռնե-
լու ալ շատ կը բաղձամ՝ ըսէ, պոռաց : Ասկէ զատ՝ աս
զարհուրելի խօսքերն ալ սիրտս եկան, վերաւորեցին.
«Պենդանութեանդ ատեն խաղաղութիւն պիտի չունե-
նաս, խղճի մտացդ ձայնը սրտիդ մէջ պիտի հնչէ, եղ-
բօրդ մահը, հօրդ շարչարանքը միշտ առջեւդ պիտի
փայլին. ո՛հ, ան մթին օրերդ, անհանդիստ քունդ՝
զքեզ պիտի խռովեն, Պարկաներն աչքիդ առջեւ թռ-
պէի մը ընթացքդ ալ արգելելու պիտ'որ աշխատին :
Բայց ե՛րբ . . . առանց թէութեան : Թէ որ անձամբ
յանց . . . խոստ . . . նէ եւ այսպէսով թէ մահունէ
թէ ասոնցմէ ազատիս», : Ասոնք են սրտիս ազդածները :

Սաթինիկ աս խօսքերը լսելով՝ հոգի առաւ, եւ
ասկէ պատճառ առնելով՝ Արտաշէսին ըսաւ. Լսեցիր,
Ա՛րտաշէս, ուրեմն այսուհետեւ ազատ թող տուր :
Գարձեալ նմանութիւններ ալ բերելով զԱրտաշէս
համոզընել կ'ուզէր : Երբ որ, կ'ըսէր, բաղմամեայ օճը
հնութեան հասակն ատելու ըլլայ, հին զգեստը թող
տալով երիտասարդութեան կը դառնայ :

Չէ, մեռնի, ըսաւ Արտաշէս . . . : Բայց քիչ մը
մտածելէն ետեւ՝ Ի՞նչ կ'ընեմ, ըսաւ : Արտաւազը
պատժեմ. զղջալէն ետեւ, հօրը հնազանդելէն ետեւ՝
մահ մատնեմ : Անահայ գուշակութեան նայելով՝ իմ

խոստմանս համեմատ պէտք է որ ազատի: Այսուհետեւ յայտնի ու անխարդախ սիրտ մը, պազատող ու զիջանող անձ մը ինչպէս վերաւորեմ: Շատ անգութ ու անարգ մարդ կ'ըլայի: Ստոյգ է որ Արտաւազդ մեծ յանցանք ըրաւ, զիս ալ վշտացուց, անոր համար ալ վրէժ կրնայի առնել. բայց այսուհետեւ վրէժ առնելն ինձի նախատինք է, մեծանձն Արտաշէսին ամօթ է: Բարկութիւնս արդար է, բայց ալ պարսպ անդ զիս կը գրգռէ: Արտաւազդ, սիրտս՝ գեղեցիկ զէնքով մը չէ թէ քեզմէ, հապա ինձմէ վրէժ կ'առնէ, բարկութիւնս զպեղծով՝ քեզի կեանք կը շնորհէ: Գնա, ապրէ:

Ո՛հ, պոռաց մէկէն ի մէկ, Սաթիւնիկ, աս ինչ մեծ շնորհք է: Արտաւազդ, դուն ալ ըսէ ինձի հետ աս խօսքերը. «Արդար թագաւոր ես, Արտաշէս, բոլոր Հայաստան հանճարդ ու գթութիւնդ կը յարգէ: Արդարութիւնդ գեղեցիկ է, որովհետեւ գթութիւնն ալ իրեն ընկեր ունի: Քեզի, Արտաշէս, փառաւոր բախտի մէջ ըլլողին մոլութիւնը՝ պատիժ կ'երեւայ, ճնշուած առաքինութիւնը՝ վարձք. անոր համար զԱրտաւազդ ստիպելով՝ ներքին վշտերէ ազատել ուզեցիր, եւ անկէ ետեւ անոր արտաքին պատիժն ալ շնորհեցիր»:

ԱՐՏԱՆԱԶԻ ապրելու շնորհքն ընդունելէն ետեւ,
 Արտաշեսին կենաց թեյն՝ երեք քերց ուզելովը՝ ալ եր-
 կայն շմանուեցաւ. քանի մ'օրէն՝ ան սքանչելի, քաջ
 ու իմաստուն թագաւորն իր մշանջենաւոր բնակու-
 թեանն անցաւ: Յուզարկաւորութիւնը փառաւոր ու
 անպատու էր, եւ շիրմին քով եղած զոհերն՝ անթիւ
 անհամար: Այս ամենայն կատարուեցաւ նէ, Արտաւազդ
 եղբարքն արբունիք ժողովեց. եւ հօրը մահուան վրայ
 ունեցած ցաւին զիրենք հաղորդ ընելու մտօք՝ սյուպէս
 քաւ. Ո՛հ եղբարք, հայրերնիս ծանր հիւանդ եղած ա-
 տեն կամ մեռնելէն յառաջ՝ ուր էիք, ան շքեղու-
 թեամբ գերեզման տանելէն յառաջ՝ ընթացքնիդ ուր
 տարած էր զձեզ: Ո՛հ, աստուած, ան ինչ շարժական
 խօսքեր, ինչ սրտառուչ ու լալազին ձայներ էին, ստու-
 զիւ եւ ոչ խստաբար սիրտ մը կրնար անոնց դիմանալ:
 Ա՛յ ուզէք նէ ձեզի ալ հաղորդեմ, որպէս զի իմանաք որ
 ինչ սիրելի բան է եղեր կեանքն եւ մանաւանդ ան ե-
 րեւելի մարդուն կեանքը. աւատիկ անոր խօսքերը: Ո՛հ,
 արեւ արեւ, կ'ըսէր, օրեր ու լուսաւոր եւ մթին ամպեր,
 որ աներեւոյթ կ'ըլլաք ու նորէն երկինքը կ'երեւաք...:

Ո՛հ, երկիր, անբունիք ու սիրելի որդիք : Աւասիկ հասաւ մակոյկն, որով մշանջենաւոր անցքը պիտ'որ բնեմ, եկաւ մեռնողներուն նաւապետը, որն որ թիակը ձեռքն առած՝ զարհուրելի կը պոռայ . Եկուր, Արտաշէս, ինչ կ'ընես, ինչ բանի կը սպասես, ինչու կը դանդաղես : Այսպէս կը փութացընէ զիս, կ'ըսէր, անագորոյն նաւապետն, եւ ակնթարթի մը հանգիստ թող չիտար : Բաժնուելու եկք, որդիք, չէք տեսներ որ մէկը զիս կը քաշէ . . . : Այն ինծի . Մահ, կեցիր, դեռ մի մօտենար, գժբախտիս լոյսը դեռ մ'առներ . վայ, որ ճամբէն, որ նեղ շաւղէն զիս կը տանիս . այնպէս յանկարծակի՞ կը հասնիս : Արդեօք քեզմէ փախուստ չկայ : Ուրեմն բիրաւոր դացողներուն ետեւէն երթալու է : Ո՛րդիք, ալ զիս թող տուէք . . . վճիռը արուած, տարտարոտը մօտ է : Աչքիս վրայ ամպոտ ու դժնդակ դիշեր մ'իջաւ . սիրելիք, մնա՛ք բարով : . . . Այսուհետեւ հայր չունիք, բայց ձեզի կեանք տուողը միշտ պատուեցէք : Գեղեցիկ օրուան լոյսն անտրտում վայլեցէք, եւ թէ որ շատ ու երկայն վշտեր ալ դիմացնիդ ելելու բլան, յոյսերնիդ մէկդի մի ձգէք : Նաւորդն ալ երբեմն հեռաւոր եզրներէ նաւելով՝ իր մեծագին դանձերը ծով կը նետէ . բայց հայրենի եզրը հասնելուն պէս՝ իր կենաց ազատութեան համար դից շնորհակալ կ'ըլլայ, որ յուսահատ չկորուեցաւ : Ըսաւ ու մեռաւ :

Արտաւազդ աս դէպքերը պատմելէն ետեւ՝ ինքն ալ ցաւ ցուցրնել ձեւացուց . բայց չէ . Արտաւազդ միշտ նոյն Արտաւազդն էր : Ո՛հ աստուածք, ըսաւ, ան ինչ դառն մահ էր . մէկէն աչքս խաւար պատեց : Սիրելի ու ազնիւ էիր, հայր . բաժնուեցա՞ր . ուրեմն զնա, երանելեաց տեղը թուիր, ուր որ Ուրախութիւնն ու Հանգիստը դահ նստած՝ կը հսկեն, հոն ամէն առաքինութիւններն ու բարիքը ներկայ կը գանուին : Հայր, դուն հոն դացիր, իսկ զմեզ . . . : Ո՛հ Հայաստան, ո՛հ հայրենի երկիր, որպիսի հայր կորսնցուցիր : Մեծ է կորուստդ :

Ժողովուրդը սաստիկ ցաւով դեռինք տարածուած , առատաբուն աղբիւրներ կը վազընէ , եւ թէ որ բոլոր աշխարհք հրոյ բոցերու մէջ ըլլար , աս գետերով ամբողջը մէկտեղ կրնար մարել : Ստուգիւ երեւելիներուն մահուան հռչակն ամէն տեղ մեծ ցաւով կը տարածուի . . . : Բայց քաղքին սուգը բաւական չեղաւ , շատերուն փափուկ սլորմագին արցունքները , ցաւերու սաստիկութիւնը , բոլոր երկրիս՝ երկինք բարձրացած ուզումնէ աղաղակը բաւական չսեպուեցաւ . այլ շատ մարդիկ ալ իրենք զիրենք զոհ ըրին , մայրերն իրենց որդւոց մահուան վրայ կ'ուրախանային , կարծելով թէ քու քովդ երանելի բնակութիւն մը պիտի գտնեն : Ալ ասիկայ շատ է , Արտաշէս , ալ չափն անցաւ . տղայ , երիտասարդ , ծեր ու կնիկ մարդ չմնաց , երկիրը դազանաց բնակութիւն դարձաւ , աներն աւեր ու անապատ փոխուեցան : Արտաշէս , թէ որ հոն ալ թագաւորել կ'ուզես , ես հոս որուն տիրեմ՝ ես աւերակաց ինչպէս թագաւորեմ , անխօս ու անշարժ առարկայից իշխեմ :

Արտաւազդին բերնէն աս գանգատանաց խօսքերը հնչելուն պէս՝ ուրիշ հնչիւն մը լսուեցաւ . Արտաշէսին ստուերն՝ անոնց ժողովուած տեղը թափանցելով՝ ահագին ձայնով մը դռնեց ու որդիքը զարհուրեցուց : Ինչ կը տեսնեմ , ըսաւ Արտաւազդ . արդեօք երանգ է , տեսէք , եղբարք , վեր նայեցէք , ան կերպարանքը ճշմարիտ բան մըն է , չէ նէ՛ ստուեր . Արտաշէսն է , չէ նէ ուրիշ մէկը . Արալէզները զինքը յարուցած պիտ'որ ըլլան : Ինչ գաժան երես , ինչ բարկութիւն , ինչ կրակ :

Առէ , պտուաց Արտաշէս : Ո՛հ մարդկային ոգի , մինչեւ ո՛ւր պիտի հասնիս . ինչ յանդուգն խօսքեր են ասոնք , Արտաւազդ . յանդուգնութեանդ պտուղն որը պիտ'որ ըլլայ . թէ որ այսպէս յառաջ երթալու ըլլաս , անտարակոյս յանդուգնադոյն բաներու ձեռք պիտի զարնես : Բարձրացիր , բարձրացիր , Արտաւազդ , աստեղաց մօտ հասիր , գուցէ ամէն մարդիկներէն վեր սեպելով

զքեզ, աստուածներու հետ խօսակցութեան սկսիս : Ո՛հ, աս ինչ զարհուրելի մեծամտութիւն է . ինչ ահագին անարգանք է ինծի, ինչ մեծ անհաւատարմութիւն որդւոյ մը . . . : Ո՛ւր է, Ա՛րտաւազդ, բարեկամի ու սիրելւոյ կերպարանք կը ցուցնէիր, միշտ քովէս բաժնուիլ չէիր ուզեր, ամէն ժամ, ամէն վայրկեան սրտիդ սէրը կերպով մը ցուցնել կը ցանկայիր : Այսու ամենայնիւ աս հիմակուան ըսած խօսքերովդ, ինծի՝ չէ թէ սէր, հապա ատելութիւն կ'ընծայես, շատերու վրայ թաղաւորել բաղձալով կամ իմ պատիւս չախորժելով եղած զոհերն ինծի յանցանք կը սեպես : Ուրեմն առջի զիջումդ սուտ է եղեր, կեղծաւորութիւնդ յայտնի եղաւ : Ո՛հ, մատնիչ . դուն, Ա՛րտաւազդ, թուշող կենացս ատենը՝ աղէտիցս առաջին պատճառն էիր, հիմայ գոնէ զիս նեղելէն ինչն չես դադրիր : Ո՛հ, կեանք կեանք, ո՛ւր ես . Ա՛րտաւազդ, միայն քեզմէ վրէժ առնելու համար՝ կ'ուզէի կենդանական օդ շնչել : Բայց չէ, չէ . տիրողի մը բախտը շատ դէշ է եղեր, թաղաւորի մը հանդիստը գեղացւոյ մը ուրախութենէ շատ նուազ է եղեր : Աննշան մարդու մը շնորհուածը՝ մեզի կը զլացուի, մանաւանդ թէ շատերէն, կամ լուազոյն ըսելու համար՝ մերձաւորներէն ալ վիշտ կը կրենք : Ազքատ գեղացին մինակ կամ ընկերով մը՝ դաշտ, անտառ ու լեռ կ'երթայ, բաց օդի տակ, մրմնջող վտակի մը քով, փափուկ կանաչագեղ մազերով անկողնոյ մը վրայ կը պառկի, եւ մարմինը խոշոր շինական զգեստով պատած՝ հոն անոյշ կը քնանայ ու կ'արթննայ, եւ նոյնպիսի անմեղ ու զուարթ վիճակի մէջ՝ իր օրերը գեղեցիկ կը դառնան, բանի մը չիբաղձար . գիտէ ո՞վ զինքը կը սիրէ, ո՞վ կ'ատէ, եւ իւրաքանչիւր մարդուն սիրտն՝ իր անձին նկատմամբ՝ ճակտին վրայ կը կարգայ : Ուր որ ասոր հակառակ թաղաւոր մը այնչափ մեծութեանց մէջ անստոյգ կ'ապրի ու նոյն իսկ որդւոյ մը սիրտը՝ ո՛չ դէմքէն եւ ո՛չ խօսքէն կը ճանչնայ : Ո՞վ կրնար կար-

ծել, Ա՛րտաւազդ, որ մեռնելէս ետքն ալ այնպէս ան-
հաւատարիմ ըլլաս :

Բայց ինչո՞ւ վճիռս դեռ ի կախ կը պահեմ... :
Ո՛հ, մեռնի, մեռնի չարաթոյնը. դոնէ հովը, դոնէ
աստուածներն իմ տեղս վրէժ առնեն : Շանթերն ու
նեւերը, միրիկներն ու փոթորիկները, օդն ու ջուրը
իրեն վնասեն : Քու բախտդ, Ա՛րտաւազդ, այնչափ
զօնդակ ըլլայ՝ որ աւելի իմինիս բաղձաս : Մի վախնար,
չէ թէ ինձի միայն, այլ դից ալ ատելի ես : Գուք,
Վրէժխնդրութիւն ու Արդարութիւն, անշուշտ իմ
ուխտերս կ'ուզէք կատարել. դուն, Հեփեստոս, աղա-
մանդեայ շղթաներով կապէ զինքն, օր աւուր վրայ
խտացուր զանոնք ու սաստիկ ծանրացուր, որպէս զի
սորվի յանդուգը, իմանայ ամբարտաւանը, որ հօրը
դէմ խօսեցաւ. զինքը՝ մեռած քան թէ կենդանի
տեսնել կ'ուզէր :

Վեղի կ'ըսեմ, Ա՛րտաւազդ, անտարակոյս որսի
պիտ'որ ելլես. բայց հոն երթալէդ ետեւ՝ մէյ մ'ալ
լոյս պիտի տեսնես. աստուած չընէ : Աս խօսքերը քու
ականջդ օղ ըլլան .

Եթէ դու յորս հեծցիս

Յազատ ի վեր ի Մասիս,

Զքեզ կալցին Քաջք

Տարցին յազատ ի վեր ի Մասիս :

Անդ կացցես, եւ զլոյս մի տեսցես : ...

Ըսաւ ու լռեց :

Սոսկաց Արտաւազդ այսպիսի սպառնացող ստուե-
րէ մը. եւ աս ահազին անէծքը՝ վրան նետուած լեռ-
մը կարծելով՝ կը ջանար մէկդի ձգել : Անհանդուրժելի
է, ըսաւ, վրաս նետածդ, Ա՛րտաչէս. սիրտս երկու կտոր
եղաւ : Ի՛նչ ընեմ, ի՛նչ որոշեմ. արդեօք աղաչեմ, չէ՛ նէ
սպառնամ : Երթալով աւելի եւս կը խռովիմ, վերջին
աստիճանի խօսքի կամ դործքի մը ձեռք զարնելու մի
ստիպեր զիս, հայր : Այսչափ անէծք թափելէդ ետեւ՝

ինչ կրնայի ընել: Շատ բան: Գից կրնամ բողբել. կրնամ ընել. . . . : Ո՛ր դիտէ, քեզմէ ներում խնդրելով պիտ'որ ազատիմ: Ի՛նչ կ'ըսես, Ա՛րտաւազդ, անմտացա՛ր, ըսածդ դիտեն: Ո՛չ երբեք. թողութիւն ամենեւին մէկէ մը չեմ ուզեր: Ո՛հ, երանի՛ թէ ուղած բաներէս մէկն ըլլար. կամ երկիրը բացուելով՝ զիս իր սիրտը թաղէր, կամ բարձր օդի մէջ շանթ մը շողալով՝ հօրս այնչափ անդթութիւնն, այնչափ անարդարութիւնը յայտնէր կամ արդէլէր: Բայց այնչափ նշուածենէ ետեւ ինչո՛ւ կենաց բաղձամ: Այսուհետեւ գէշ կամ աղէկ բախտը՝ պատիժ է ինձի, բոլոր տարիներն անողորմ տանջանք պիտ'որ ըլլան ինձի:

Ասոնք բւեռէն ետեւ՝ խոր մտածմանց մէջ ինկաւ. քիչ մը ետքը հառաչելով զուցեց. Ո՛հ, մարդիկ, մարդիկ. մէկը մեզի սպառնալէք ընելուն պէս՝ տղու պէս կը վախնանք: Շատ տարիներուն բեռան տակ՝ ալեւոր կը հեծենք: Երբեմն շատ ստացուածներու բաղձանքը կը չարչարէ զմեզ, երբեմն անոնց կորստեան վախը խիտ կը վերաւորէ զմեզ: Յանցաւորները յաւատենաւան պատերազմ ունին իրենց անձին հետ, արդարներն ալ շատ անգամ նախանձով ու նենգութեամբ ուրիշներէ կը նեղուին: Ստուերները, ցնորքները, երազներն ու խենթութիւնները մարդիկներու հագերն են. եւ երբ որ ամօթալի սխալմունքնին յայտնի ըլլալու կը սկսի, ան ատեն մահն ալ վրանին կը հասնի, կը մեռնին: Մեռնի՛նք, մեռնի՛նք, ինչ կեանք է ասիկա. . . . Ախ՛սձանի՛նք. ես կորսուիմ: Ա՛րտաւազդ, ինչո՛ւ դուն անձամբ քեզի չարիք կը մաղթես. ի՛նչ, կը կարծես որ հօրդ անիրաւ անէ՛ծքը զօրութիւն մը ունի: Գնա, Ա՛րտաշէս, առջեւէս աներեւոյթ եղեր: Ա՛լ զիս չեմ կրնար բռնել: Ելէ՛ք, ելէ՛ք այսուհետեւ սրտիս բանաէն, զսպուած զայրուցքներ: Քու խօսքերովդ, հայր, քու անէ՛ծքովդ՝ իմ քաջութիւններո, պատիւս, հաւատարմութիւնս կատարեալ հատուցում ընդու-

նեցան: Ասկէ ետքը բարկութիւնս ոչ արգելքի եւ ոչ սանձի միտ կրնայ դնել: Հաղարաւոր կատարութեանց ձեռքն իյնալով՝ կը զգամ որ անձս կը մրմնայ, բոլոր մտրութիւնները գլուխս թափեցան, ամէնքն ալ սրտիս շորս կողմը բռնած կեցան: Մէկն՝ անցեալ նախատանացս համար միտքս կը դրգռէ, մէկալը զիս սաստիկ ատելութեան կը դրդէ: Ամէնն ալ մէկտեղ՝ քու խօսքերդ ոչինչ սեպելու կը յորդորեն: Եւ իրաւամբ ալ այսպէս խօսելու զիս կը ստիպեն. բայց բուն պատճառն անոնք չեն, այլ անոնց գրգռիչը դուն ես, Ա՛րտաշէս:

Արտաշէս երկայն ատեն ապշած կենալէն ետեւ՝ այսպէս ըսաւ. Ի՞նչ նենդաւոր անհաւատարմութիւն ու ամենեւին չսուած յանդգնութիւն է ասիկայ: Հայոց աշխարհքը, տո՛ւնս, արքունեացս մէջ եմ, չէ՛ նէ Աստուծոյ երկիրը, վայրենի դաղանայ մէջ: Ո՛ւր եմ: Այնպիսի դաղանամիտ որդի մը, հօրը խօսքերն արհամարհող մարդ մը, այնպէս անդութ ապերախտ մը տեսնուած է երբեք: Չէ. .: Անաստ առիւծ մը՝ իր երախտաւորին, Մարգակերները մերձաւորին յարդ կամ պարտք ունենալնին աւելի կը ճանչնան, համազգի գաղանները՝ մէջերնին աւելի սէր ունին, քան թէ դուն՝ հօրդ, Արտաւազդ: Ա՛ւր նայեցէք, Արտաւազդին ինձի բրած սպառնալիքները, ինձի տուած անարգանքը դիտեցէք. ձեզի կ'ըսեմ, սիրելիք, զԱրտաւազդ իր չարեաց մէջ թող տուէք, փախէք, փախէք անօրինէն: Ասիկա երկրիս մարդկային օրէնքները չուղելով գիտնալ, երկնից ու բնութեան օրէնքներն ալ կ'ուզէ մոռնալ, հօրն ու մերձաւորաց վրայ՝ սէր ու հաւատարմութիւն չունի: Ո՛հ յանդուգն, այսօր թագաւոր եղար, եւ ինձի պէս մէկուն՝ խօսքով կը սպառնաս. անտարակոյս քիչ մը ետքը գործքով ամենուն պիտի սպառնաս, բռնաւոր պիտ'որ ըլլաս: Ի՞նչպէս կը յանդգնիս երեսո նայիլ, ինչպէս կրնաս առանց ամօթոյ արտեւանունքդ ինձի դարձնել: Բեզի՛ հաւատարիմ ծառայ ո՞վ կ'ըլլայ, ե-

Թէ դուն նախ հօրդ չեղար: Գնա, կորսուէ, ամենուն
օգտակար է: Թէ որ բարի խորհրդով, Թագաւորի մը
հրամանով, մէկը հասարակաց օգտին համար կրնայ նէ
մեռնիլ, սրչափ եւս առաւել դուն, Արտաւազդ, ան-
արժան որդի: Երբ որ մշակը նոյն պատճառաւ ծառին
ծաղիկն ու մէկ ճիւղը կը կտրէ, ծառին աւելի գեղեցիկ
ըլլալը կը դիտէ: Նոյն ճիւղը չկտրելով՝ բոլոր ծառը
Թէ որ չորնայ, մշակին մեծ յանցանք կ'ըլլայ: Սպառ-
նայիր ուրեմն, եւ Թող անձնդ աւելի չարանայ. բայց
դիտցած ըլլաս որ վրէժխնդրութիւնն՝ ես չէ նէ, աս-
տուածները կ'առնեն. ասիկա աղէկ մտածէ եւ դողա:
Գիտնաս որ քիչ մ'ունեցած ժամանակդ ալ ուրախալի
չէ: Յանցաւորն ամէն օտար բռնութենէն ալ ազատ
ըլլալու ըլլայ, ինքն իրեն բռնաւոր կ'ըլլայ, եւ այսպէ-
տով լուրջ մ'ալ հանգիստ չ'ունենար: Ինք՝ իրեն մօտ
կեցող դատախազը, իր խիղճը տեսնելով՝ կը դողայ,
փոքր կատկածէ մը կը վախնայ, զարհուրելի դիշերը,
լուսանալու սկսող գիշերածայրը զինքը կը յանդիմա-
նեն. իր յանցանքը դիտցողին ու չգիտցողին քով չ'ու-
ղեր երթալ: Արթնութեան ատեն՝ մերկալից փոթու-
րիկ մը իր սրտին մէջ կը ծփայ, քնոյ ժամանակ՝ զինքը
չարչարող դէւր ըլլը կերպարանաց մէջ կը տեսնէ:

Առ, Արամազդ, վրէժս դուն առ: Արդարութիւն
ու Արեժխնդրութիւն, Արտաւազդին հանգիստ Թող
մի տայ: Մահ, մօտեցիր անոր, բայց զանիկա չարչարէ,
այսուհետեւ լուսոյ արժանի չէ: Արամազդ, Արտաւազ-
դը պատժելու կամք ունիս, Թէ չէ: Թէ որ չունիս նէ,
գոնէ անոր բռնաւոր ու սպստամբ մտրութիւնները ջն-
ջէ: Բայց երանի՜ Թէ բոլոր մարդիկներուն չարութիւն-
ները ջնջէիր. չափազանց անձնատիրութիւնը, չար բար-
կութիւնը, անձնահաճած ատելութիւնը, անմիտ ամ-
բարտաւանութիւնը, յամառ բնութիւնն ու յաղթա-
սիրութիւնը, նախանձն եւ ուրիշ անթիւ անհամար
պակտութիւններն ոչնչացընէիր: Ասոնք են զմարդիկ

խորխորատ ձգողները, ասոնք են զերենք ողորմելի ու նենգաւոր ընողները: Մարդկային ոգիներն ո՞վ կը խռովէ: Արդեօք չար ոգիներն են զմեզ տարտարոս ձգողները: Ոչ երբէք: Չարիքն է զմեզ հոն թաւալողը: Ասոնք են խռովայոյզ հովերն, որոնք մարդկային կենաց ծովը տակն ու վրայ կ'ընեն . . . :

Բայց ջնջելու յիշատակն ինչո՞ւ բրի, չկայ ասոնց դէմ միջոց, չկան առաքինութիւններ: Մոլութիւնները վերնալով՝ մարդն ո՞ւր կը մնայ, առանց քաջութեան՝ իրեն ո՞վ վարձք կու տայ: Ո՛հ, ո՛հ, մարդ, ես ալ աշխարհք եկած մարդ եի. դիտեմ որ չարիքները մարդկեզէն կենաց խռովարար ու անհանգիստ հովերն են, բայց առանց հովերու անդնդային ծովուն մէջ նաւարկութիւն չ'ըլլար. դիտեմ որ մոլութիւններն ապրտամբելու դիւրապատրաստ գնդեր են, բայց առանց գնդերու պատերազմ չ'ըլլար: Հովերը զնաւը թէ՛ նաւահանգիստ թէ՛ նաւակոծութեան կը տանին, մարդկան գնդերը՝ թէ՛ խռովութիւն թէ՛ յաղթութիւն կ'ընեն, աս կրկին յատկութիւնները շունենալը՝ նաւապետէն կամ գնդապետէն կախուած է, որն որ դիտէ եղանակաւ մը պրծիլ: Աղահոլութիւնը՝ անտեսութեան կրնայ փոխել, բարկութիւնն՝ աղէկ նախանձի, եւ մեկալներն ալ իրենց հակառակին: Ասոնք՝ մտաց հպատակ կը ծնանին սանձով մը կապուած. ո՞վ որ սանձը թող կու տայ, անոնց բռնութեան տակ կը մանէ: Գուն, Արտաւազդ, անոնց շաիրեցիր, անոնք քու վիզդ պարան անցուցին, աւասիկ զքեզ կը խղզեն:

Ա՛լ ձայնս մարեցաւ: Երեսդ երբէք չտեսնեմ: Գուն կը ծիծաղիս, եւ ըսածներուս վրայ ամենեւին յարդ չունիս: Երկինքի վրայ եղած փոքր լուսաւոր ամպէ մը ոչ դք կը վախնայ. բայց յանկարծակի երբ որ սեւ լերան մը պէս որոտալով վար կ'իջնայ, ամէն մարդ դրուխն եկածէն կը սոսկայ: Աս վերջին խօսքս ըլլայ. կու գայ գլուխդ, Արտաւազդ. ըսաւ ու մէյ մ'ալ շերեւցաւ:

ԱՐՏԱՀԵՍԻՆ ցնորական տեսիլքէն՝ քաջ ու վէս Արտաւազդն որ զարհուրեցաւ, որչափ եւս առաւել մէկալ եղբարքը պիտի ստակային: Քայց ասոր հակառակն եղաւ. Արոյր ու Ջարեհ՝ աւելի խրախոյս առին, հայրերնին իրենց սիրելի բլալով՝ իրենք ալ անոր կողմն ելան, Արտաւազդ եղբարնին յանդիմանեցին, յորդորեցին եւ խրատ տուին որ ինք իր կործանման պատճառ չըլայ: Արոյր իրեն շատ բան յիշեցուց. Արտաւազդ, ըսաւ, ան գեղեցիկ անձին յարզը չե՞ս դիտեր: Չե՞ս յիշեր որ իսկզբան ինչեր ըսաւ, ինչեր ըրաւ գ.քեզ ազատելու համար: Քու յանցանքիդ մեծութիւնն սրչափ նուագցուց: Քանի քանի ճամբով սիրտդ փրնտուեց, մեղմայրնել ուղեց: Զ.քեզ ազատելու համար՝ չէ թէ խօսքով միայն, հապա իրօք ալ ջանաց. քեզի միջոց, արդարութիւն, մանաւանդ թէ գութ ցուցուց: Շատ վշտացած էր, անոր համար քեզի ներելու կը դեդեւէր: Ան ատեն ես ալ (.քանի մը դէպքերն ի բաց առնելով) Արտաշեսին մօտեցայ, մօր ու որդւոյ սղորմելի վիճակն անոր աչքին առջեւը դրի: Աս շարժական ու փափուկ յարձակումը մէկէն յաղթութիւնը գլուխ

տարաւ լմննաց : Գուցէ Արտաշէսին կիրքն արտաքոյ
կարգի ելած ըլլալով՝ ալ յոգնած էր . կամ պատ-
ճառներս միտքը համոզելով ու սիրար կակղցրնելով՝
վերջապէս զիջաւ , բարկութիւնը զպէց , զքեզ սիրեց ,
քեզի գթացաւ ու մեղի հետ ուրախութենէ լացաւ :
Բայց հիմակ , ապեր . . . :

Ստուգիւ ապերախտ ես Արտաւազդ , շարունակեց
Ջարեհ ալ : Ի՛նչ , ասկէ ետքը մէկէ մը պաշտպանու-
թիւն կրնամ գտնել : Ամենահայեաց արեւու լուսոյ առ-
ջեւ քու յանցանքդ կրնամ ծածկել . չէ : Ուրեմն խօս-
քերդ փոխէ , միտքդ ալ ուղղէ : Գուն հօրերնուս դէմ
ըլլալով ու անոր դէմ կուուելով՝ զմեզ ալ կը շարշա-
րես , եւ երբեք գոհ չես ըլլար : Մեր առջեւը միշտ արը-
տում ու հպարտ կ'ելես , մեղի դէմ ալ կը մեծաբա-
նես , լուռ ալ կենալու ըլլաս , երեսովդ կը յանդիմա-
նելի է : Այնպէս որ ընելիքնիս չենք գիտեր , եւ տխրու-
թիւն մ'ալ վրանիս տիրելով՝ լալէն ուրիշ ի՛նչ կրնանք
ընել : Արշալուսոյ արցունքներուն հետ մեր ողբը կը
սկսի , եւ օրը չթխացած՝ լմննալիք չունի : Գուն , Ար-
տաւազդ , յանցանքիդ ու հպարտութեանդ մէջ յամառ
կենալէն ի՛նչ կը հասկընաս : Յանցանքը յանցանքի ա-
ռաջնորդ կ'ըլլայ : Հիմակ ալ անստոյգ շնչած փա-
ռաւորութեան սիւքը զքեզ կը խաբէ : Արքունի գաւա-
զանն առնելով՝ երանութեան գահ մ'ալ կ'երեւա-
կայես : Ո՛հ , որչափ տկար է մարդկային միտքն իր կոյր
բաղձանքներուն մէջ :

Վայ , ըսաւ Արտաւազդ զարմանալով մը հօրս
գառն վճիռներն ու անոր մինչեւ հիմայ վրաս ձգած
սանձը՝ ձեզի յանդգնութիւն ու սրտոտութիւն պատ-
ճառեց . իսկ իմ համարձակութիւնս պէտք էր նուազ-
ցրնել . բայց Արտաւազդ այնչափ անարդ ու երկչոտ չէ :
Պարանպ է , պարանպ , ս' բազմադիմի բախտ , քաջասրը-
տութեանս չես կրնար յաղթել : Հիմայ հպատակու-

Թեան լուծը մէկդի նետելով՝ ձեր բախտին դէմքը փոխուած կը տեսնեմ, եղբարք . հազարումէկ վրէժխընդրութիւններս՝ մէկ հատով պիտի լմնցընեմ : Բանտարկուած առիւծը յանդուգն ու վայրենի չ'երեւար, եւ կարծես թէ շղթաներու մէջ երբեմն շատերուն սպառնալիքներովն աւելի եւս հեղ ու ընտանի կ'ըլլայ . բայց թէ որ իր կապերը կտորտելու ըլլայ, հին ազատութիւնն ու ոխը նորէն միտքը կու գայ . եւ մէյ մը մոնչեւուն պէս՝ իր թշնամւոյն երեսը պատ կը դառնայ :

Ասոր վրայ թիկնապահներուն հրաման տուաւ որ զԱբրոյր եւ զԶարեհ առջեւէն մէկդի առնեն : Թող, ըսաւ, քիչ մը ժամանակ բանտի մէջ նստին, մինչեւ որ իրենց խտտագոյն վճիռն ալ լսեն, եւ սորվին թէ որո՞ն հետ կը խօսին, իրենց հաւասարին հետ՝ թէ զահ հըլլողին հետ :

Միայն Տիրան քովը մնալով՝ ան ալ աս դահձէն իր վճուոյն կը սպասէր : Բայց Արտաւազդ՝ Հիմակ երկուքնիս մնացինք, Տիրան, ըսաւ, ինչ ընենք, մեր եղբարքն Այրարատէն հանե՞նք արդեօք, չէ՞ նէ իրենց արժանի մեծագոյն պատիժը վճուեմ : Ի՞նչ կ'ըսես . . . խօսէ . . . : Զքեզ, Տիրան, ինձի ընկեր պահեցի, իմ աթուիս ժառանգ անուանեցի : Գուն ալ խորհուրդ տուր, կամքդ յայտնէ, գուցէ ասոնց յանդգնութեան դէմ լաւագոյն միջոց մը կը գտնես : Թէպէտեւ թողուլ թեան արժանի չեն, բայց պատժոյն նուազումն ալ մեծ շնորհք մըն է : Պատիժ մը պէտք է որ ընդունին : Գէմ յանդիման զիս վշտացուցին, երեսս այսչափ անարդանայ խօսքեր զրուցեցին . հապա ինձմէ հեռու՝ ինչեր պիտ'որ բռնն : Եւ ոչ թաղաւորի անուն կ'ուզեմ ունենալ, թէ որ զահ նստելովս ալ՝ այնչափ ամօթ պիտի կրեմ :

Ամէն բաղձանքդ ինձի օրէնք է, Արտաւազդ, պատասխանեց Տիրան : Բայց որովհետեւ իմ կամացս հակումն ալ կը հարցընես, ինչո՞ւ աս ուղածդ ալ պիտի

չկատարեմ: Ժամանակ էր ըսելու եւ քեզմէ խնդրելու որ մերձաւորաց սէր ցուցնես, եթէ կարելի ըլլար նէ թշնամեաց կեանք շնորհես: Սառգիւ կը յուսայի որ դուն ալ ինծի շնորհք մը չէիր զլանար: Բայց հիմայ ինչ կրնամ ուզել, աս երկուքին համար ինչ պէտք եմ բաղձալ: (Տիրան հոս զՄատան յիշելով՝ Ո՛հ մէկալ եղբօր . . . վայ ինծի . . . ըսաւ): Չէի կարծեր որ այնպէս յանդուզն խօսքերով՝ համարձակէին քեզի դէմ խօսիլ ու հիմակուան պատկզ անարգէին: Ո՛հ, ինչ խաղաղութեան մէջ կ'ըլլային. նաւերնին ինչ խաղաղ ջրերու վրայ կը սահէր. երկինքն, աստեղներն՝ իրենց հաշտ կը նայէին: Բայց ափսոս. հիմայ իրենց յանցանքովն ամէն բան մթընցաւ. չէ թէ իրենք զիրենք միայն նեղութեան մէջ ձգեցին, հապա զիս ալ ցառոց մէջ խոթեցին: Գիտեմ, Արտաւազդ, որ ես ալ յանցաւոր եղայ, որովհետեւ անոնց վրայ ցաւ մը յայտնեցի. բայց թողութիւն ալ պէտք եմ յուսալ, վասն զի ան բնածին ցաւը քու սրտիդ մէջն ալ կը դանուի . . . : Իմ խորհուրդս աս է, քու մտացդ համաձայն է. անոնց լղջոր շնորհէ, եւ մէկալ եղբարց ու քուրերուն հետ Այրատատէն դուրս հանէ: Խրկէ ուրեմն զանոնք ու քու եւ բարեկամիդ բաղձացածը կատարէ. ու անկէ ետեւ Երկինքն ալ զԱրտաւազդ եւ զՏիրան միշտ հաշտ կը պահեն:

Տիրան, աղէկ խօսեցար, ըսաւ Արտաւազդ. մտացս թափանցեցիր: Եւ թիկնապահները խաւրեց որ երկու յանցաւորներն Այրատատէն հանեն, եւ մէկալ եղբարցն ու քուրերուն հետ Աղիովտայ եւ Առբերանոյ գաւառները խրկեն: Ետքը Տիրանին դառնալով՝ Տիրան, ըսաւ, անշուշտ աս փոքրագոյն պատիժը մեծ պատիւ պիտ'որ ըլլայ ինծի, վասն զի ըրած շնորհքս աշխարհքս հրատարակուելով՝ Չուզեց, պիտ'որ ըսեն, չուզեց Արտաւազդ, իր նոր գահ ելած օրերը եղբարցն արիւնը մոնել, անոնց մահուան պատիժն՝

պքսորանաց փոխեց, որպէս զի չըլլայ թէ իր բարձրու-
թեան առաջին օրերն արիւնտով ներկած համարուի :
Երթան թող, կեանքերնին կը շնորհեմ, բայց մեզմէ
հեռու վայելեն : Թողուն մեղի ան խաղաղութիւնը՝ որն
որ մինչեւ հիմա մենք ալ չվայելցինք : Ո՛հ, կարծեմ
թէ ալ հանգչեցայ, ինձի հետ աշխարհքն ալ, բոլոր
մեր երկիրը : Տեսա՞ր, Տիրան, ինչպէս բոլոր սեւ ամպերը
փարատեցան, երկինքն իր զուարթ օգեղէն տաճարը
ցուցուց : Հիմա ստուգիւ ուրախութիւնս արծարծեցաւ :
Հիմա վարդի պէս ծաղկելու սկսայ, սառչոցներէ ծած-
կուած ու ճնշուած էի, բայց գարնան ջերմ ու լու-
սաւոր օրերը գալով՝ ամէն բանէն թեթեւցայ եւ
զուարթ երեսով աշխարհք տեսայ, ու ապագայ դե-
ղեցիկ յոյսերովս ալ կը սկսիմ զարգանալ : Տիրան, կըր-
նան, համեմատէ մէյ մը յառաջուան նեղութիւննին՝
հիմակուան ցնձումին հետ : Երկու իրարու հակառակ
սեւ ու սպիտակ դոյներ տեսնելով՝ անոնց զանազանու-
թիւնն սլ չ'ըմբռներ : Ուրեմն անցաւ ամէն բան, դա-
դրեցաւ, խաղաղացաւ մեծ փոթորիկը. ըսաւ եւ եր-
կուքն ալ գացին քաղցր քնոյ մէջ մտան :

ՆՈՐԷՆ ցորեկուան աստղն երեւնալով, երկինքն՝
 աստղներու ընդարձակ կամարէ մը՝ անապատ դարձու-
 ցած էր: Արտաւազդ ու Տիրան քնէն արթընցան եւ
 զարմանալի սիրով մը քովէ քով եկած՝ որսի երթա-
 լու խօսք կ'ընէին. Այսպիսի գեղեցիկ օրը պարապ չան-
 ցընենք, կ'ըսէին: Աարծես թէ արամութեանց վրայ
 բիւրաւոր տարիներ անցած, անոնց յիշատակը ջնջուած
 բոլորովին կորսուած էր: Ո՛հ, կ'ըսէր Արտաւազդ, մե-
 զի համար այսպիսի բախտաւոր ու փառաւոր օր երբ
 ծագեցաւ, ժողովրդեան համար այնպէս ցանկալի լոյս
 կամ յոյս երբ ծնաւ:

Ի՛նչպէս Տիրան անցածները չէր մոռցած, որտեղ կը
 հալէր, մանաւանդ որսին յիշատակութիւնը լսեց նէ.
 սակայն ինչ կրնար ընել...: Շողոքօրթեւն ալ անմեղ
 անվնաս կարծելով եւ անոր կատարածը չմտածելով՝
 խաբուեցաւ եւ այսպէս սկսաւ. Արտաւազդ, ըսաւ,
 շատ տարիներէ ու դարերէ ետեւ մեր վրայ սրչափ պի-
 տի զարմանան, մեր եղբայրական միութեան ու համա-
 խորհուրդ բլլալուն սրչափ պիտի նախանձին մարդիկ:
 Հայաստանին ու մեր ժամանակիս սրչափ երանի պիտի

տան օտարները, [Թէ Երասխն այնպէս քաջ [Թաղաւոր
ունեցաւ. առակ պիտ'որ ըլլայ բերաննին [Թէ աս հրո-
շակաւոր [Թաղաւորն ու դիւցաղն այնպէս սիրով էր
եղբորը հետ՝ որ կարծես [Թաղաւորակից առած էր զա-
նիկա եւ անոր հետ միատեղ բոլոր աղգին օգուտը կը
փնտռէր: Չէ, Արտաւազդ, հարկ չկայ որ խօսքերով
ցուցնեմ, նշաններով յայտնի ընեմ [Թէ ես ալ քեզի
հպատակ եմ, հաւատարիմ բարեկամ կամ եղբայր
եմ: Հազարումէկ զգացումներս սրտիս մէջ չեն կրնար
մնալ, տես կարգա ճակտիս վրայ զանոնք, ըն[Թերցիր
մեծարանքը, գոհութիւնն ու սէրը, տեսածներդ սիրազ
գրէ եւ բիւրաւոր տարիներ անջինջ պահէ, անշուշտ
այնչափ ալ Արամազդ քեզի կեանք պիտի շնորհէ:

Արտաւազդ այնպիսի խօսքեր լսելով՝ ուրախութե-
նէն վեր ցատքեց եւ եղբայրն առաւ որսի գնաց. բայց
պարապ ելաւ անոր ջանքը զՏիրան համոզելու [Թէ իրեն
որակից ըլլայ. վերջապէս զանիկա ապահով դաշտ մը
[Թող տալով՝ ինք գնաց որս բռն, եւ ետ դարձաւ
Տիրանին այսպէս ըսաւ. Ի՛նչ կ'ըսես, Տիրան, կ'ուզե՞ս
որ մէյ մ'ալ աս որսին զուարճութիւնը՝ գոնէ աս ան-
գամ մէկտեղ վայելնք. եկուր, արդէն աս դեղեցիկ
կանաչազարդ դաշտերուն վրայ զանուելով՝ երկրորդ
վրօսանք մ'ալ ընենք. դուցէ աւելի ահագին որսերու
պատահելով՝ քաջութիւննիս աշխարհքիս չորս ծայ-
րերը կը տարածենք: Տիրան, դուն երկշտ կ'երեւաս.
կարծեմ [Թէ վախդ դազաններէն չէ, հապա ուրիշ
երկիւղ մը կամ դուցէ ընդունայն յիշատակ մը կը
վախցրնէ զքեզ: Արդէն ճամբան դալու ատեն՝ հօրս
անզօր ու անիրաւ անէծքը յիշեցուցիր ինձի. ուստի ան
պիտ'որ ըլլայ քու վախդ. բայց քեզի ինչ, անէծքը
քու վրանդ էր, չէ. ուրեմն ինչէ՛ն կը սոսկաս: Գիտցիր,
Տիրան, հօրս խօսքերը՝ պարապ, օգա[Թուիչ խօսքեր են,
ազդեցութիւն ամենեւին չունին, մանաւանդ [Թէ ծի-
ծաղական ու ցնորական ձայներ են: Հսպա, ելիւր,

Տիրան, եկէք, սիրելի ընկերներ, եկէք աւելի վերերն երթանք, անտառախիտ տեղեր մտնենք, արագոտն որսական բարակներով՝ երէները կամ կինճերն ու իշավայրիները հալածենք. նորէն ընկեր ըլլանք անտառներու տիկնոջ, մեծին Անահայ, քաջ որսորդին, անոր բնակութեան մէջ ուրախ ըլլանք, եւ մեր վարպետին ու պաշտպանին, նոյն նշանաւոր Անահայ գից մեծ գովեստ տանք, որ առաջին անգամ՝ ան զարհուրելի որսին մէջ մեղի օգնեց, եւ զիս վայրենի ընձէ՛ մը գրեթէ սքանչելեօք ազատեց:

Տիրան, կ'ուզես նէ՛ աս անգամուն ալ դուն հոս կեցիր, մեր որս ընելու տեղերէն հեռու ապահով դաշտ մը կեցիր. բայց քու վատութեանդ վրայ կը ցաւիմ: Ափսոս, չտեսար, Տիրան. դոնէ չսեցիր՝ թէ քիչ մ'առաջ ըրած որսս ինչպէս ուրախացուց զմեզ: Ի՛նչ շքեղ տեսարան էր անիկա: Անտառ մօտենալուս պէս՝ պոռացինք ու գոչեցինք, սպառնալիքով ու բարկութեամբ որսերնիս գրգռեցինք, վայրենի զազանները կռուոյ կանչեցինք: Մտուգիւ ան ատեն ըրածնիս յիշելով՝ հիմայ սիրաս կը թնդայ եւ երակս ալ խիտ կը նետէ: Չայներնիս բաւական չէին, մէկալ կողմանէ անտառներն ալ կը հնչէին ու մեր աղաղակները նորէն կը կրկնէին: Ես աս ամէն բանէն կարծես թէ կատողելով կամ վախնալով՝ մէկ ու մէկալ կողմը վազվատեցի, բարկութեանս եւ երկչոտութեանս չափ որոշեցի, իմաստութիւնս ու համարձակութիւնս ի գործ դրի, եւ՝ Աս գործքերը պարապ տեղ կ'ընեմ, զազան կամ որս մը առջեւս չ'եղեր՝ ըսելուս չմնաց, մէկէնիմէկ բոլոր անտառն որոտաց, մէկ ծայրէն մինչեւ մէկալ ծայրը սուր ընթացքի մը խօշիւն լուեցաւ, յարձակողը ծառեր ու ճիւղեր կտարտելով, դաշտի վրայ՝ բաց կռուելու ասպարեղը նետուեցաւ, մեծ ահագին գեղեցկախայտուց ինձ մը աչքերնուս լոյսը գրեթէ շացուց:

Ես գազանը տեսնելուս պէս՝ անոր նման դարձայ,

ընթացքս անոր կողմն ուղղեցի ու վայրենութեամբ վրան յարձակեցայ, բայց ներքին ու գաղտնի ազդող երկիւղէ մը նորէն ետ քաշուեցայ: Արսի քաջ ընկերներս ազազակներով ու գոչիւններով գազանը սարսափեցրնել ուղեցին, չորս կողմանէ զանիկա վերաւորեցին, որսական շներն ալ անոր ամէն կողմն առին, կարծելով թէ անոր կատուութեան դէմ կրնան դնել: Բայց ահագին գազանը, զարհուրելի ինծր, ոչ որսորդ ու շուն, եւ ոչ հարուած կամ ազազակ բանի տեղ կը գնէր. վազքը մեր վրայ ընելով, զինքն արգելել ուղղը թաթը միայն վերցրնելով մղններ հետու կը փախցրնէր, ամենուն դէմ կը գնէր, եւ թէ որ ետ քաշուելու չըլլային, զամէնքը կոխկրտած ու պառկեցուցած կ'ըլլար. վերջապէս ամենէն անցաւ եւ ինծի կը մօտենար: Ա՛հ, ի՛նչ վայրկեան էր անիկա. արիւնս սառելու սկսաւ. բայց աշուրներս վար ու վեր խաղցրնելով՝ զԱնահիտ աջ ուսս կեցած տեսայ, որն որ իմ վատութիւնս արհամարհելով՝ սրտիս արիութիւնը զարթոյց: Գուն հոս ես նէ՛ այսուհետեւ երկիւղն ի՛նչ է ըսի, եւ յաղթութիւնս ապահով տեսայ: Գազանին դէմ գրեթէ առանձին մնացի, նշան առի, եւ քաջութեամբ՝ վահագնի նետերուն նման նետ մը արձակելով՝ ընծին սիրտը թափանցեցի: Ետ ետ թաւալեցաւ թունաւոր հարուածէն գազանը, արիւնը թափուեցաւ, ինկաւ, ջաւէն՝ սաստիկ բարկութեամբ մը դողդողաց, եւ զարհուրելի կերպով մը գոչելէն ետեւ՝ դիակը գետինը մնաց:

Բայտ եւ զՏիրան մեղմով մը յանդիմանեց: Լսեցիր, Տիրան, օգնականովս ինչէր ըրի. իսկ դուն ցնորական ստուերներէ զարհուրելով՝ հետս մի գար: Արչափ որ Արտեմիս ինծի որսակից է, բանէ մը չեմ վախնար: Եկէք, ընկերներ, ելէնք Անահատայ բնակութիւնն երթանք, աս անտառներուն մէջ անտարակոյս զինքը կը գտնենք: Բայց չէ, հարկ չկայ որ ուրիշ տեղ եր-

Թամ, հոս ալ կրնամ ուզածս ըսել, եւ նուէրս քեզի նուիրել. քեզի, Թանգուհի, քեզի մարզի մը հոսաւէտ ծաղիկներէ հիւսուած պսակ մը կը բերեմ. աս մարդաւ գետինն ո՛չ ճարակելու համար եկած հօտի մը հետք, եւ ո՛չ մանգաղի մը երես տեսած է երբէք. ասկէ մեզուն՝ միայն Թուշելով կ'անցնի կ'երթայ եւ յոտակ վտակներուն ջրերն անձայն ու անշարժ չեն կենար: Առուրեմն, Արտեմիս, աս գոյնզգոյն զարդն եւ մեծ պարզ եւ ի տեղ ինծմէ ընդունէ, վասն զի մահկանացուաց ամենամեծ բնձան ալ անմահից համար ոչինչ է: Ա՛հ, սրչափ երջանիկ կ'ըլլայի, Թէ որ ես ալ միշտ անտառներուդ մէջ զբօսնուլ կարենայի, եւ քու արուեստովդ ասջեւս ելած որսը գետինը փռէի: Երանի՛ Թէ երբէք նետս չսխալէր: Ա՛հ, գոնէ գեղեցիկ սկսած օրերս դրժբախտութեան չփոխուէին եւ հօրս անուանեալ անէծքները եթէ վնասակար ալ են նէ, ոչինչ դառնային: Տիրան, աս բաճններս անշուշտ Անահիտ արդեամբ կը կատարէ: Կ'երթան ուրեմն գոնէ աս երկրորդ անգամուն, որսի կ'ելլես ինծի հետ:

Տիրան այնչափ ստիպմունքներէն ետեւ՝ չէր կրնար պրծիլ եւ Արտաւազդին հրաւերը չընդունիլ, բայց աս վերջին փորձն ալ փորձեց, չէ Թէ միայն ինք վասնզէն փախչելու, հասցա գլխաւորաբար զԱրտաւազդ ազատելու համար, վասն զի իր երկիւղն անոր վրայ էր: Առստի Արտաւազդայ հրաւերին պայպէս պատասխանեց. Գիքն որսակից ունեցողին հետ որսալը՝ մեծ պատիւ է, եւ ըստ ինքեան որսն ալ գրեթէ միշտ անվտանգ. բայց աս պարագայից մէջ մեծ վախ կայ: Գիտեմ որ քաջ ես, Արտաւազդ, բայց վրէժը քաջուԹեան չինայիր. գուցէ նոյն իսկ Մահն ըլլայ որ զքեզ աս որսորդութեան վերջին փորձին գրգռէ: Չեմ գիտեր, կարծես Թէ աստուած մ'ի ներքուստ զիս կը դրդէ, որ յորդորեմ զքեզ Թէ կերպով մը վրայէդ հօրդ անէծքը նետես, զքեզ բոլոր աստուածներուն

հետ հաշտ ընես: Ո՛հ, սիրելի Արտաւազդ, հանդարտ
բլլալդ կ'ուզեմ, կենացդ ազատութեան գիւտ մը կը
փնտռեմ. եղբայր, եթէ ցանկալի բարեկամ է քեզի
Տիրան, մտիկ բռէ անոր խօսքերը, [թէ որ վտանգ չկայ
նէ՝ ստուեր ալ չմնայ: Անսար դեռ չհասած՝ անկէ
զգուշանալու է: Փոքր ու ողորմելի առու մը՝ մեզմ ու
խաղաղիկ վազած ատեն՝ քար կամ ծիւղ մ'ալ անոր
ընթացքը կրնայ արգելել. բայց ուռած ու բարձրացած
ժամանակ՝ մեծամեծ թմբեր ալ անոր յորդ ընթացքին
չեն կրնար դիմանալ, եւ սաստիկութեամբ առուն զա-
նոնք ալ առնելով, [թէ ինք [թէ առած տարածն՝ ըն-
դարձակ ծովուն մէջ կը կորսուին: Ուստի հիմայ [թէ
որ արի Արտաւազդը կորսուի, ան անձին դեթ ստուերն
սվ ունի: Թագաւոր՝ Տիրան ալ կրնայ բլլալ, բայց Ար-
տաւազդայ սիրան ու միտքը կրնայ ունենալ:

Օրծաղեցաւ Արտաւազդ եւ գոռոզութեամբ ձայ-
նը բարձրացուց. Տիրան, քեզի բան մը զրուցեմ, ըսաւ,
ամենեւին բանէ մը չեմ վախնար. երկինք ալ վրաս կոր-
ծանելու բլլայ՝ տեսած Արտաւազդդ միշտ նոյն պիտի
մնայ: Ահա հազնին պէս՝ ուրիշին հոգին չէ նէ, գոնէ իմ
անձս Մահուան ձեռքէն կ'ազատեմ: Տիրան, կ'երեւայ
որ դուն երկշտ աղայ ես: Առաջին անգամ նաւարկու-
թիւն ընողը՝ երկրին փախչելուն ու երթալուն կ'ապշի,
քաղցր սիւքը՝ փոթորիկ կը կարծէ, եւ ամէն տեսակ
փոքր շարժումը՝ զինքն ահ՝ ու դողի մէջ կը խոթէ. բայց
փորձառու բլլալէն ետեւ՝ ծովուն մեմնայն ալ աչքին
բան չ'երեւար, եւ նոյն ատեն նաւուն խելքին վրայ
հանգիստ կը քնանայ կամ արթուն կեցած՝ երգելով
կը զուարճանայ: Հիմայ, Տիրան, քու մտացդ խռովու-
թիւնն իմ վրաս ալ մի ձգեր, [թէ որ կ'ուզես նէ՝ ինձի
հետ եկուր, չես ուզեր նէ՝ հոս կեցիր կամ ընկերներովդ
դուն դարձիր. ըսելէն ետեւ՝ ձին մշտեց եւ որսի ըն-
դարձակ ասպարէզն ելաւ:

Ժ.

ԱՐՏԱՒԱՋԻ՝ սրաթեւ արծուի պէս եղբորմէն չբաժնուած՝ Գնա, ըսաւ իրեն Տիրան, որովհետեւ կ'ուզես, գնա որսդ ըրէ, ես ալ քիչ մը ետքը ետեւէդ կու գամ. . . : Բայց անիկա երթալուն պէս՝ Տիրան սկսաւ լալ, ընկերներուն իր ցաւն յայտնեց, եւ ինք զինքն ալ յանդիմանեց. Սիրելի ընկերներ, ըսաւ, կարծեմ թէ այսօր գլուխնիս գալիք կայ եւ. . . : Բայց ես ինչո՞ւ անհոգ կը կենամ, ինչո՞ւ Արտաւազդին հետ չեմ ընկերանար: Ելէք, պատրաստուեցէք, երթանք՝ ըսելու շինաց. ինք նախ ընկերներէն յառաջ սլացաւ, ձին ալ իրեն հետ: Արտաւազդին հասնելու հազիւ թէ քոսն երեսուն քայլ կար. ինչ տեսնէ, Արտաւազդ տեղ մը կ'իյնայ: Ո՛հ. . . ընկերներ, պոռաց, վազենք. . . կրնամ արդեօք անոր օգնութիւն մ'ընել. . . : Ըսաւ եւ Արտաւազդայ ինկած փոսը հասնելով՝ շփոթեցաւ մնաց. ինքիւրեն կը խօսէր, Արտաւազդին կը հարցըներ եւ անոր սղջերուն կ'ապշէր: Ո՛հ, ո՛հ Արտաւազդ, կ'ըսէր, ինչպէս եղաւ. . . կարծես թէ իղձ մըն էի. սիրտս կը վկայէր. . . : Արտաւազդ, կը ընէս. ո՛հ, ինչ զարհուրելի տրտունջներ են ըրածներդ. . . ձայնդ կտրեցաւ.

արդեօք դեռ կենդանի ես . . . : Եւ ընկերները հասնելէն ետեւ՝ Եկէք, ընկերք, կանչեց, եկէք . գուցէ ողորմելոյն օգնութիւն մը կրնանք ընել : Տեսա՞ք, լսեցի՞ք . . . ինչպէս քիչ մ'առաջ երբ որ՝ Գնա, Արտաւազդ, . . . որովհետեւ կ'ուզես . . . ըսի, Արտաւազդ որս ընելու համար անտառախիտ լեռները, բլրոց գագաթները թափանցեց անցաւ . աղեղը լարեց, հնչող ու հեծող նետեր արձրկեց, եւ ընտանի ու վայրենի երէնէր դրդուել ուզեց : Ամենաբարձր լեռանց գլուխները դողդոջացին, ծառախիտ անտառները հնչեցին, եւ գազաններուն սաստիկ ոռնալէն՝ երկիրն ու օդը կը սարսուէր : Արտաւազդ առիւծափրա ըլլալով՝ ասդին անդին կը վազէր եւ կենդանեաց ձեռն ոչնչացրնել կ'ուզէր . բայց ս'հ, մէկէն ի մէկ աս խորին անդունդը կործանեցաւ : Ա՛խ, պոռայ, հօրս անէծքներն եկան՝ գլուխս թափեցան . եւ վայրի գազան դարձաւ, լեղուն փոխեց, սաստիկ գոչեց, սպառնաց, խորքը թնդացուց ու որոտում պատճառեց : Բայց պարանկ . աստուածներէն մէկը զինքը շղթաներով կապեց, ինչպէս հոս կը տեսնէք :

Երբ որ Տիրան՝ Արտաւազդին վրայ վազող վշտայ աղբիւրներն իր ընկերներուն կը մեկնէր կամ նոյն աղետից սկիզբն ու պատճառը կը պատմէր, մէկէն Արտաւազդ իբրեւ խորունկ քնէ մ'արթնցած՝ անձին աղէտալի վիճակը նշմարեց, եւ այնուհետեւ իր մշտնջենաւոր տրտունջն ու սպառնալիքն սկսաւ : Ա՛հ, ս'հ, անազորոյն բախտ, ըսաւ, այնպէս պիտի փոխուիս եղեր . ինչպէս յանդգնեցար այսպիսի կերպարանք մը տալ ինձի : Չկայ բան՝ ուստի սոսկում մը չզգամ, ստուերը՝ չարութեանս վկայ կ'երեւայ, հնչիւնն ամբաստանութիւն կ'ընէ, եւ ուրիշ ինչ եւ իցէ շարժում՝ կարծես թէ վճիռս կուտայ : Արտաւազդ, ուստի քու վրադ այնչափ անարգութիւն եւ երկչոտութիւն : Ա՛հ, զարհուրած ապշած եմ, ինք զինքս կորսնցուցած եմ : Ի՛նչ կատաղութիւն էր, ս'ր վրէժխնդրութիւնը մղեց զիս հոստեղս . արդեօք

ազատութեան յոյս մը կայ: Տիրան, սուր ես, բնկեր-
ներ, օգնեցէք ինձի: Եւ աչքը դէպ ի վեր ուղղելով ու
ծանօթ դէմքեր տեսնելով՝ ըսաւ. Ո՛հ, սիրելէք, վեր
էք եղեր. յոյս մ'առի. բայց չէ, յոյսս՝ պարզ ու անամպ
երկինքի եւ յստակ արեւու լոյս չէ, փայլատակման լոյս
կամ շողիւն մըն է, որն որ արեւելք ու արեւմուտք
կամ աշխարհքիս մէկ ծայրը յանկարծակի կը շողայ,
եւ դարձեալ աներեւոյթ կ'ըլլայ, վիճակս չարիքներովս
մէկտեղ կը ցուցնէ, եւ չէ թէ զանոնք կը նուազցնէ:
Այն ինձի, անգութ հօրս անիրաւ անէճքովն սրչափ
աղէտից մէջ ինկայ. ցաւերը բոլոր մարմինս կը պա-
տեն. ո՛հ, կարելի ըլլար քիչ մը անդամներս հանդէն.
սուր էք, բնկերներ, կրնամք օգնել ինձի. աւտօիկ ահա-
դին անդունդ մը կործանեցայ, ուսկից ելլելն անհնա-
րին կ'երեւայ: Երանի՛ր թէ մահը զար վրաս, չարեաց
բժիշկն ու առողջացուցիչը: Ո՛հ, աս ինչ չարատենչ
ուխտ է հօրս անէճքը: Բերանս ուրիշ բան մնաց, կր-
նամ դեռ խօսիլ. ինչպէս կրնամ աս անաղորոյն անձ-
կութենէ ազատիլ. վա՛հ ողորմելոյս. սուր կրնամ փախ-
չիլ ու այնչափ բնդղայից ձեռքէն պրծիլ: Ո՛ւր որ փախ-
չեմ նէ, միշտ անդունդը զիս պաշարած է. ինչ կ'ըսեմ,
նոյն իսկ դժոխքն էս եմ ինձի. այնպէս խորունկ ան-
դունդ մը գանուելով՝ բիւրապատիկ աւելի մեծ վե՛հ մը,
գործոցս արժանի տեղ մը կ'երեւակայեմ. աս տեղը
միշտ աչքիս առջեւն ելլելով՝ կը սպառնայ ինձի. թէ
որ ան վի՛հը՝ հիմակ գանուած անդրնդիս հետ համե-
մատելու ըլլամ, ստուգիւ ասիկա ինձի դրախտ կ'երե-
ւայ, անիկա՝ անդնդախոր Ովկիանոս կը տեսնուի:

Ո՛հ, ո՛հ, դժբախտ եմ. սառած հոսանք մը վրաս
կը կործանի, բախտիս դէմքը սաստիկ տխուր է: Բոլոր
աստուածները զիս կը հալածեն: Ա՛րտաւազդ, այսու-
հետեւ կրնաս արդեօք մէկուն առջեւն ելլել. չէ, չէ,
դուն ալ պէտք չես ուզել: Եթէ ասիէ ելլելու ըլլամ,
ամէն մարդ զիս մատով պիտի ցուցնէ. ինձի նախա-

տինք, եղբօրս անարգանք պիտ'որ ըլլամ. սրչափ խօս-
քեր, սրչափ վէպեր վրաս պիտի լսեմ: Ե՛րասխ, ողոր-
մելի Հայաստան, աւասիկ քու Պրոմէթէոսդ. կաւկա-
սու վրայ պատահած երեւելի դէպքերը, դուն՝ հայրե-
նի աշխարհք, Մասիսին քովերը պիտի տեսնես . . . :
Բայց կարելի ըլլար որ պատիժս գիանայի կամ թէ ա-
նոր վերջը մէկէ մը լսէի: Դի՛ք, դուն Ա՛նահիտ, չէ՞ս ու-
ղեր օգնել. գոնէ ըսէ ինձի ո՛ւր կը գտնուիմ: . . . Ո՛հ,
լոյսը կ'ատեմ, քաղցրաշունչ օդը զիս կը վախցընէ,
գողգոջուն ստքիս տակէն կարծես թէ երկիրը կը փախ-
չի. կ'երեւայ թէ հազարումէկ կրակներ ու բիւրաւոր
բոցեր չորս կողմս պատած ըլլան. մուխ մ'ալ վեր ել-
լելով՝ օրը կը պղտորէ: Երկիւղս՝ կասկածները կը մեծ-
ցընէ, կասկածներն՝ երկիւղը կ'աւելցընեն. աս դէպ-
քերէն ազատութեանս հնարքն ալ կը կորսընցընեմ:
Թէ որ բիւր ու բիւր տարիներու շրջաններ դառնան,
միշտ փրկութեանս վերջը պիտի չգայ. ի՛նչ. պէտք է
որ ազատիմ եւ օր մը անմահ թշնամեացս ալ բարե-
կամ ըլլամ:

Նշնպէս Տիրան ալ կ'ողբար. Ո՛հ, արդար աս-
տուածներ, Արտաւազդ, Ը՛նկերներ, ի՛նչ ընենք. խոր-
հուրդ տուէք. զԱրտաւազդ աս գբէն հանելու ինձի
հնարք մը ցուցուցէք: Ը՛նկերներ, ես կը կարծէի որ Ար-
տաւազդ անդունդն իյնալէն ետեւ՝ հողին փչած եւ
այսպէսով շատ ցաւերէն ալ ազատած ըլլայ, բայց քիչ
մը ետքը նորէն կենդանական ոգին վրան եկաւ եւ շունչ
առաւ: Արդեօք աս կենդանութիւնն իրեն ո՞վ պար-
գեւեց. վշտաց՝ չէ նէ ուրախութեան համար մէկն իրեն
կեանք շնորհեց: Զինքը փոսէն հանելու ջանքն, աս-
տուած մը՝ չէ նէ ես պիտ'որ ընեմ: Բայց թէ որ ուրիշը
չ'օգներ նէ, ես ի՛նչ ընեմ: Չէ, չէ, անկարելի է, ես
Արտաւազդին չարեացը խաղաղ ու անհոգ հանդիսա-
տես չեմ կրնար ըլլալ: Եղբօրս վրայ ունեցած սէրս՝
զինքն ազատելու համար, չէ թէ կամացս միայն, այլ

բոլոր սարսուղ անդամներուս ալ զօրութիւն կրնայ տալ: Եթէ ինք զիս արքունիք պահեց ու չաքտորեց նէ՛ ես զինքը տնէն հեռու եւ անդունդ մը կրնամ թողուլ: Նոյն իսկ մեծանձն կենդանի մ'ալ, երբ որ իր ազատիչը պաշտպանել կամ վտանդէ մը հանել հարկ կ'ըլլայ, դժուարութեան ու վախին չինայիր: Պզտիկ թռչուն մը՝ երբ որ իր բոյնին գողը պնտելու ըլլայ, իր յանդգնութեան ու համարձակութեան վրայ մարդը կը զարմանայ. թէ որ կտցովն ու ճիրաններովը ձագերը չկարենայ պաշտպանել, գոնէ զգարանակալը՝ տրտունջներովը ձանձրացրնել կ'ուզէ: Արտաւազդ, դուն հոգ մ'ըներ, ես գքեզ պէտք է որ ազատեմ. բայց չկրնամ նէ՛ մշտատեւ ողբերուս ու պաղատանացս համար անտարակոյս ազատ կ'ընեն գքեզ դէք:

Բայց թէ որ եղբայրս ազատեմ ըսելով, շարունակեց Տիրան, ես ալ կորսուելու ըլլամ, ես ալ անոր ընկերանամ նէ...: Առանց իրեն՝ ես կեանքն ինչ պիտ'որ ընեմ. ուրախութիւն՝ երբ կրնամ գտնել: Ստոյգ է որ հազարաւոր յանցանք գործեց, եղբարցը յորդորն արհամարհեց, բայց ես զինքն ինչու թողում: Թէպէտ եւ անոր յանցանքները զիս անհանդիստ կ'ընեն, խաղաղութիւնս ալ կը յափշտակեն, բայց իրեն օգնելու սէրս՝ երբէք չեն կրնար ինձմէ վերցընել: Աստուածք, ինչո՞ւ Արտաւազդին եղբայրը գտնուեցայ: Յանցաւորի մը՝ իրեն ընկերն օգնութիւն չ'ըներ նէ, օտարն ինչպէս ընէ: Ո՛հ, ընկերներ օգնութիւնը չուշացրնենք. Արտաւազդայ աղէտքը մեծ է, անոր ինկած տեղը զարհուրելի է. թէպէտ եւ չեմ գիտեր, բայց անոր ըրած յաւիտենական տրտունջներուն մէջ... կրակներ ու բոցեր ալ կային, գուցէ Մասիան իրեն մօտ ըլլալով՝ այրէ տոչորէ զինքը, եւ կամաց կամաց մոխիր դարձրնէ. ան հռչակաւոր հրաբուխը, որն որ իր խորին ծոցը ջերմ ըլլալով՝ նոյն տաքութիւնը միջնաշխարհիս շատ տեղերուն ալ կը հաղորդէ: Բուն իր աւազանին մէջ հրա-

ցեալ ձիւթէ պտոյաներ կը պահէ, զորոնք երբեմն երբեմն դից բարկութիւնն եռացընելով՝ նոյն հսկայ լեռն ահագին սանդարամեա մը կը դարձընեն: Ընկերներ, թէպէտ եւ արդէն կը տեսնէք որ Մասիսին արտաքին տեսքն իր բարձր ու սեպացեալ կատարն եւ ցից կողերն են միայն, եւ տարին իրեն շրջանն բրած ստեն՝ նոյն երկնաբերձ սիւնը միշտ ձիւներով պատած կ'երեւայ, բայց իր ներքին կողմերը՝ կարծածնուդ պէս քարով ու հողով լեցուն եւ խտացած չեն, այլ համբարանոց մը շինած՝ անթիւ անհամար ու բորբոքելու մօտ շանթերով կ'եռան: Աս խորունկ շտեմարանէն՝ անմերձենալի կրակէ մաքուր հեղեղներ երկինք կը ժայթքէն, ասոնցմով մէկտեղ մուխ մ'ալ, ցորեկուան ստեն՝ հրեղէն շատրուանի մը պէս դալարածեւ ցորանալով՝ վեր ու բարձր կ'ելլէ, իսկ դիշերուան ժամանակ՝ բոյէ սեան մը պէս վարէն վեր կը փայլի: Շանթերը ժայթքելով՝ օդը կը վառեն, նոյն ջինջ հեղուկը շառագմամբ կը թնդացընեն. մէջի քարերն ու նիւթերը կտր առդին անդին դառնալով, սաստիկ դոշմամբ ու շաշմամբ վեր կը նետուին, եւ հեազհետէ նորէն բռնութեամբ վար իջնալով՝ ամէն կողմ կը տարածուին ու աւեր կը պատճառեն: Աաղ Գարբինն ալ կրկին ու կրկին մուրձը զարնելով՝ ահագին դղրդմամբ սկիզբէն լուսոյ վարչին դէմ ծծմբոյ ու կպրի հրաշէկ անձրեւներ կ'արձրկէ եւ վերջապէս հրաբխային զեռունն ամէն բան կ'այրէ կը տոշորէ: Ո՛հ, ինչ սարսափելի գազանի մօտ ինկաւ Արտաւազդ, ուսկից ազատելու համար մղոններ հեռու պէտք է երթալ: Հիմայ զԱրտաւազդ ինչպէս ազատենք, ան անդամանդեայ շղթաներէն զինքն ինչպէս քակենք: Ըսաւ:

Արտաւազդ անդրեղէն սպառնալ սկսաւ. եւ իր ամէն մէկ խօսքովը Տիրանին սիրան ալ կը պատուէր: Տիրան, Տիրան, ըսաւ, իմ վրաս լալդ պարապ է. թող զիս, թող. մի վախնար, դեռ ազատութեանս ժամա-

նակն եկած չէ: Եթէ Արտաւազդ ասկէ չելլելու ըլլայ, Արտաւազդ անունը վրան ինչո՞ւ կը կրէ: Թող զիս վշտացս մէջ: Ո՛հ, աղէտալի վիճակ մըն է վիճակդ, Արտաւազդ: Տիրան. ո՞ւր եմ, ի՞նչ օդ կը շնչեմ. Հայաստանն ալ այնպիսի աղէտից տեղ է եղեր: Արդեօք Յունաստան գացի, չէ նէ անոր երեւելի եզերքներէն ընդդաները վրաս եկան: Ո՞ր դժբախտին անցքն ինկաւ վրաս: Արդեօք վատանշան Սիսիւփոսին՝ սանդաւրամետ կրած աշխատանքը, թէ քաջ Փիղակտեաին, Վահագնի նետերուն ստացչին, Լեմնոս քաշած ցաւերը. արդեօք ան ջանքը կամ վշտերը մեծ ու սաստիկ էին, թէ իմ կրածներս: Ո՛հ, քանի մը բոպէ յառաջ՝ ուրախ, զուարթ էի, թագաւոր ու պսակով զարդարուած էի, հիմայ շղթաներով կապուած, գերիի պէս պէտք է որ հոս կենամ, բոլորովին մոռցուած ապրիմ: Ո՛հ, կէս գիշերուան ու խիստ ձմերուան մէջ կը սահի կ'երթայ նաւ ալեկոծեալ ծովուն մէջէն. նաւուս ղէկն ալ տիրոջս, մանաւանդ թէ թշնամեացս ձեռքն է: Թող տիրէ վրաս բախտը, ասդին անդին դարձրնէ, ուղածն ընէ, վերցընէ զիս, գետինը զարնէ, ալ ես վախնալէն ձանձրացած եմ: Ատիկա ինչ բան է: Թէ որ կեանքն այնչափ վիշտ եւ նեղութիւն ունի, ինչ օգուտ է ինձի սպրելը: Լիյսս, գնա, պակսէ, հեռացիր ինձմէ. կեանքը դադրի նէ՝ աղէտքն ալ կը դադրի: Այսպիսի կենաց ձանձրալի ընթացքը մէկու մը ամենեւին ցանկալի չիկրնար ըլլալ: Թշնամի՛ բախտ, դուն խաղաղութիւնս ու հանգիստս, մեծամեծ յոյսերս ոչինչ ըրիր, դուն հոս բերիր զիս, ասոր մէջ ձգեցիր: Ստուգիւ մահուան արժանի եմ եղեր, սխալմունքներս թողութեան տեղի չունին. ուրեմն մեռնիմ, շուտ աներեւոյթ ըլլամ: Բաւական է, այոչափ խաղցուց զիս բախտն, անոր առջեւ ծաղը կատակ եղայ. աստեղաց ատելի, երկինքին գարշելի եմ, նոյն իսկ գտնուած տեղս անարգելով զիս կը շարշարէ: Ասով լմնցա՞ւ, չէ. ես ինձի

ծանր բեռ եմ, բրածս չեմ դիտեր, խօսածս չեմ հասկրնար. առանց աչքի կը տեսնեմ. լեզու չունիմ՝ բայց կը գոչեմ. կորսուիլ կը բաղձամ ու ոչինչ ըլլալ՝ եւ օգնութիւն ալ կը խնդրեմ. զիս կ'ատեմ՝ եւ կը սիրեմ. ցաւով կը մաշիմ, լալով կը ծիծաղիմ. Թէ մահը Թէ կեանքն ասելի է ինձի: . . .

Տիրան՝ զԱրտաւազդ ազատելու համար՝ աստուած մ'ըլլալու էր, մանաւանդ Թէ նախ բարբ դից ժողովը համոզեցնելու էր. բայց ասոնց ոչ մէկին եւ ոչ մէկալին կարող ըլլալով՝ լքաւ եւ աւելի եւս աղաչելու տեղ՝ ինքն ալ մեծամիտ Արտաւազդին պէս քիչ մը յանդրդնութեան սկսաւ, բայց շուտ խելքը գլուխն եկաւ: Ուստի նախ՝ Ո՛հ, ընկերներ, ալ չեմ կրնար դիմանալ, բռաւ: Արտաւազդայ ցաւերուն սաստկութիւնն իմ վիճակս ալ անոր վիճակին հաւասար բռաւ: Ե՛րկինք, ասկէ ուրիշ բաներ ունի՞ս գլուխս բերելու: Զիս ինչո՞ւ կը Թողուս. դեռ արեւն ելլէ պիտ'որ ինձի համար: Քեզի կ'ըսեմ, ո՞ր բախտ. հայրս առիբ, մայրս չԹողուցիր, մերձաւորներէս շատերն աշխարհքէս վերցուցիր, Արտաւազդ միայն մնացած էր ինձի ընկեր, ան ալ կ'առնես նէ, ինձի ի՞նչ Թողուցիր. ոչինչ: Զէ, չ'ըլար. զԱրտաւազդ շղթաներէն քակելու եմ. հիմայ չէ՛ նէ՛ անտարակոյս ժամանակ մը պիտի դայ որ զինքը փրկեմ: Խրստութեանդ չափ չկայ, բախտ, բայց ես անոր կը յաղթեմ. քաջ նաւապարի մը պէս, մրրիկներուն ու խռովութեանց մէջէն նաւարկելով եւ ուղիղ ճամբան բռնելով՝ հասնելու նպատակս չեմ կորսնցրներ: Արտաւազդ, Արտաւազդ, իմ վշտերէս՝ քու ցաւերդ ալ կրնամ չափել: Բայց ի՞նչ ընես պիտ'որ, կրելու է: Պատիժ քաշողը՝ միայն դուն չես, ես ալ կը կրեմ, բայց կայ մէջերնիս տարբերութիւն: Թէ որ ես դժբախտ ծնայ եւ քեզի համար ալ յոյս մը չկայ՝ նէ՛ Թող մեզի օգնէ համբերութիւնը, ընկեր ըլլայ հաստատութիւնը, ինչպէս որ ցաւերն ալ մեզի ընկեր եղան, եւ երբեք

պիտի չբաժնուին՝ թէ որ վիճակնիս ալ չփոխուի նէ : Ո՛ր զժբախտութիւն, ո՛վ ցաւեր, մինչեւ երբ զմեզ պիտի չարչարէք բսելէն ետեւ, յանկարծակի Տիրանին առջեւ երկինքէն հրացայտ շանթ մ'իջաւ : Աւյ . . . ինծի, պուսաց անիկա, կորսուեցայ . աս ինչ շանթ է . օգնութիւն, բ՛նկերներ, վաղեցէք . քովս շանթ մ'ինկաւ, Արտաւազդ ինծի ալ բարկացաւ . քիչ մնաց զիս կիսամահ գետինը կը փռէր . կայծակն առջեւս իյնալէն ետեւ՝ Արտաւազդին զնաց, զինքն ալ չմեռցուց, բայց տժգոյն դիակ մը դարձուց : Ո՛հ, ի՛նչ բսեմ, որ կողմը միտեմ . աստուածոց դէմ խօսիլը՝ մեծ յանցանք է . . . :

Տիրան զարհուրած բլբլով՝ երկայն ատեն անձայն անշարժ կեցաւ . Արտաւազդ ալ թէպէտ եւ կիսամեռ, բայց դռչելով Տիրանին պոպէս բսաւ . Տիրան, եղբայր, զնա, ա՛լ բաւական է . գոնէ քու կեանքդ ապահովցուր . . . : Ո՛հ, սիրելի բնկեր, ուրախութեանցս ու ցաւոցս հաղորդակից եղբայր . ա՛լ պէտք է որ բաժնուինք . անդութ, անագորոյն աստուածները կը ստիպեն : Աւասիկ աս վերջին վայրկեանը հասանք, ա՛լ ճար չկայ . . . : Գնա, դարձիր արքունական քաղաքը, մուտ մեր տունն ու պատմէ . . . բայց . . . : Ո՛հ, ողորմելի ես, զժբախտ ես հայրենիք . արդեօք պատրաստ ես, կրնան աս դժնդակ հարուածը լսել . . . : Ա՛հ, եղբայր, դուն պատմէ ամենուն պատմութիւնս, դիր առջեւնին աղէտալի վիճակս . բայց դառնութիւնն ալ ամփէ, անուշուր, քեզի կը յանձնեմ, սիրելի . բսէ որ անագորոյն աստուածները՝ հօրս անդութ եւ բնդունայն խօսքերուն անսարով՝ ինծմէ վրէժ առին, զիս անդունդ մ'ին . . . բայց դիտան որ Արտաւազդ վատ չէ . բսէ անոնց թէ Արտաւազդ երկինքէն ալ չիվախնար . Արտաւազդին կամբք . . . :

Ա՛լ աւելի յառաջ չկրցաւ երթալ, կարծես թէ մէկը բռնի բերանը կը դոցէր : Ան ատեն Տիրան (անշուշտ աստուած մ'իրեն բերանն աս խօսքերը դրած բլբլով) զինքն ազատեց, Արտաւազդն ալ իր անվերջ

աղէտից մէջ [Թողուց: Յանդուզն, անմիտ, ըստ անոր,
ասկէ ետքն ալ կրնան համարձակիլ այսպէս խօսելու,
ինչ մեծամտութիւն է քուկինդ. բայց ինչ մեծ խա-
բէութիւն ու մոլորութիւն է իմն ալ: Արտաւազդ, այն-
չափ հազարաւոր յանցանք ունենալէդ, եւ Արամազդայ
որոտացող շանթն ալ քովդ շոռաշէլով՝ յանցանքներդ
երեսդ զարնելէն ետեւ, ինչպէս կը յանդգնիս այն-
պէս խօսելու: Ո՛հ, ես մեծապէս սխալեր եմ. մինչեւ
հիմայ չարարարի վրայ լացի, նենդաւորի ընկեր եղայ,
սոսուածոց կամքին դէմ զքեզ ազատել ջանացի.
Բայց երկնից հրամանին ո՞վ կրնայ դէմ դնել: Յազ-
թութիւն մը չարագործներուն միտքն ու գլուխն երբ
պսակեց. վերջապէս գլուխնին դալիքը կու գայ, աղէկն ու
իրաւը յայտնի կ'ըլլայ: Երթանք, ընկերներ, երթանք.
Թողունք սա չարակամն իր չարիքներուն մէջ, [Թողունք,
վասն զի արդէն մեռած է, մանաւանդ [Թէ ցաւերու
մէջ յախտեանս կենդանի մնալով՝ պիտի չարչարուի:
Արտաւազդ, Արտաւազդ, մի վախնար, քու կամքդ
ալ կը կատարեմ, տուն կ'երթամ նէ՝ քեզի համար կը
պատմեմ [Թէ Արտաւազդ իր պատիժն առաւ. կ'ըսեմ
[Թէ ան չարագործն իր մթին բանտին մէջ միշտ պիտի
ողբայ եւ իր արտասուաց ծովուն մէջ երբէք պիտի
չնդդուի, ինչպէս որ սա անդրնդէն դուրս եղած ատենն
ալ չարեաց մէջ ընկղմելէն չէր զարհուրեր, ուստի եւ
ուզածը պիտի շարունակէ: Ասդին անդին կ'երթայ
մարդն ու կը խոտորի, սեւ ու մութ ծովուն մէջ կար-
ծիքովն ու դործքով կ'ընկղմի, կարծելով [Թէ չիվա-
սիր, երբ որ անմեղութիւնն՝ Երկինքէն ծագած լուսա-
ւոր աստղն՝ իրեն ճամբան չիլուսաւորեր:

